I 73,
II 211,
III 280,
IV 2,
V 212,

252
265

40
186

291
ONS

ՓԱՌՔԻ
ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

45498



318

«Երգիչները . . . սենեակներուն էին լինում ազատ»
Ա. Մնաց. IX. 33։

«Վէր կա՛յ ու արի՛ կէ . . . երգելու ժամանակը հասել է»
Երգ. II. 10 – 12։

1934
Ազգապատկանի Հայոց Թեմական Տպարան
ԹՈՒՐԻՉ

باجازه اداره معارف ایالت شرقی آذربایجان درتحت نمره ۲٦۸ ثبت شد



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սոյն երգարանը, ,,ՓԱՌԲԻ և ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ՚՚ խորագրով, նպատակ ունի ծառայել՝ փոխրիկ հոսի վաղուց զգացուած զանազան պէտքերին։ Երգերը, թէև առանձին դպրաւորութիւնների ներքոյ չեն, ընդգրկում են երեք գլխաւոր տեսակներ, այն են. — Երկրպագութեան երգեր, Աղօթամաղթի և Ընթերցանութեան երգեր, և Աւետարանչութեան երգեր։ Մենք առաջնորդուել ենք այն զգացումով որ երգերը պիտի լինեն բոլորովին համապատասխան իրենց մանաւանդ նպատակներին և համաձայն Սուրբ Գրոց սկզբունքներին, և իրենց բովանդակութեամբ էլ, հնարաւոր եղած չափով, արձագանգ տան նրա մէջ գտնուած Աստուածային ճշմարտութիւններին և մտքերին։ Այդ պատճառով էլ հարկադրուած ենք եղել ծանօթ երգերից շատերը, որոնք սիրելի տեղ ունեն շատ երկիւղած սրտերում, փոփոխել ու սրբագրել, և այդ փոփոխութիւնները եղել են յատկապէս երգերի մէջ եղած մտքերի դասաւորումը շտկելու և օտար Տնտեսութիւնների վերաբերող ներմուծուած անտեղի և խառնաշփոթութիւն պատճառող

մաքերը բիւրեղացնելու։

Միաժամանակ մենք աչքի առաջ ենք ունեցել այն հանգամանքն որ հաւատացեալների գործածութեան երգերը պէտք է հարազատ արտայայտութիւնն և թարգմանը լինեն նրանց ճշմարիտ խանդք ու զգացումներին, իսկ ինչ վերաբերում է աւետարանչական երգերին՝ նրանք պէտք է լինեն սիրայորդոր, և ձայն տան զղջացեալ մեղաւորի հոգեկան կարիքներին և նրա ներքին տրամադրութիւններին և ձգտումներին։

Նկատելով այն հանգամանքն որ, մարդի պատմութեան հետ, բանաստեղծութիւնը կիրարկուել է Աստուծոյ Հոգու ձեռքով իբրև արգուզարդ՝ Աստուածային գովեստներն և Նրա սիրոյ մտքերը թանձրացած կերպով ներկայացնելու համար, և յաճախ էլ սուրբ յուզումներ յառաջացնելու սրտերի մէջ, մեր ձգտումն եղել է որ երգերն ունենան, գոնէ մի փոքր չափով, համ ու ճաշակն այդ արուեստի, առանց տալու նրանց սէնտիմէնտալ թռիչքները սովորական բանաստեղծի, որոնցով նա սովոր է շպարել իր գրուածքները։

Մեր սրտի խոնարհ աղերս ու փափագն է Աստուծոյ առաջին որ բոլոր նրանք—որոնց ձեռքերի մէջ անցնելու լինի այս հատորը—մէկ ու ամէնն, իբրև կենդանի բառեր, կիրարկուեն Սուրբ Հոգւոյն ձեռքով, այն մեծահատոր քերթուածքի մէջ որ այս ժամանակում յօրինւում է մեր Փրկիչ Աստուծոյ և Բրիստոս Յիսուսի ամենապատուական նկարագիր —երևոյթները և նրա փառքերը գովելու՝ երկնից յաւիտենական դարերի մէջ. ինչպէս որ ակնարկուած է Եփ. Բ. 10-ում, «Վասնզի մենք Նրա ՔԵՐԹՈՒԱԾՆ ենք, Բրիստոս Յիսուսում ստեղծուած լինելով բարի գործերի համար, որ Աստուած առաջուց պատրաստեց որ մենք նրանցում քայլենք»։ Բուռ. թարգմ. Այդ հաւատքով է, որ մենք այս հատորը 'ի լոյս ենք ընծայում։

«Տէր, Քո բոլոր գործերը պիտի գոհանան Քեզանից, եւ Քո սուրբերը պիտի օրհնեն Քեզ: Քո թագաւորութեան փառքը պիտի խօսեն, եւ Քո զօրութիւնները պիտի պատմեն, որ իմացնեն մարդկանց որդիներին Նրա զօրութիւնները, եւ նրա թագաւորութեան փառաւոր մեծութիւնը: Քո թագաւորութիւնն ամենայաւէտ թագաւորութիւն է, եւ Քո իշխանութիւնը՝ միեւ ազգից մինչեւ ազգ»։ Սաղմ. ճեռ. 10—13։

Կ. Ա. Մ.

ՓԱՌՓԻ
ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԳ 1.

1.

Եկէ՛ք, երգենք մենք միաբան,
Աստուած սէր է.
Երկինք, երկիր, թող գովեստ տան,
Աստուած սէր է.
Մեղքից ազատ թող ամեն անձ,
Փըրկչին համար երգէ սըրտանց,
Մեզ հետ այս երգն ամենասքանչ,
Աստուած սէր է.

2.

Օ՜հ, պատմեցէ՛ք երկրի ծայրերն,
Աստուած սէր է.
Մեզ կեանք և՛ լոյս տուած է Տէրն,
Աստուած սէր է.
Մեզ իր արեամբ լըւացել է,
Իր Սուրբ Հոգւով նա օծել է,
Արդ, ցընծում մեր միշտ երգել է,
Աստուած սէր է։

3.

Ի՜նչ օրհնեալ է աստ բաժին մեր,
Աստուած սէր է.
Իր խոստումնքներն են քաջալեր,
Աստուած սէր է.

Նա մեր արև և՛ վահան է,
Մեր յոյս, նեցուկ և՛ պաշտպան է,
Իր ձեռքովը մեզ կը տանէ.
Աստուած սէր է։

4.

Վերը կ՚երգենք մենք յաւիտեան,
Աստուած սէր է.
Այս մեր անվերջ երգն օրհնութեան,
Աստուած սէր է.
Եւ դարերում այն անվախճան,
Երկնից դասին հետ համաձայն,
Պիտի պատմենք միշտ բարձրաձայն,
Աստուած սէր է։

ԵՐԳ 2.

1.

Քան երկրածին ցեղը բոլոր,
Գեղեցիկ ես սիրահմայ,
Սիրով սիրարդ զեղում է խոր,
Թափուած է շնորհք շըրթանցդ վրայ,
Աստուած օրհնեալ, կրկնում ենք ծունկ,
Քեզ ձօնում մեր օրհնութեանց խունկ։

ԵՐԳ 3.

1.

Յիսուս Քրիստոս, Դու փրկիչ մեր,
Յնծմամբ պաշտում ենք Քեզ.
Խաչին վըրայ մեռնելովդ, Տէր,
Գիտենք փըրկել ես մեզ։

2.

Երջանկափառ բարձունքից Քեզ,
Գիտենք սէրն բերաւ ցած.
Որ մեր կորած վիճակն փըրկես,
Կըրեցիր մահն և՛ խաչ։

3.

Դու մեր Փրկիչ — Յիսուս — Տէրը,
Յաւէրժ նոյն է Քո սէրն.
Յաւէրժ նաև մեր երգերը,
Ե՛րբ Քեզ հետ լինենք վերն։

4.

Ա՛րդ, օրհնում ենք շընորհդ անճառ,
Սէրն որ վայել ՚ի Քեզ.
Հարուստ էիր աղքատացար,
Մահովդ փըրկելու մեզ։

5.

Քեզ պաշտում՝ փառաբանում ենք,
Մինչ շուրջը Քո առած,

Գեղեցկութեանդ հիանում ենք,
Ոտքիդ մօտ խոնարհած։

6.

Դիւ, գովութեան մեր առարկան —
Քո խաչն, գործն ու խօսքերն.
Օրհնեալ Տէ՛ր, ով Քո պատուական՝
կարող է չափել սէրն։

ԵՐԳ 4.

1.

Լ՛ուր, գոչում են, «Գառն Աստուծոյ»,
Բիւր ձայներ միաբերան.
Անթիւ սուրբեր, քաղցր և հաճոյ՝
Արձագանգ են տալիս դրան։

2.

«Գովեստ Գառին». երկրնքին մէջ՝
Ժողովուում են այդ երգից.
Ամեն լեզու դրան անվերջ՝
Լինում է միշտ ձայնակից։

3.

Ե՛ւ մշտաբար սա անուշ խունկ՝
Հօր աթոռն է բարձրանում.

Գառին կրկնում են ամեն ծունկ,
Միաբերան երկրնքում։

4.

Խորհուրդքը Հօր պահանջում են,
Որդւոյն պատիւ հաւասար.
Շընորհքն Որդւոյն ճաճանչում են,
Ցայտնելով Հօր փառքն անճառ։

5.

Հոգեպատար զօրքեր անթիւ,
Գառին շուրջը, զուարթագէմ՝
Լուսապըսակ, Նրան ըզձիւ,
Ողջունում են իբր «Ես եմ»։

6.

Ողջ արարածք սրդ հանգիստ են,
Չ՛ունեն բընաւ վրդովում.
Վիշտ և աղէտ այլ չըգիտեն,
Արարչին են միշտ գովում։

7.

Լ՛ուր, երկնային որոտում են՝
Քաղցրը երգերն թընդագին.
Եւ տիեզերք դրան, «Ամէն»,
Ձայն են տալիս խընդագին։

ԵՐԳ 5.

1.

Փառք, գովեստ, պատիւ միայն
Գառին սրբուի յաւիտեան.
Յիսուս Քրիստոս մեր Փրկիչն՝
Իջաւ երկիր երկընքէցն,
Մեռաւ մեր տեղ խաչի վրան,
Օրհնեալ է Նա, փառք Նըրան։

ԵՐԳ 6.

1.

Յիսուս, Մեր Տէր, Դու Այգուն Աստղ
Ի՜նչ քաղցր է Քո Անուն.
Յիսուս, զենուած Գառնուկդ սիրուն,
Դու փառքում է՛լ ես նոյն։

2.

Յիսուս, աթոռդ թողեցիր որ
Փրկես կորած ազգին.
Քո սիրոյդ փառք փայլում է միշտ՝
Դէմքիդ վրայ քաղցրագին։

3.

Յիսուս, երկրի վրայ քայլեցիր՝
Ծոնարհ սրտով և՛ հեզ.

Հըլու կամացն Աստ՛ծոյ մեռար,
Ի՜սկ երկիրն մերժեց Քեզ։

4.

Յիսուս, ի՜նչ յուշեր մեր սըրտում
Վառում են Քո հետքերն.
Մի՜նչ աչքերն մեր երկինք ուղղած
Քեզ տեսնում ենք անդ վերն։

5.

Յիսուս, Փրկիչ մեր, շո՛ւտ արի,
Որ լինենք Քեզ հետ մենք.
Կը ծագէ մեզ այդն փառաւոր,
Երբ երես Քո տեսնենք։

ԵՐԳ 7.

1.

Երբ մենք նայում ենք Աչքին այն,
Ուր որ մեռաւ Փառաց Արքայն,
Մեր շահը վնաս ենք համարում,
Հըպարտութիւնն արհամարհում։

2.

Քա՛ւ պարծենալ մեզ յաւիտեան,
Բայց թէ Փրկչին մահով միայն.

Ամեն բան սին ինչքան սիրուն՝
Կ՚ուզենք զոհել Նրբա սիրուն։

3.

Ի՞նչ վիշտ և՛ սէր, որ խաչի վրայ՝
Հեղեցին գլուխ՝ ձեռք՝ ոտքից Նրա.
Այդպիսի սէր և վիշտ տեսաք,
Կամ փուշերից հիւսուած պըսակ։

4.

Աշխարհ փառքով մեզ թէ՛ տրուէր,
Այն շատ փոքրիկ մի պարգև էր.
Սէրն գերագոյն և անսահման՝
Պահանջում է կեանք մեր համայն։

ԵՐԳ 8.

1.

Երգենք Գառին յաւիտեան, Արժանի է Նա փառքի,
Երգեր սիրոյ՝ յաղթութեան, »
Որ իր մահով սիրագրաւ՝ «
Տըւաւ մեզ կեանք անդըրաւ »

2.

Կանգնած Նա մէջ Իր եղբարց, Արժանի է Նա փառքի
Լըսում ենք ձայնն սիրարծարծ. »

Առաջնորդող սիրասքանչ, Արժանի է Նա փառքի,
Աստուածային գովութեանց։ »

3.

Բայց նախ Նա կրեց վիշտ ամբաւ, Արժանի է Նա ևն.
Որ ապրենք՝ մեր տեղ մեռաւ. »
Նըրա կըրած խաչն և մահ՝ »
Յաւէրժ սիրոյն մեր հիմ կայ։ »

4.

Արդ կենդանի է մեր Տէրն, Արժանի է Նա փառքի,
Բազմած աթոռը Հօր վերն. «
Անդ իշխելու է անվերջ, «
Փառաբանեալ երկնից մէջ։ »

ԵՐԳ 9.

1.

Կապուած ենք մենք ամուր սիրով՝
Յիսուսի հետ անմահկին.
Ընդունել Հօր համբոյրն գորով,
Կնքուել Հոգւովն խոստմունքին։

2.

Ո՛հ, այն սէրըն, անմահ արև,
Ջ՚ունի դադար և վախճան.

Հաւատարիմ սիրուց վերև,
Զըկայ ուրիշ խըրախճան։

3.

Ներա սէրը չ՛ունի դիշեր,
Զըկայ Ներանում բընաւ մութ.
Ներան պէտք չեն արև աստղեր,
Չ՛ունի Իր սիրտն արևմուտ։

4.

Ի՞նչ Քեզ սիրոյդ տանք փոխարէն,
Ա՛խ, մեր հոգւոյն Սիրական.
կեանք մեր նըւէր Քեզ համօրէն,
Թէև մարդիկ ծաղրեն այն։

5.

Միայն Քոնն է մեր սէրն իսպառ,
Քաղցըր Քըրկիչդ աննըման.
Լեզու կ՛ուզենք սիրայարմար,
Որ սէրդ երգենք յաւիտեան։

ԵՐԳ 10.

1.

Երգենք Քրկչին սէրն աննըման,
Որ կըրեց խաչն և գերեզման,

Եւ մեզ տըւաւ կեանք անվախճան.
Փա՛ռք Ներա անուան։

2.

Անվերջ սիրով մեզ սիրել է,
Մեր շատ մեղքերն Նա ներել է,
Իրենների մօտ բերել է.
Փառք Ներա անուան։

3.

Մեզ ման՛նայով կերակրողը,
Իր թևերի վրայ կրողը,
Վըշտաց մէջ մըխիթարողը,
Նա է, փառք Ներան։

4.

Պիտի տեսնենք վերն մեր Տէրը,
Յաւիտեան Ներա մեծ սէրը,
Յիշելով՝ մեր քաղցր երգերը
Մ՚իշտ մատուցանենք։

5.

Յիսուս, Քոնն է օրհնութիւնը,
Նաև փառքը, զօրութիւնը,
Ի՞նչ մեծ է Քո փրկութիւնը.
Փառք, փառք Քո անուան։

ԵՐԳ 11.

1.

Դուք որ սիրում էք Տիրոջը,
Ե՛ւ քաղցր է ձեզ Նրա լուծը,
Եկէ՛ք երգենք Նրա սիրուցը,
Փա՛ռք երգենք Նըրան։

2.

Յիսո՛ւս, անուն բարձրանչելի,
Վէմ հինաւուրց, շատ հաճելի,
Նըրա սէրն է անանցելի.
Փառք երգենք Նըրան։

3.

Հովիւ է Նա հաւատարիմ,
Մեր բարեկամն, ինչ մտերիմ,
Փրկող չարիցըն ոխերիմ.
Փառք երգենք Նըրան։

4.

Ո՜հ, երբ կըգանք մենք Նըրա մօտ,
Որին սիրա մեր միշտ է կարօտ,
Դէմքին յառենք իր անպարօտ,
Փառք երգենք Նըրան։

5.

Փոքր ի շատէ գիտենք ներկայ,
Աչք հաւատքի թերի մեր կայ,
Բայց կատարեալն շուտով կըգայ։
Փառք երգենք Նըրան։

ԵՐԳ 12.

1.

Թէ փառաւոր անուանը շնորհքի՝
Ամենն մէկտեղ հընչեն,
Փրկչին պատմել արժանիքի
Գէ՛թ մէկ մասն կարող չեն։

2.

Հայր է յաւիտենականութեան,
Կարեաց մեր քաջ ծանօթ.
Նմ. կարող է լեցնել միայն՝
Սըրբուած ամէն անօթ։

3.

Հիմն է շէնքի հաստատութեան,
Արմատ կենդանութեան,
Զովացուցիչ աղբիւր միայն,
Կենաց հաց յաւիտեան։

4.

Հովանի է դէմ տաքութեան,
Ասող է առաւօտեան.
Նա արեգակ արդարութեան,
Նա մեզ է ամեն բան։

5.

Բժիշկ ճարտար և փաստաբան,
Իրաւարար արդար,
Եղբայր սիրող, մեր քաջ պաշտպան,
Իշխան և կառավար։

6.

Ո՛վ Տէր Յիսուս, մեր փրկութիւն,
Ուրախութիւն, մեր փառք,
Մեր յոյս, մեր կեանք, խաղաղութիւն,
Լոկ դու ես մեր փափաք։

7.

Ե՛րբ Քեզ ունենք, Տէ՛ր, անպայման,
Մենք ունենք ամէն բան.
Կ՛ուզենք Անունդ վեհ, աննըման,
Երգել միշտ օրհնաբան։

ԵՐԳ 13.

1.

Ի՜նչ քաղցր հնչէ Յիսուս անուն,
Հաւատացեալ սըրտին.
Բուժում է վէրք և ցաւ հոգուն,
Ցըրում վախերն ներքին։

2.

Բըժըշկող է այն խոցուածին,
Ըսփոփ տըրտմած անձին.
Մանանայ է միշտ քաղցածին,
Հանգիստ և՛ յոգնածին։

3.

Օրհնեա՛լ Անուն, վէմ աննըման,
Ապաստան ապահով.
Մեր գանձն անվերջ, լի անսահման
Շնորհքի ճոխութիւնով։

4.

Յիսո՛ւս, Դու մեր Հովիւ, Ընկեր,
Բահանայ և՛ Արքայ.
Դու Տէր, Շաւիղ, Նըպատակ մեր,
Եւ մեր կեանք յարակայ։

5.

Թոյլ է մեր ջանք, Տէր, Դու գիտես,
Ամանդք սըրտի մեր չնչին.
Բայց երբ տեսանենք Քեզ ինչպէս ես,
Կ'երգենք Քեզ արժանին։

6.

Մինչ այն՝ կ'ուզենք անվերջ գորովդ
Պատմել աներկևան.
Ե'ւ ցնծալ միշտ քաղցր անունովդ,
Որ փշրեց այժ մահուան։

ԵՐԳ 14.

1.

Տանք գոհութիւն վեհ Աստուծուն,
Աղբիւրն սիրոյ յաւերժ՝ անհուն.
Ի՞նչ խորայորդ, ինչ բարձրաբերձ,
Չ'ունի ըսկիզբ և ոչ էլ վերջ։

2.

Արդեօք կարէ սուրբ բընաւին
Պատմել այդ սէրն գէ՛թ կիսովին.
Եւ կամ որև հրեշտակ միթէ՞
Թափանցել այն երբէք գիտէ։

Աստուածային սէրն աննըման,
Չ'ունի ոչ չափ և ոչ սահման.
Սէրն որ սուրբերն ճանաչում են՝
Պատմել վեր է մտքից ամեն։

ԵՐԳ 15.

1.

Նոյն գիշերում, Տէր Յիսուս,
Երբ ամէն ինչ ներկայ՝
Միացաւ իր շուք ձըգել
Քո սուրբ որոշման վրայ.
«Այս արէք Ինձ յիշելու»,
Պատգամ տուիր Դու մեզ.
Պատրաստակամ գոհ սըրտով՝
Մենք էլ յիշում ենք Քեզ։

2.

Տէ՛ր, խորհում ենք այն խաւարն
Որ պատեց Քո հոգին,
Ի՞նչ կոհակներ յորձախոր
Կըրծքիդ վրայ գլորեցին.
Այդտեղ անհուն շնորհքդ Քո
Տեսնում ենք սիրայոյզ.
Շընորհապարտ հոգւով Քեզ
Յիշում ենք, Տէր Յիսուս։

457498

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

3.

Մինչև որ գաս Դու փառքով,
Կոչել մեզ այստեղից,
Պայծառ օրուան լուսոյ մէջ՝
Հանգիստ տաս անթախիծ,
Կը պատմենք մահդ յաղթական,
Եւ կ՚ուզենք իրապէս
Մահուանդ աստ համակերպուել,
Մինչ, Տէր, յիշում ենք Քեզ։

ԵՐԳ 16.

1.

Քրկիչըն այս սեղան կազմեց,
Եւ կանչեց մեզ Իր շնորհքովը,
Որ յագեցնէ Իր սիրով մեծ՝
Մեր կարօտած սրբոյ սովը։

2.

Նա մեր տրկար սէրն տեսնելով,
Սուրբ յիշատակն այս մեզ թողեց.
Նա մեզ համար զոհ լինելով՝
Մահիցը մեզ կեանքի փոխեց։

3.

Սիրապատար, ուրախ և հեզ,
Լըսենք Ըրբա ձայնն քաղցրագին.

Նա Ինքն է որ խօսում է մեզ—
«Այս արէ՛ք Իմ յիշատակին»։

4.

Ի՞նչ սըխրալի սա խըրախճան,
Դարերից վեր կայ անսասան.
Ի՞նչպէս մեր սիրտ և միտք ցնծան
Պատմել Տիրոջ մահն սրբազան։

5.

Կը գայ շուտով անպատճառ Նա,
Որ մեզ տանէ այս երկրից չար.
Քանզի առանց մեզ չի դառնայ
Ուրախութիւն Ըրբա կատար։

6.

Տէ՛ր, անունիդ ենք ժողովուած,
Անո՛ւն վըսեմ և սիրասքանչ.
Դու մեր Տէրը, Դու մեր Աստուած,
Դու մեր յաւէտ և երկնից գանձ։

ԵՐԳ 17.

1.

Հաւատացեա՛լք, Տիրոջ
Տեսէ՛ք պարգևն և գործ.

Նա արիւնն իր հեղեց առատ,
Սիրով անհամեմատ։

2.

Եկաւ Նա՝ Տէրն փառաց,
Որ տար մեզ երկնից հաց.
Մեզ պարգևեց կեանք անզըրաւ,
Երբ խաչին վրայ մեռաւ։

3.

Արդ թող վառի մեր սէր,
Ե՛ւ մենք միշտ անձնըւէր,
Յիշենք, պաշտենք, մեր Տէր Յիսուս.
Նա կեանք մեր, փառք և յոյս։

ԵՐԳ 18.

1.

Ի՞նչ քաղցր այստեղ, ինչ գմայլուն,
Երբ մօտ ենք Յիսուսին.
Սիրտք մեր լցուած սիրովն փայլուն՝
Վառուում են միասին։

2.

Մեր միտք ապշած կանչում ենք արդ,
Խորհուրդ վեհ, աննըման.
Փառք, երգում ենք Քեզ շնորհապարտ,
Տէ՛ր, սերդ չ՚ունի սահման։

3.

Սիրով անվերջ և գըթառատ,
Փընտրեցիր մեզ յաւէտ,
Որ սուրբ լինենք և անարատ՝
Հօր առաջին Քեզ հետ։

4.

Ո՛հ, թէ շատերն հաւատային
Քեզ, Տէր Յիսուս, սըրտանց.
Եւ մեզ հետ աստ լըսել տային,
Գովեստ Քո օրհնութեանց։

5.

Որ Քո աճուն չինուածքդ առած
Լըրումըն և կատար.
Շուտով հընչէ Գահիդ առաջ՝
Համերգ Քո անդադար։

ԵՐԳ 19.

1.

Եկէք Տէրն սիրողներ,
Պատմենք մեր ցնծութիւն.
Մէկտեղ հընչեն քաղցր երգեր մեր՝
Փրկչին սիրովն անհուն։

2.

Եւ թող չերգեն, Տէրը
Որոնք ճանաչած չեն.

Բայց պէտք է մ՚իշտ վերկուածնները՝
Փառք Աստուծոյ կանչենն։

3.

Այստեղ վայելում ենք,
Նրա քաղցր հաղորդութիւն.
Սակայն վերը կը տեսնենք մենք,
Իր փառքը վեհ, անհուն։

4.

Ուստի երգենք յաւէտ,
Ուրախ և անտրրտում.
Էմմանուէլն Ինքն է մեզ հետ,
Իր սէրն ունենք սրրտում։

ԵՐԳ 20.

1.

Ո՛հ թէ մարդիկ անհուն սէրը
Գիտենային Փրրկչին,
Շուտով Նրրան իրենց Տէրը՝
Պիտի ընդունէին։

2.

Ի՛նչպէս սիրենք այն Բարեկամ,
Որ եկաւ լի շնորհքով.
Ե՛ւ խաչի վրայ յօժարակամ,
Մեռաւ նախատինքով։

3.

Մեռաւ, ո՜հ, ինչ վրշտով սաստիկ,
Որ վիշտ մեր խափանէ.
Ո՛վ կարէ Նրա սէրն՝ երախտիք,
Լրրիւ փառաբանէ։

4.

Երբ այն ցաւերն դեռ դիտում էր,
Որից նա չէր խորշել,
Ի՛նչ խանդակաթ վերջին պատուէր՝
«Սա արէք Ինձ յիշել»։

5.

Ցիշենք մահդ, մեզ համար Որ կրած,
Ո՛վ Տէր, և՛ սէրդ անհուն.
Սրրտից մեր վրայ արձանագրած
Լինի միայն Որ անուն։

ԵՐԳ 21.

1.

Ո՛հ, Սէր վրսեմ, ըսքանչելի,
Սէր հրաշալի, աննրմանի.
Յորհուրդ է Նա անպատմելի,
Սէր թանգագին, պատուական։
Սրրտի մեր կեդրոնն է միայն,
Ե՛ւ հոգւոյն մեր միակ ղրջանն,
Յորհուրդների նիւթն է մեր այն,
Մեր մտքի սոսկ առարկան։

2.

Զուտ է Նա, զուտ ոսկու նըման,
Ազամանդից թանգագին.
Մեղրախորիսխից քաղցր է այն.
Բըժըշկում է դառն հոգին։
Ո՛հ, Սէրը մեր տիպար սէր է,
Մաքուր և՛ անզուգական.
Չ՚ունի սահման, մըտքից վեր է,
Մեր յանկերգն է ցընծութեան։

3.

Յիսուս է մեր Փրկիչն և՛ լոյս,
Մեր պաշտելի Սիրական.
կենաց հաց է և փառքի յոյս,
Մարմնացեալ սէր անսահման։
Պիտի երգենք միայն Ք՚ո սէրն,
Ուրիշ սէրեր են ունայն.
Թևըդ տուր մեզ, սըլանանք վերն
Անդ Քեզ սիրենք յաւիտեան։

ԵՐԳ 22.

1.

Չենք մոռանալ, ով զենուած Գառն,
Ք՚ո տառապանքն և մահը դառն.
Որ յանձն առար խաչին վըրայ,
կեանքդ մեզ համար տալ անխընայ։

2.

Սոյն հացի և բաժակի մէջ՝
Տեսնում ենք, Տէր, Ք՚ո սէրն անչէջ.
Ք՚ո սուրբ մարմինն տուիր յօժար,
Եւ անգին Ք՚ո արիւն հեզար։

3.

Տէ՛ր, մենք Քոնն ենք, գովում ենք սէրդ,
Շատ թաղցր է մեզ վերջին պատուէրդ.
Մինչև կոչես այսաեղից մեզ,
Կ՚ուզենք որ միշտ, Տէ՛ր, յիշենք Քեզ։

ԵՐԳ 23.

1.

Երգենք Հովուին սէրըն անճառ,
Որ վասն հօտին մեռաւ յօժար.
Փորձուեց Նըրա սէրն վերջին ծայր,
Իսկ իբրև վէմ մընաց անշարժ։

2.

Այս քաջ Հովիւն հօտին համար՝
կանգնեց սիրով անզուգական,
Թշնամւոյն դէմ ահեղ՝ յամառ,
Տալով Իր անձը պատուական։

3.

Երգենք, ապա, երգ քաղցրալուր՝
Այս Հովուին որ մեր տեղ մեռաւ.

Ո՞վ կայ Նըրա պէս փառաւոր,
Որ Իրեն անձըն ետ առաւ։

4.

Կ՚երգենք միշտ փառք Նըրա սիրոյն,
Լեզուներով մեր՝ անդադար.
Մինչև տեսնենք Իր դէմք սիրուն,
Պաշտենք Նըրան ցընծապատար։

ԵՐԳ 24. 102 եշան-ով

1.

Յիսուս անունն սէր է,
Յիսո՛ւս, մեր Տէր.
Ամէն մարքից վեր է,
Յիսո՛ւս, մեր Տէր։
Դու ես մեզ ամէն բան,
Ի՛նչ քաղցր, ի՛նչ պատուական,
Ո՞վ կայ, Տէր, Քեզ նըման,
Յիսո՛ւս, մեր Տէր։

2.

Մեզ համար մարդացար,
Յիսո՛ւս, մեր Տէր.
Քո կեանք տըւիր յօժար,
Յիսո՛ւս, մեր Տէր։

Գթառատ ես, ով Տէր,
Անքըննին է Քո սէրը,
Դու ես բաժինը մեր,
Յիսո՛ւս, մեր Տէր։

3.

Քեզանով ենք արդար,
Յիսո՛ւս, մեր Տէր.
Դու մեր փառքն անվրէպ,
Յիսո՛ւս, մեր Տէր։
Սիրուած Աստուածանից,
Ջունենք վախ մի բանից,
Դու ես մեր պահպանիչ,
Յիսո՛ւս, մեր Տէր։

4.

Շուտով կը գաս կըրկին,
Յիսո՛ւս, մեր Տէր,
Որ մեզ տանես երկին,
Յիսո՛ւս, մեր Տէր։
Ե՛րբ տեսնենք Քո երես,
Օ՜հ, կըլինենք Քեզ պէս,
Եւ միշտ փառք կ՚երգենք Քեզ,
Յիսո՛ւս, մեր Տէր։

Ե Ր Գ 25.

1.

Դու երկնի և երկրի Տէր,
Աստուած փառաց և շնորհաց.
Պիտի երգեն մեր սրտեր՝
Յաւիտեան սէրդ անմոռաց։
Արդար ես, անյիշաչար,
Քո աթոռն է անսասան.
Յիսուսում յայտնուեցար,
— Ծորո՜ւրդ վըսեմ, սրբբազան։
Դու Արքայ ամենատէր,
Քեզ պաշտում են մեր սրբտեր։

2.

Դու միայն ես սքանչելի,
Անհաս փառքում զօրութեան.
Բընակուած անմատչելի
Սուրբ լոյսի մէջ յաւիտեան։
Դու Աստուած ես ճըշմարիտ,
Ամենայաղթ և հզօր.
Սէրդ մեր սիրոյն է առիթ։
Նոյնն ես Դու երէկ, այսօր։
Դու յաւէտ ամենատէր,
Քեզ պաշտում են մեր սրբտեր։

3.

Սուրբ ես, ով Հայր, սէրդ անհուն՝
Տըւաւ Որդւոյդ մեզ համար.

Նա յայտնեց մեզ Քո Անուն,
Մեռաւ մահով արհամարհ։
Ընկած գահի Քո առաջ,
Պաշտում ենք Քեզ խոնարհած.
Իբր որդիք Քո, սուրբ փառաց
Ժառանգորդ ես մեզ արած։
Քեզ գովեստներ օրհնութեան՝
Պիտի երգենք յաւիտեան

Ե Ր Գ 26.

1.

Զըկայ ո՛չ ոք բընաւ Քեզ պէս,
Ո՛վ Փըրկիչ մեր բարեկամ.
Վառ փայլում է Քո լոյս երես,
Անհուն սիրովդ յարաժամ։

2.

Զըկայ մէկը, Տէր, Քեզ նըման,
Դու թըշուառաց յոյս և լոյս.
Տըկարներըի հզօր պաշտպան,
Մեր պաշտելի Տէր Յիսուս

3.

Զըկայ անուանդ պէս մի անուն,
Անուշ է այն կնդրուկից.

Ձրկայ էակ այնքան սիրուն,
Ինչպէս Դու ես, ով Փրկիչ։

4.

Ձրկայ երկնից մէջ Քեզ նըման,
Փառաւորեալ և գօրեղ.
Սուրբ հրեշտակաց խումբեր համայն՝
Քեզ պաշտում են սիրապեղ։

5.

Ձրկայ մէկը որ ունենար,
Տէր, սիրոյդ Քո մեծութիւն,
Որ երկընքից իջար աշխարհ,
Որ փրկէիր մարդկութիւն։

6.

Ձրկայ ոչ ոք, Տէ՛ր, Քեզ նըման,
Դու ամենիս միակ յոյս.
Ե՛ւ Փրկիչ ես և՛ օգնական,
Մեր պաշտելի Տէր Յիսուս։

ԵՐԳ 27.

1.

Փառք, օրհնութիւն, Քեզ, ով Յիսուս,
Տէր մեր հզօր, գօրաւոր.
Դու յաղթեցիր Քընաման ուժ,

Եւ մահին էլ ահաւոր։
Դու կենդանի ես, վեհ Յիսուս,
Մեր կեանք, մեր յոյս փառաւոր։

2.

Փառք, օրհնութիւն, Քեզ, ո՛վ Յիսուս,
Դու մեր Տէրն ես և մեր գլուխ.
Դու լեցնում ես մեզ ամենուս,
Սուրբ Հոգւովդ մըխիթարող։
Դու կենդանի ես, վեհ Յիսուս,
Ձեռքիցդ մեզ խլել չեն կարող։

3.

Փառք, օրհնութիւն, Քեզ, ո՛վ Յիսուս,
Իջար սիրով Դու վերից.
Բերիր մեզ կեանք և քաղցրը լոյս
Պատմեցիր մեզ Հօր սէրից։
Դու կենդանի ես, վեհ Յիսուս,
Քեզ փառք լինի սուրբերից։

ԵՐԳ 28.

1.

Ագատ Քրիստոսում, ինչ կեանք երջանիկ,
Ո՞վ կը պատմէ Նրա բոլոր արժանիք.
Խաչին վրայ Իրեն արիւնն անարատ,
Հեղեց մեզ տալով կեանք անվերջ առատ։

«Որդիք Աստուծոյ» կոչեմ փառաւոր,
Ո՛հ, յիրաւի սա Հօր անհո՛ւն շընորհ.
Պաշտենք միշտ Ներան, գովենք
սէրն անհուն,
Պատմենք մանն Տիրոջ և Ներա անուն։

ԵՐԳ 29.

1.

Տէ՛ր, երբ կըգայ այն օրհնեալ
ժամանակն երջանիկ.
երբ սըրբոց հետ մէկտեղ Քո՝
կը պատմենք արժանիք։
Փառք, օրհնութիւն, պատիւը,
Քեզ կըտանք անդադար.
Անթիւ դարեր Քո սէրը,
կ՚երգենք բերկրապատառ։

ԵՐԳ 30.

1.

Ո՛վ մեծ Աստուած, հրաշքներ հըզօր՝
Միշտ ցոյց կը տաս մարդկանց բոլոր.

Բայց Քո Որդւոյդ պարգևն վերից,
Վեր է ամեն հրաշքներից։
Ո՞վ է ներող Աստուած Քեզ պէս.
Որ տաս ձըրի, ճոխ շնորհք պէս պէս։

2.

Ո՛հ, երանի՛ աշխարհ համայն,
Ըզգար, վա՛յլէր սէրդ աննըման.
Ո՛հ, թէ երկիր, վեհ երկընքին
Տար արձագանգ՝ շնորհաց երգին։
Ո՛վ է ներող Աստուած Քեզ պէս,
Որ տաս ձըրի, ճոխ շնորհք պէս պէս։

ԵՐԳ 31.

1.

Քեզ փառք, ով Աստուած, որ Յիսուսն
իջաւ,
Խաչին վրայ մեռաւ և վերն փառքով
համբարձաւ։
Օրհնեալ է Նա, մեր Փրկիչը,
Օրհնեալ է Նա, ամէ՛ն.
Օրհնեալ է Նա, մեր սրտիցը,
Կ՚երգենք փառք ամէն։

2.

Օրհնո՛ւմ ենք Քեզ, Հայր, որ Հոգին էլ
իջաւ,
Մեզ յայտնեց Փրկիչը և Նրա փառքն
անբաւ։

3.

Միշտ Փառք և գովեստ շնորհաց Աս-
տուծոյն.
Որ յաւէտ սիրեց մեզ և տուաւ իր
Որդւոյն։

4.

Օրհնեալ է Աստուած, մեր սըրտերի մէջ
դրաւ
Իր Հոգին՝ որ մեր ժառանգութեան է
գրաւ։

5.

Շուտով կըգայ այն փառաւոր ժամանակ,
Երբ մենք կ՚երգենք վերը, Փրկչին վեհ
յաղթանակ։

ԵՐԳ 32.

1.

Նըրան, որ մեր սիրոյ համար՝
Կըրեց վըշաեր, ցաւ անհամար,
Փառք, օրհնութիւն սրտապատար,
Կ՚երգենք անվերջ և անդադար։

2.

Սիրով զոհուած Սուրբ Գառնուկին,
Որ մեզ տուաւ Իր կեանքն անգին,

3.

Նըրան որ սուրբ փառքով յարեաւ,

Եւ յարութեան յոյսն մեզ բերաւ,

4.

Նըրան, որ է մեր Առաջնորդ,
Մեծ Քահանայ, միակ Միջնորդ,

ԵՐԳ 33.

1.

Օ՜ն, պաշտե՛նք Արքայն,
Ամենին Տիրոջն.
Երգենք բարձրաձայն,
Օրհնենք մեզ Սիրողն։
Նա է Փրկիչ մեր,
Վահան և պաշտպան.
Նըրան հրեշտակներ,
Միշտ կան օրհնաբան։

2.

Ո՛վ լոյս անքըննին,
Արևդ յարագոյ,
Կ՚ուզենք ամենին
Պատմել շնորհքը Քո։
Ամպերն են Քո կառք,
Բորբ լուսովըդ պերճ.
Մըրկին մէջ Քո փառք,
Ցոլում է անվերջ։

3.

Քո խնամքդ հայրական,

Պատմել ով կարէ.
Հոգիդ պատուական
Մեզ մըխիթար է։
Քո միակ Որդին,
Տուիր մեզ համար.
—Սուրբ Առաջնորդին—
Քեզ փառք անհամար։

4.

Երբ մտնենք երկինք,
Վերին հայրենիք,
Գառին սէրն կ'երգենք,
Եւ իր արժանիք։
Անդ Գահին մօտ մենք,
Միշտ սիրապատար՝
Նըրան կը պաշտենք,
Յաւէրժ, անդադար։

ԵՐԳ 34.

1.

Այստեղ սկսում է երգն,
Վերն կրկնում են ամենքն,
Որ մաքրեց արեամբն Իւր՝
Մեր մեղքերն բազմաբիւր,
Նըրան երգում ենք բերկրագուարթ.
Փառք, զօրութիւն, գովեստ է պարտ։

2.

Նաչ, տառապանք և ահ,
Մենակ Նա կրեց և մահ.
Եղաւ թըշնամի, ծանակ,
Շահեց վերջն յաղթանակ։
Նըրանն է գործն, եղբարք, երգենք,
Նա կը տայ Իր Գահն ժառանգենք։

ԵՐԳ 35.

1.

Շնորհառատ Յիսուս Փրկիչ,
Օրհնեալ Որդի Բարձրելոյն.
Համագոյ Հօր, փառակից,
Լոյս գերբնական և փայլուն
Իջար սիրով Դու երկիր,
Մեռար լքուած, տարամերժ,
Որ մենք շնորհքով որդեգիր՝
Ապրենք Քեզ հետ վերն յաւերժ։
Սուրբ ես, Սուրբ ես, Սուրբ ես, Տէր,
Քեզ պաշտում են մեր սրտեր։

2.

Արդ տեսնում ենք. Քեզ պայծառ,
Փառքի լուսով պըսակուած.
Քեզ ամեն ծունկ անպատճառ,
Պիտ՝ կըրկնէ հըպատակուած։
Ամեն լեզու պաւանէ,

Իշխանութիւնդ գերակայ.
Ձենուածը Դու առ մարդկանէ,
Բայց բարձրացար Հօր 'ի Գահ։
Սո՛ւրբ ես, Սո՛ւրբ ես, Սո՛ւրբ ես, Տէր։
Քեզ պաշտում են մեր սրտեր։

ԵՐԳ 36.

1.

Մեծ բժիշկը մեզ մօտ է միշտ,
Մեր պաշտելի Տէր Յիսուս.
Իր խօսքն բուժում է ցաւ ու վիշտ,
Կ'օրհնենք անունը Յիսուս։
Երգեցէ՛ք դուք բոլոր սուրբեր,
Օրհնեցէ՛ք հրեշտակաց խումբեր.
Մենք է՛լ լսել տանք երգեր մեր—
Յիսո՛ւս, Յիսո՛ւս, Յիսո՛ւս։

2.

Նա զոհեց Անձն Իր մեզ համար,
Անարատ, անմեղ Յիսուս.
Խաչի վրայ մեռաւ յօժար,
Մեր աննըման Տէր Յիսուս։

3.

Ո՛վ եղբայրներ, դուք քաղցրաձայն,
Գովեցէ՛ք Փրկիչ Յիսուս.
Դուք էլ քոյրեր օրհնեցէ՛ք Նրան,
Արժանի է Տէր Յիսուս։

1.

Որդիք Աստ'ծոյ, փոքր և մեծեր,
Սիրեցէ՛ք մեր Տէր Յիսուս.
Նըրան տուէ՛ք թարմ ոյժեր ձեր.
Մեր թանկագին Տէր Յիսուս։

5.

Այն մեծ օրը շուտով կը գայ,
Երբ կը տեսնենք մեր Յիսուս.
Եւ կ'օրհնենք յաւիտեան Նըրա
Շատ քաղցրը անուն Յիսուս։

ԵՐԳ 37.

1.

Փառք Յիսուսին, փառք Յիսուսին,
փառք Յիսուսին։
Անցա՛ծ են ցաւ, տագնապ, քրտինք,
Անցա՛ծ են խաչ, և նախատինք,
Փայլո՛ւմ է վառ լուսով երկինք։
Փառք Յիսուսին։

2.

Անցա՛ծ է մութը գիշերուան,
Անցա՛ծ է շուքն ահեղ մահուան,
Փոխուա՛ծ է ցաւ՝ ուրախութեան։

3.

Ա՛րդ Աստուծոյն փա՛ռք տանք հոգւով,

Երգե՛նք յաւէրժ Նըրա գորով,
Պատմե՛նք շնորհքի գործն բարձրագով։

ԵՐԳ 38.

1.

Երջանիկ բոպէներ տալիս է մեզ Տէրը,
Ե՛րբ տեսնում ենք Նըրա մեծ սէրը.
Գալու է Նա շուտով որ տանէ մեզ վերը՝
Տեսնենք Իրեն սուրբ փառքերը։

2.

Շըրջապատենք Նըրան, եղբայրնե՛ր,
սըրտագին,
Եւ նայենք Նըրա քաղցըր դէմքին.
Ուր որ Նա է գընում հետևենք անմեկին,
Պատմելով Նրա սէրն ամենքին։

3.

Մենք նըժդեհ ճամբորդներ ենք այստեղ
աշխարհում,
Փրկչին խօսքն է մեզ մըխիթարում.
Վայելում ենք Նրա օրհնութիւններն
անպատում,
Եւ մէջտ Նրան ենք փառաբանում։

ԵՐԳ 39.

1.

Պիտի ապրի Քո անունը, մեռնեն ուրիշ
անուններ,
Պիտի լեցնէ բոլոր երկիրն, իբր երկինքը
բարձրում վեր.
Յիսուս, ամեն թագաւորներ պիտի
ծըռեն Քո առաջ,
Ամեն ազգեր դաւանեն Քեզ, Քո
անունին խոնարհած։

2.

Կենդանի ես, ով Փըրկիչ մեր, ամեն
շնորհքով պատարուն,
Որ Քեզանում փայլեցին աստ անզոյգ
գեղով կատարուն.
Ամեն մի քաղցր նըկարագիրդ և
շընորհքներդ հրաշափառ,
Մահի միջով յարութեան մէջ
փոխանցուել են մշտաբար։

ԵՐԳ 40.

1.

Տէր Աստուած սէր է, մեզ փրկել է Նա,
Սիրելով անվերջ և անխընայ.
Ուստի մենք երգում ենք,
Տէր Աստուած սէր է,

Տէր Աստուած սէր է,
Սիրում է մեզ։

2.

Աստուած Իր Որդին ղըրկեց այս աշխարհ,
Մեր սիրոյ համար մեռաւ յօժար։

3.

Մեր Յիսուս Փրկիչ զոհեց Իր անձը,
Տալով Հոր սիրոյ անհուն գանձը։

4.

Ո՛հ, հաւատարիմ Փըրկիչը Յիսուս՝
Միշտ սիրում է մեզ, Նա է մեր յոյս։

5.

Թեզ գովել կ՚ուզենք Մեր յաւիտենական,
Անթիւ դարեր է՝լ չեն բաւական։

ԵՐԳ 41.

1.

Զըկայ մի սէր Յիսուսի սիրոյ պէս—
Վեհ, հըզօր և՛ անշէջ.
Մինչև ամենիս մեզ Նա ժողովէ
Հոր օթևանին մէջ։
Ո՛հ, սէրը Յիսուսի,
Բընաւ չ՚ունի նըման.
Հարուստ է այն, վըսեմ և անապակ,
Անհուն և՛ անսահման։

2.

Զըկայ մի սիրտ Յիսուսի սրտի պէս—
Գըթած սիրով լըցուած.
Նա թագուն ցաւերն մեր ըզգում է վերն,
Մեզ շատ մօտ է կըցուած։

3.

Զըկայ մի աչք Յիսուսի աչքի պէս—
Ամեն բան նշմարող,
Նըրա լոյսի տեսութեան մէջ՝ բաց է
Ամեն մի թաքստոց։

4.

Զըկայ մի ձայն Յիսուսի ձայնի պէս—
Քաղցր և՛ սիրահըմայ,
Պայծառ ակին պէս հընչում են Նըրա
կեանքի խօսքերն անմահ։

5.

Օ՛հ, թող հեռևենք ձայնին Յիսուսի,
Աստ բոլոր մեր կեանքում,
Մինչև որ Նըրա սիրոյ կըծքի վրայ
Հանգչենք վերն երկընքում։

ԵՐԳ 42.

1.

Ի՞նչը ղըրդեց Քեզ, ով Աստուած,
Սիրելիդ տալ յօժար,

Որ Նա մեռնէր լըքուած, ատուած,
Ինչի վըրայ մեզ համար։
Սէրը դըրդեց, սէրը Քո անզուգական,
Որ մեզ համար
Կամայաբար՝
Տըւիր Որդիդ պատուական։

2.

Ի՞նչը դըրդեց Քո սուրբ Որդուն՝
Թողնել վայրը վեհ փառաց,
Եւ երկրի վրայ քալել անտուն
Հէք ծառայի կերպ առած։
Սէրը դըրդեց, սէրը Նըրա գերբնական,
Որ անխընայ,
Ինչի վրայ Նա,
Տըւաւ Իր կեանքն պատուական։

3.

Ի՞նչը դըրդեց քեզ ով Աստուած,
Մեզ պարգեւել Սուրբ Հոգին,
Որ սըրտերում մեր խաւարած՝
Սըփռէր սէրը Քո անգին։
Սէրը դըրդեց, օ՛հ, սէրը Քո անպատում,
Որ տըւիր Քո
Հոգին սիրոյ,
Ընդմիշտ մընար մեր սըրտում։

4.

Ի՞նչքան պարտ ենք քեզ ով Աստուած,
Այսքան սիրոյ Քո համար,

Եւ Քո անհուն սիրուցդ տուած
Շնորհքներն են անհամար։
Սիրուցդ դըրդուած ուրդ տալիս ենք
բազմաթիւ՝
Քո երախտեաց
Համար սըրտանց,
Քեզ ամեն փառք և պատիւ։

ԵՐԳ 43.

1.

Քեզ պաշտում ենք օրհնեալ Որդիդ
Աստուծոյ,
Գերադըրուատ, գերաշընորհ, գերափառ,
Անզուգական և անպատում փառքերնՔո՛
Պահանջում են երգերը մեր անըպատում։
Թող Քեզ օրհնեն, օրհնեն, օրհնեն, Տէ՛ր,
Թող Քեզ օրհնեն սուրբերն ներդաշնակ,
Թող Քեզ օրհնեն, օրհնեն, օրհնեն, Տէ՛ր,
Քո սիրով լի սըրտերը մեր շարունակ։

2.

Հըզօր Արքայ, կեանքի Իշխան, Տէր
փառաց,
Դու մերժուեցիր մարդից ըմբոստ—
անառակ։
Օ՜հ, ի՜նչ մի սէր որ քեզ պատրաստ
քան ցած՝
Ընդունելու խաչի մահը խայտառակ։

3.

Արքայաշուք բեհեզ հագած շուտով Դու՝
Բազմելու ես շքեղապատ գահիդ վրայ.
Եւ ամեն ծունկ կրկնէ պիտի Քեզ հըլու,
Ամեն լեզու դաւանէ քեզ Տէր՝ Արքայ։

ԵՐԳ 44.

1.

Ո՛հ թէ Փրկչին մեր սիրելի,
Մէկ մանն փառաց անճառելի՝
Պատմել կարենանք մենք.
Երկնիցը մէջ վերն յաւիտեան,
Անթիւ սըրբոց հետ օրհնութեան
Ըընար պիտի զարնենք։

2.

Այն սուրբ արիւնն որ անխընայ
Թափեց՝ մեղքից մեզ փրկել Նա,
Պիտի երգենք անվիշտ.
Արդարութեամբ Նրա գերապանծ,
Հոգիք հագուած մեր լուսաքանչ
Փայլեն պիտի ընդ միշտ։

3.

Մեր մեծ Միջնորդն աթոռն նըստած,
Անպատմելի փառքով պատած,
Պիտի օրհնենք այնտեղ.

Իր փառքն անհուն՝ Աստուածային,
Յաւէրժ ընդ շուրջ այն սուրբ Գահին,
Պիտ՝ պատմենք սիրագեղ։

4.

Օ՛հ, շուտ պիտի հասնէ այն օր,
Երբ կը գայ Տէրն մեզ տանէ Հօր՝
Լուսոյ օթևաններն.
Այնտեղ Նրան տեսնենք պիտի,
Պաշտենք Նրան սիրով սըրտի,
Եւ միշտ երգենք Իր սէրն։

ԵՐԳ 45.

1.

Գողգոթայից սիրոյ բարբառ
—Ո՛հ, ինչ մի ազազակ մեծ—
Հընչեց ուժգին և յաղթաբար
Երկինք, երկիր, ողջ շարժեց.
«Կատարուած է»,
Գոչեց Փրկիչն մահամերձ։

2.

«Կատարուած է», ո՛հ, ինչ բերկրանք,
Փարատուել է մութ խաւարն.
Զարին յաղթեց, բերաւ մեզ կեանք,
Գողգոթայի զենուած Գառն։
«Կատարո՛ւած է»,
Ծօսեց խաչից Հոգեվարն։

Ո՛վ փրկուածներ, ձեր երգերը
Միացէ՛ք մատուցանել.
Քաղցրաձայն՝ երկինք երկիրը,
Թող օրհնեն դէմմանուէլ.
Գովե՛ստ Գառին,
Նա կամեցաւ մեռանել.

ԵՐԳ 46.

1.

Շնորհաց խօսքիդ հըլու, ո՛վ Տէր,
Սըրտով խոնարհ և հեզ.
Ինչպէս Դու մեզ սըւիր պատուէր,
Այժմ մենք յիշում ենք Քեզ։

2.

Մոռնալ կարող չենք Գէթսեման,
Կամ տագնապդ դառնավէր.
Հոսող քրտինքդ արեան նըման,
Ե՛ւ Քեզ չը յիշել, Տէ՛ր։

3.

Անհուն սիրովդ ’ի Գողգոթա,
Ո՛հ, օրհնեալ Փրկիչ մեր,
Մեռար յօժար խաչին վըրայ.
Պէտք է յիշենք Քեզ, Տէ՛ր։

4.

Մեզ համար Դո կըրած ցաւերդ,
Քանի կեանք ունենք մենք,
Ա՛խ, Տէր Յիսուս, Դո գութ և՛ սէրդ՝
Անշուշտ պիտի յիշենք։

5.

Ե՛ւ երբ այս չոր անապատի
Վերջացընենք շըրջան,
Վերը յաւէտ Դո սէրն պիտի
Երգենք մենք անվախճան։

ԵՐԳ 47.

1.

Ողջոյն մեծ Էմմանուէլին.
Թող պետութիւնք երկնից,
Ներքան կոչեն—մեր Պաշտելին—
Արքայ, Տէր ամենից։

2.

Թող աշխարհիս լեզու ամեն
Լինի մեզ ձայնակից,
Փառք տան Ներքան և դաւանեն
Արքայ, Տէր ամենից։

3.

Ո՛հ, երբ Ներքան կըտեսանենք մենք՝
’Ի մէջ գընդաց երկնից,

Սիրենք նըրան, պաշտենք, կոչենք,
Արքայ, Տէր ամենից։

ԵՐԳ 48.

1.

Վերն, Հօր տան մէջ մեր օթևանն՝
Ա՛րդէն կայ պատրաստուած.
Անդ մեր տունն է, մեր հանգըրուանն,
Որ կը տայ մեզ Աստուած։

2.

Անբիծ ճերմակ հագուստ Փըրկչին
Հետ կըփայլենք փառքով.
Եւ ցընծալով Իր առաջին՝
Կ՛երգենք Սէրն բարձրագով։

3.

Մեղքին արատ չնչուած բոլոր,
Եւ չարն եղած անհետ,
Պիտի բնակուենք յաւէ՛տ անդորը,
Աստծոյ Սիրելւոյն հետ։

ԵՐԳ 49.

1.

Կենդանի է մեր Տէրն,
Իր գործն է կատարած.
Նըստած է Հօր աջ կողմը վերն,

Մահին յաղթահարած։

2.

Կենդանի է մեր Տէրն՝
Մեռնելու չէ կըրկին.
Իր արեամբ մեր ջընջեց մեղքերն,
Տալով փրկութեան գին։

3.

Կենդանի է մեր Տէրն,
Մահն է՛լ խայթոց չ՛ունի.
Յաւէ՛տ Նրա հետ Իր փըրկեալներն
Թագաւորեն պիտի։

ԵՐԳ 50.

1.

Միշտ պիտի հետևենք Քեզ,
Պաշտելիդ մեր Յիսուս.
Դու մեզ համար շատ թանդ ես,
Պաշտելիդ մեր Յիսուս։
Մանկան պէս ուրախ ենք, Տէ՛ր,
Որ կասկած չ՛ունի դեռ.
Թող միշտ վայ՛լենք աստ Քո սէր,
Պաշտելիդ մեր Յիսուս։

2.

Քո խօսքով մենք ուրախ ենք,
Պաշտելիդ մեր Յիսուս.
Քո Հոգւով միշտ անվախ ենք,

Պաշտելիդ մեր Յիսուս։
Ուր որ ղըրկես կը գընանք,
Ուր լինես, այնտեղ կըգանք.
Դու մեր լոյսը, Դու մեր կեանք.
Պաշտելիդ մեր Յիսուս։

3.

Մեզ տըւիր կեանքդ աննըման,
Պաշտելիդ մեր Յիսուս.
Մենք Քոնըն ենք, յաւիտեան,
Պաշտելիդ մեր Յիսուս։
Շուտով քեզ երկընքում վերն
Պիտ՝ բերենք մեր երգերն.
Պաշտենք քեզ, պատմենք Քո սէրն,
Պաշտելիդ մեր Յիսուս։

Ե Ր Գ 51.

Աստուած և Հայր, պաշտում ենք Քեզ,
Որ Որդւոյդ մէջ յայտնըւեցար.
Ներկայութեանդ մէջ ցնծում ենք,
Իր կատարած գործի համար։
Խոնարհւում ենք Քո առաջին,
Յաւիտեանըս ես Դու նոյնը.
Երկըրպագում ենք սըրտից Քեզ,
Օրհնում ենք Քո սուրբ Անունը։

Ե Ր Գ 52.

1.

Մրչափ ուրախ ենք որ օրհնեալն
Աստուած,
Իր Հայրական սէրն առ մեզ է յայտնած.
Այս պատգամն ունենք մենք Սուրբ
Գրքին մէջ,
Թէ Յիսուսը մեզ սիրում է անվերջ։
Յիսուսը մեզ սիրում է անվերջ,
Մեզ սիրում է, մեզ սիրում է,
Յիսուսը մեզ սիրում է անվերջ,
Այո՛ մեզ, այո՛ մեզ։

2.

Մենք պարտական ենք շատ սիրելու
Նրան,
Քանզի Նա մեր տեղ մեռաւ խաչի
վրան.
Վըկայ են արիւնն և ջուրն կողահերձ,
Թէ՛ Յիսուսը մեզ սիրում է անվերջ։

3.

Իջնելով Հոգին մեր սըրտերին մէջ,
Սըփռած է առատ՝ Աստ՛ծոյ սէրը մեծ.
Հընչում են Նըրա շեշտերն մերձ ընդ
մերձ,
«Տէր Յիսուսը ձեզ սիրում է անվերջ»։

4.

Շուտով պիտի գայ օրհնեալ ժամանակն,
Երբ կ՚երգենք վերը սիրոյ յաղթանակն.
Ա՛յնտեղ կը լինի սա մեր երգը պերճ,
«Տէր Յիսուսը մեզ սիրում է անվերջ»։

ԵՐԳ 53.

1.

Դու ես Բանը յաւէժակաց,
Հօր միածին Որդին.
Աստուած մարմնում յայտնի եղած,
Երկնից բուն Սիրելին։
Գառն Աստուծոյ միշտ կենդանի,
Ամեն փառքի ես արժանի։

2.

Քեզանում Հայրն արտայայտուած,
Փայլում է գերազանչ.
Դու ամենի վրայ Աստուած,
Երգում ենք քեզ սրրտանց։
Գառն Աստուծոյ միշտ կենդանի,
Ամեն փառքի ես արժանի։

3.

Աներևոյթ և՝ անպատում
Էակին ես պատկեր.
Անեղծ լոյսի Դու ճաճանչում,
Փառքում կաս գեր ՚ի վեր։

Գառն Աստուծոյ միշտ կենդանի,
Ամեն փառքի ես արժանի։

4.

Զորհուրդներդ են վեր՝ արարած
Ամեն մըտքից որ են.
Հայրն միայն Քո գիտէ փառաց
Արժանիքներն ամեն։
Գառն Աստուծոյ միշտ կենդանի,
Ամեն փառքի ես արժանի։

5.

Երկրպագուք, ով Տէր, վերը
Քեզ մօտ են օրհնըւած.
Որի վրայ Հօր անճառ սէրը՝
Ա՛րդ հանգիստ է առած։
Գառն Աստուծոյ միշտ կենդանի,
Ամեն փառքի ես արժանի։

6.

Երանութեան տիեզերքի,
Դու կետրոնն ես, Արև.
Այս անվերջ նիւթն է օրհներգի,
Սուրբ Աթոռիդ առջև—
«Գառն Աստուծոյ միշտ կենդանի,
Ամեն փառքի ես արժանի»։

ԵՐԳ 54.

1.

Եկէ՛ք, հաւատացեա՛լք,
Ցընծմամբ և՛ յաղթութեամբ.
Ո՛հ եկէ՛ք, ո՛հ եկէ՛ք, դուք խոնարհ և՛ հեզ,
Ծըռեա՛նք Նըրա մօտ որ խաչն մեզ
համար կըրեց։
Նըրան մենք երկըրպագենք (3 անգամ)
Քրիստոս մեր Տէրն։

2.

Նա է փառաց Արքան,
Իշխան ամեն տէրանց.
Նա հանգչել չըխորշեց մըսուրին միջում,
Ճըշմարի՛տ Աստուած է, յաւիտենից
նոյնը։

3.

Աղէ՛, երգե՛նք Նըրան,
Հոգւով սիրապատար.
Յաղթական գովութեանց լըսել տանք
ձայները՝
Յաւիտեանըս օրհնեալ մարմնացեալ
սուրբ Բանին։

4.

Յիսո՛ւս, Քեզ ունենք միշտ,
Մեր Բարեխօս՝ Հօր մօտ.

Դու մեռար, յարեար, և համբարձար
փառքով,
Քեզ լինի՛ ամեն փառք, գոհութի՛ւն
և՛ պատի՛ւ։

ԵՐԳ 55.

1.

Ամենօրհնեալ Փըրկիչ և Տէր,
Ի՞նչ քաղցր է Քո շընորհք.
Ոչինչ բարձր է որպէս Քո սէր,
Անհուն է Նըրա խորք։

2.

Քեզ բիւրաւոր ունենք պատճառ՝
Միշտ փառք ասելու, Տէր.
Որ տըւիր մեզ շընորհք, հանճար,
Ճանաչելու Քո սէր։

3.

Փափագում ենք միշտ սըրտագին՝
Օրհնել Փրկիչըդ հեզ.
Քանզի, ո՛վ Տէր, մեռար անգին
Արեամբդ գընելու մեզ։

4.

Ուստի մենք էլ երգում ենք ա՛րդ,
Երգեր սուրբ օրհնութեան.
Փառք և՛ գովե՛ստ, Տէր, Քեզ է պարտ,
Հիմա և՛ յաւիտեան։

ԵՐԳ 56.

1.

Երբ խաւար գիշերն անցնի և գընայ,
Եւ ծագի պայծառ լոյսն առաւօտեան,
Պիտ՝ Յիսուսից մեր հոգին լիանայ,
Եւ Նըրա սիրուց յաւերժ թարմ մընայ.
Օ՜հ, ինչ երկնային վըսեմ տեսարան,
Այնտեղ մեր հոգին կը հանգըստանայ։

2.

Երբ կեանքի հոգսեր իսպառ գըտնեն
վերջ,
Եւ մենք երկընքում մէկտեղ
բընակուենք,
Ո՛ւր օրհնեալ Փըրկչին մեր կըլինինք
մերձ,
Եւ մահից էլ միշտ աներկիւղ և զերծ,
Օ՜հ, Նըրա սէրըն ինչպէս կը գովենք,
Յաւիտենական գարերում անվերջ։

3.

Անդ չըկայ ո՛չ ցաւ, ո՛չ մահ, և ո՛չ սով,
Վերը երկնային մեր սուրբ քաղաքում.
Անդ Գառն կըսօնէ հարսանիք փառքով,
Անդ Իր արժանիք կ՝երգենք բարձրագով.
Այնտեղ կ՝ունենանք մենք անվերջ
ցընծում,

Եւ կ՝ապրենք մէկտեղ հանգիստ՝
ապահով։

4.

Բեհեղեայ ըզգեստ և զարդ պատուական,
Մարգարտից մանեակ և՝ ոսկէ պըսակ.
Իր հարսին կըտայ երկնային փեսան,
Իբրև վարձ Նըրա հաւատարմութեան.
Այնտեղ կը տեսնէ հարսը շարունակ,
Իրեն փեսային երեսն անընդմիջակ։

5.

Յիսուս, օգնիր մեզ որ չըթուլանանք,
Այս մեր երկնային ճանապարհի վրայ.
Բռնիր մեր ձեռքից, տար մեզ
անվրտանգ,
Թող փառքիդ համար անցկացնենք
մեր կեանք.
Դու մեր Բարեկամ, Հովիւ, Ուսուցիչ,
Քեզ յաւիտեան փառք և՝ պատիւ
կըտանք։

ԵՐԳ 57.

1.

Որ սիրեց մեզ և տըւաւ Իւր
կեանքն անգին փըրկելու մեզ,
Լըւաց մեղքերն մեր բազմաբիւր

Իր արիւնով՝ իբր Գառն հեզ.
Փառք, օրհնութիւն,
Ե՛ւ զօրութիւն,
Նըրան լինի մըշտապէս։

ԵՐԳ 58.

Եկէ՛ք օրհնենք մեր Տէրն,
Մաքուր և հեզ սըրտով.
Հրաչակենք Նըրա սէրն,
Ե՛ւ փառքը հոգեթով։
Նըրան մեր ընծայենք,
Ծանդք, իղձք, ու նըւէրներն.
Օ՜ն, սիրենք, պաշտենք մենք,
Մինչ տեսնենք Նըրան վերն։

ԵՐԳ 59.

1.

Փառք Յիսուսին, Փառք Յիսուսին,
Փառք Յիսուսին։
Վախճանն հասած է բուռն կրուին,
Մահը պարտուած է գըլխովին
Յաղթութեան գոռ երգերն լըսուին։
Փառք Յիսուսին

2.

Իր բոլոր ճիգը թափեց մահ,

Յիսուս փըշրեց նրա ուժն և ահ.
Յորդում են ձայնք ցընծման հիմա։
Փառք Յիսուսին։

3.

Երեք օրերն անցան շուտով,
Գերեզմանից յարեաւ փառքով.
Երգենք Նըրան մենք բարձրագով։
Փառք Յիսուսին։

4.

Կոտրեց, փըշրեց դժոխքի շղթայն,
Երկնից բացաւ դռները՝ լայն.
Փառք, փառք Նըրա Անուան միայն։
Փառք Յիսուսին։

ԵՐԳ 60.

1.

Միայն Քո վրայ խորհիլն, Յիսուս,
Ի՜նչ դիւր է տալ սըրտին.
Բայց Քեզ տեսնելն, օ՜հ, ինչ անուշ,
Լիացնում է հոգին։

2.

Չեն բաւական ոչ սիրտ, ոչ ձայն,
Երգել Քո սէրդ անհուն.
Չըկայ, Յիսուս, մի քաղցր հնչիւն,
Քան Քո օրհնաբան Անուն։

3.

Տըխուր սըրտին՝ Դու կենսատու
Յոյս ես և խինդ անանց.
Ա՛հ, ընկածին ի՛նչ քաղցր ես Դու,
Քեզ փընտրողին ի՛նչ գանձ։

4.

Ո՛հ Քեզ գըտնողն կ՚երջանկանայ,
Քո սէրդ պատմել ճըշտիւ.
Լեզու կամ գրիչ կ՚անկարանայ,
Բայց Քեզ սիրողն խանդիւ։

5.

Դու ես մեր միակ ցրնծութիւն, Յիսուս,
Դու մեր պարծանք միայն.
Դու նաև փառք մեր ամենուս,
Այժմ և մինչ յաւիտեան։

ԵՐԳ 61.

1.

Տուէ՛ք Տիրոջը, ով սուրբեր բոլոր,
Տուէ՛ք Նըրան միշտ փառք և զօրութիւն.
Օրհնեցէ՛ք Նըրա անունն փառաւոր,
Մատուցէ՛ք Նըրան երկըրպագութիւն։

2.

Նա կտրեց իսպառ մեր մեղքի չըղթան,
Եւ տըւաւ նոր կեանք և լոյս
փըրկութեան.

Թէ՛ երկինք, երկիր, անցնեն ամենայն,
Նըրա սէրն է միշտ նոյնը յաւիտեան։

3.

Այժմ Հօր գահն նըստած Նա թագաւոր է,
Որ զօրութիւն տայ Իըշուառ կարօտին.
Նա խաղաղութեամբ կը փառաւորէ
Իր հաւատացեալ ընտրեալ սուրբ հօտին։

ԵՐԳ 62.

1.

Հաւատացեա՛լք, եղի՛ք երգով,
Օրհնե՛նք Փըրկչին սէրն քաղցրագով.
Նա մեր անյոյս փըրկեց հոգին,
Իր սէրն է, ո՛հ, ի՛նչ կաթոգին։

2.

Թըշուառ, մենա՛կ, կորա՛ծ, ընկա՛ծ,
Տեսաւ մեզ այն Հովիւը քաջ.
Անվերջ սիրով Նա մեզ փըրկեց,
Իր սէրըն, ո՛հ, որչափ է մեծ։

3.

Աշխարհ՛ք, մարմի՛ն, և սատանա՛յ,
Թէ կանգնած են մեր ճամբի վրայ,
Նա անվրատանգ մեզ տանում է,
Իր սէրը մի՛շտ պահպանում է։

4.

Ծրբ նեղութիւնք մութ ամպի պէս՝
Որոտում են շուրջ սաստկապէս,
Նա կենում է մեզ առընթեր.
Իր սէրն է, ո՛հ, ո՞րչափ ընտիր։

5.

Շուտով պիտի սրլանանք վեր՝
Լուսոյ աշխարհն այն անբասուեր.
Երգենք յաւէտ՝ի լոյս անշէջ,
Իր սէրը մենք, երկընքին մէջ։

ԵՐԳ 63.

1.

Թող միանան ամեն
Անուններ փառաւոր,
Որ կարեն տալ մարդիկ
Եւ հրեշտակներ բոլոր,
Նըրանք պատմել չեն բաւական՝
Փըրկչին փառքերն անգուգական։

2.

Աստծոյ մեծ Մարգարէ,
Բարի պատգամ բերող.
Թըշնամեացդ դէմ եղար
Գլխաճ և համբերող.
Դըժոխք և մեղք արիր անհետ,
Մեզ հաշտեցրիր Աստուծոյ հետ։

3.

Դու մեր Քորհըրդատու,
Հովիւ, Մըխիթարիչ,
Մեր Պաշտպան և Ընկեր,
Փըրկող ամեն չարից.
Պահիր ոտքերն մեր ճամբում Քո,
Թող միշտ լինենք աչքիդ ներքոյ։

4.

Ի՜նչ քաղցր է Հովուին ձայն.
Նըրա աչերն արթուն՝
Մեզ կը պահեն յաւէտ
Իր հօտում հաստատուն.
Նա հօտին Իր կերակրում է,
Իր թևերի վըրայ կրում է։

ԵՐԳ 64.

1.

Ողջոյն Տիրոջ Օծեալին,
Մեծ Դաւ՛թի մեծ Որդւոյն.
Նա ազգերի Ցանկալին,
Ամենից գեղագոյն։
Շուտով կը գայ երկիր Նա,
Որ աշխարհն այս դատէ.
Կը չընչէ մեղքն անխընայ,
Գերիին կ՛ազատէ։

2.

Այժմ երկնից մէջ թագնըւած,
Անյայտ է աչքերից.
Բայց վեհ փառօք հագնըւած,
Կը յայտնըւէ վերից։
Նա որ ձեռքերն ամբարձած՝
Այս երկրից գընաց վեր,
Կը գայ կըրկին անկասկած՝
Որ տայ օրհնութիւններ։

3.

Ձե՛րդ շաղ կ՚իջնէ յորդահոս,
Նորահունձ խոտի վրայ.
Եւ ծաղկանց պէս սէր և յոյս,
Կը բուսանեն ճամբում Նրա։
Լերանց վրայ խաղաղութիւն,
Կընթանայ Նրա առջև.
Եւ Տիրոջ արդարութիւն,
Կը՛ յորդէ գետառև։

4.

Թագաւորներ Նրա առաջ՝
Մէկտեղ կը ծրտեն ծունկ.
Բոլոր ազգեր խոնարհած՝
Կրտան ոսկի և խունկ.
Նրա աթոռն համաստիւռ,
Կը տիրէ ամենին.
Նրան լեզուք բազմաբիւր,
Միշտ օրհնող կըլինին։

ԵՐԳ 65.

1.

Այլ ապաւէն մենք չենք ուզեր,
Բայց Յիսուսի արիւնն ու սէր.
Երբ յենւում ենք Նրա անուան,
Ապահով ենք, աներկևան։
Անշարժ վէմն է մեր յենարան,
Փառք, օրհնութիւն, երգենք Նրան։

2.

Երբ չենք տեսնում այն Դէմք սիրուն,
Նայենք Նրա շնորհքին անհուն.
Եւ երբ գոռան մըրրիկ և հով,
Մնայ խարիսխ մեր ապահով։

3.

Ամբ հոսանքից այս մութ կենաց,
Անցնում ենք Իր ուխտին յենած.
Փոյթ չէ, ցընդեն թիզ մեր յոյսեր,
Ամուր է Նա՝ մեր յոյսն ու սէր։

4.

Եւ թէ անցնենք այն ցուրտ գետից,
Մենք չենք սոսկալ մահի խայթից.
Գառին արեամբ սրբըւած արդար,
Կ՚երգենք Նրա սէրն անդադար։

ԵՐԳ 66.

1.

Յիսուս, անունդ է ցուպ և գաւազան,
Փորձանքների մէջ մի բերդ անառիկ,
Վիրաւոր սրտին համար բալասան.
Ա՛խ, թէ գիտ՚նային այդ ամեն մարդիկ։

2.

Քո անունդ է վէմ նեղութեան օրում,
Մի աշտարակ որ միշտ կայ հաստատուն,
Մի աստղ լուսատու այս նըսեմ ձորում,
Մի աղբիւր որ տայ կեանք և զօրութիւն։

3.

Ես միշտ կը գովեմ այդ վըսեմ Անուն,
Եւ բոլոր հոգւովս Տէր Քեզ կը փարիմ,
Մինչ երկընքումս տամ այդ վկայութիւն,
Թէ Դու ես Ստեղծողն իմ հաւատարիմ։

ԵՐԳ 67.

1.

Ամենիշխան Տէր և Արքայ,
Դու Ակ կենաց յաւէժակայ,
Աստուած սուրբ և անեղ.
Անմատչելի լուսում բնակուած,
Երկնից մէջ միշտ երկրպագուած,
Քեզ փառք տամք սիրագեղ։

2.

Դու Աստուծոյ կերպարանքում,
Ծածկուած էիր անհաս փառքում,
Հայր ամեն յաւիտեանց.
Ի՛սկ այժմ իբր Մարդ Դու յայտնուում ես՝
Ամենն որ պէտք են գիտել մեզ,
Փառքերդ Աստուածասքանչ։

3.

Անվերջ դարեր միշտ նոյնն ես, Տէր,
Սիրոյ Որդին Հօր՝ գերընաիր,
Ժառանգ ամեն բանի.
Բազմած աթոռն վեհ, փառացի,
Իշխանութիւնդ դեռ պիտ՚ աճի,
Լինես շատ անուանի։

ԵՐԳ 68.

1.

Գիտենք Փըրկիչն է կենդանի,
Եւ Նա իր մօտ մեզ կը տանի.
Նա որ կըրեց մեղքն ու զըրկանք՝
Կենդանի է որ տայ մեզ կեանք։

2.

Կենդանի է Նա յաւիտեան,
Մահով՝ մահի վրայ յաղթական.
Կենդանի է մեր Թագաւոր,
Բազմած փառաց աջ կողմը Հօր։

3.

Կենդանի է Նա՝ մեր Միջնորդ,
Եւ Օգնական և Առաջնորդ.
Կենդանի է, ահ, յաւէտ Նա,
Մեր Մարգարէ և՛ Քահանայ։

4.

Կենդանի է բարձունքներում,
Իսկ մօտ է մեր աղցունքներում.
Կենդանի է որ տայ մեզ լոյս,
Եւ ըսփոփանք և՛ խրատախոյս։

5.

Կենդանի է և մենք յաւէ՛տ՝
Կ՝ապրենք շնորհքով Իր փրկաւէտ.
Սա ցընծում մեր յաւիտենական—
— Գիտենք Փրկիչն է կենդանի։

ԵՐԳ 69.

1.

Հայր, սէրը Քո ճանաչեց մեզ,
Նախ քան ղրկուելն երկրի հիման.
Յիսուսին՝ նոյն սէրդ քաշեց մեզ,
Որ մենք լինենք Նրա նման.
Եւ մեզ տուաւ իրը որդիք Քո՝
Յաւէ՛տ կանգնենք աչքիդ ներքոյ։

2.

Այժմ այդ սէրը ղրկում է մեզ,

Թ՛ե տալիս մեզ ամեն բարիք.
Ամեն չարից փրկում է մեզ,
Եւ լեցնում մեր պէս պէս կարիք.
Աստուած և Հայր, երգս
օրհնութեանց,
Քեզ ձօնում ենք բոլոր սրտանց։

ԵՐԳ 70.

1.

Աստուած և Հայր մեր, մօտենում ենք քեզ,
Բուն արժանիքով Որդւոյդ սիրելի.
Ամենն որ մարդից Դու կամեցել ես,
Արտայայտուել են Քրիստոսում առլի։

2.

Նրա ամեն մի քայլն Քեզ հաճելի էր,
Եւ խորհուրդները կամքիդ համաձայն.
Դու ըսքանչացար կեանքով անձնուէր,
Մարդիկ դիտեցին, երկինք հիացան։

3.

Սակայն Նա անյայտ յաւիտեաններից՝
Քո սիրելին էր, ցընծում սրտի Քո.
Աստուածութեան մէջ Քեզ հետ էակից,
Եւ խորհուրդիդ մէջ Ընկերդ համագոյ։

4.

Հայր, գոհանում ենք Քո Որդւոյդ համար,

Որ տըւաւ Իր կեանքն որ Դու ունենաս
Քեզ երկըրպագող որդիք անհամար,
—Պըտուղ Քո սիրոյն անքընին, անհաս։

ԵՐԳ 71.

1.

Վառ փայլում է Աստ'ծոյ սէրը
Փրրկչի պայծառ երեսից.
Տէ՛ր, օգնիր մեր լապտերները՝
Պայծառ լինեն Քո լուսից։

Թող մեր լոյսը ճառագայթի
Այս փոթորկոտ ծովի վրայ,
Որ իցէ թէ խեղճ նաւորդ մի
Մահից փըրկուել կարենայ։

2.

Ամեն տեղ կայ թանձըր խաւար,
Գոռ քամին է որոտում.
Եւ շատ ճամբորդք սարսափահար,
Քո լոյսին են կարօտում։

3.

Վառ պահիր միշտ քո լապտերը
Ո՛հ, տե՛ս ծովի ելևէջ.
Լոյս տուր, որ խեղճ նաւորդները
Չը կորչեն խաւարի մէջ։

ԵՐԳ 72.

1.

Ցարաշարժ կեանքում, Տէր, Դու ես միայն՝
Մեր ապաւէնը և յոյսը պայծառ.
Երկինք և երկիր փոխուում են իսպառ,
Սակայն անփոփոխ Դու կաս յաւիտեան։

2.

Այո, Դու միշտ կաս. թէպէտ գալարուի
Անափ երկինքը մագաղաթի պէս,
Աստղեր ու արփին մաշուեն լաթի պէս,
Եւ տիեզերքը հըրալափ վառուի։

3.

Երկրածին յոյսերն վաղ կամ անագան՝
Հողմացիր միգի նըման ցընդում են.
Սակայն սըրտերն մեր բերկրում—
խընդում են
Որ անփոփոխ է սէրըդ մըշտական։

4.

Սերովբէախուռն անվիշտ երկընքում,
Քո գութ և սէրը տակաւին նոյն են.
Նոյնպէս ինքնագոհ, սուրբ, և անհուն են
Ինչպէս տանջանքի ու մահուան գըրկում։

5.

Քեզ, ով Տէր Յիսուս, կըտեսնենք շուտով՝
Գահի վրայ բազմած փառքում լուսաշող

Եւ մենք յաւիտեան սէրըդ անփոփոխ,
Սուրբերի հետ վերն կ'երգենք անթօթով։

ԵՐԳ 73.

1.

Ես գըտել եմ մի Փըրկիչ,
Փադցը ու գըթառատ.
Միշտ սիրող է, կարեկից,
Սուրբ, և անարատ.
Նա պարտքերս վըճարել է,
Հօր որդի ինձ արել է։

2.

Ես գըտել եմ մի Հովիւ,
Հըզօր, քաջարի.
Տըւաւ սիրով անհաշիւ
Իր կեանքը բարի.
Իր ձեռքով ինձ կրում է,
Օրէցօր կերակրում է։

3.

Ես գըտել եմ մի Ընկեր,
Օ՜հ, ինչ մտերիմ,
Ինքնատոհմ, և անձնըւէր,
Միշտ հաւատարիմ.
Ներան եմ ես յաւիտեան,
Փառք լինի Ներան միայն։

4.

Ես գըտել եմ մի Արքայ,
Իմաստուն և հեզ.
Շուտով իշխելու կըգայ,
Շուքով մեծատես.
Թագաւորներ Նրա առաջ,
Պիտի ծռեն խոնարհած։

5.

Դու Փըրկիչս, Հովիւս, Ընկերս,
Եւ Արքաս միայն.
Յիսուս, քեզ տամ իմ նըւէրս
Երկըրպագութեան.
Քեզ գովեստներ օրհնութեան,
Պիտի երգեմ յաւիտեան։

ԵՐԳ 74.

1.

Ով Տէր Յիսուս, քեզ սիրում ենք,
Լոկ Դու ես մեր առաջնորդ.
Քեզ գըլխովին մեր յանձնել ենք,
Հոգի, մարմին և խորհուրդ։
Հաւատաքի կեանքն է ապահով,
Անմատչելի թըշնամուն.
Հաւատացեալ սըրտին, ով Տէր,
Ի՞նչ կայ նըման քո սիրուն։

2.

Աչքից ծագում է արեգակ,

Լուսաւորում մեր ճամբան.
Ձենք մոլորուիլ բընաւ, ով Տէր,
Մինչ Քեզ ունենք օգնական։

3.

Թէ անդունդի գընանք ծայրով,
Երկիւղալի, ահաւոր.
Թէ մեծամեծ բերենք գոհեր,
Ձենք վախենալ ոչ մի օր։

4.

Ով Փըրկիչ Տէր, մեր Բարեկամ,
Դու պահող ես մեզ չարից.
Օրհնեալ կամքըդ Թող լինի մեզ,
Առաջնորդ մըխիթարիչ։

ԵՐԳ 75.

1.

Ձըկայ, Տէր, ցաւ այնքան չընչին,
Որ չը բերուի Քեզ աղօթքով.
Ձըկայ տագնապ թեթև ինքնին,
Որ չը շարժէ այն Քո գորով։

2.

Դու որ եղար ցաւոց տեղեակ,
Մեր ցաւերին անտարբեր չես.
Սէրդ որ կըրեց խաչն դըժընդակ,
Մեր հոգսերն չի անել անտես։

3.

Ձըկայ հոգու լըռին հառաչ,
Որ լըսելի Քեզ չը լինի.
Քաղցր է մեզ միշտ ամեն մի խաչ,
Երբ Քո խաչն է մեզ հովանի։

ԵՐԳ 76.

1.

Ի՞նչն է մեր հոգին փրկում,
—Միայն Յիսուս Գառի արիւնը.
Ի՞նչն է վէրքերն բըժըշկում,
—Միայն Յիսուս Գառի արիւնը։
Օ՜հ, թանգագին աղբիւր,
Լուացք մեղքերն մեր բիւր.
Տըւաւ մեզ սըրտի դիւր,
Միայն Յիսուս Գառի արիւնը։

2.

Ի՞նչն է պարտքից ազատում,
—Միայն Յիսուս Գառի արիւնը.
Ի՞նչն է Հօր սէրն հաստատում,
—Միայն Յիսուս Գառի արիւնը։

3.

Ի՞նչն է մեր պաշտպանողը,
—Միայն Յիսուս Գառի արիւնը.
Ե՛ւ մեզ յաղթող անողը,
—Միայն Յիսուս Գառի արիւնը։

4.

Ի՞նչն է վախերն մեր վանում,
—Միայն Յիսուս Գառին արիւնը.
Ի՞նչն է երկինք մեզ տանում,
—Միայն Յիսուս Գառին արիւնը։

5.

Այս մեր յոյսը յաւիտեան,
—Միայն Յիսուս Գառին արիւնը.
Արդարութեան մեր պայման,
—Միայն Յիսուս Գառին արիւնը։

ԵՐԳ 77.

1.

Կարօտ եմ, Փըրկիչ, Քեզ կարօտ,
Ինձ քաշիր, յաւէտ Քեզ մօտ.
Գիշերն եղիր լոյս շարունակ,
Ցերեկն էլ ամպի սիւնակ։
Չեմ վախիլ, ոհ, յաւիտեան ես,
Երբ շաւղիդ մէջ Դու ինձ տանես.
Հետքերիդ մէջ քալելով ճիշտ,
Ես հրճուանք կ'ունենամ միշտ։

2.

Կարօտ եմ, Փըրկիչ իմ սիրուն,
Որ հաւատքս լինի կայուն.
Թող ուղղէ ինձ Քո սուրբ պատգամ,
Որ լոկ Քո եանիցդ գամ։

3.

Կարօտ եմ, Փըրկիչ, Քեզ՝ այսօր,
Փորձութեան մէջ նորանոր.
Կեանքի պայքարին մէջ մոլոր,
Տէր, ուղիդ ընթացքս բոլոր։

4.

Կարօտ եմ, Փըրկիչ, միմիայն,
Սուրբ Հոգւոյդ միշտ ուղղութեան.
Մինչ ձըգեմ այս մարմնի խորան,
Մըտնեմ վերին սըրբարան։

ԵՐԳ 78.

1.

Ո՛վ Տէր Յիսուս, քաղցր է Քո սէրը,
Սըրտանց Քեզ ենք ցանկանում.
Բոլոր հոգի, շունչ, մարմին մեր,
Միայն Քեզ են պատկանում։

2.

Դու Փըրկիչ մեր գըթած ու հեզ,
Չես բնաւ մերժում ոչ ոքի.
Միայն թէ մարդ խոնարհուի Քեզ,
Եւ Քո առջև ծունկ չոքի։

3.

Օ՛ր սիրելի, օ՛ր փառաւոր,
Երբ եկանք մենք Տիրոջ մօտ.

Հինըն անցաւ, ծագեց նոր օր—
Ապագան մեր չէ ազօտ։

4.

Ո՛վ Տէր, օգնիր լինենք ըզգաստ,
Աղօթքի մէջ յարատև.
Որ ըսպասենք կազմ ու պատրաստ,
Քեզ միշտ յուսով անդեղև։

5.

Ճեղքուած կողումդ միշտ մեզ պահիր,
Անդըրդուելի Դու մեր վէմ.
Տուր շնորհք շնորհքի տեղ անխըտիր,
Մինչ տեսնենք Քեզ դէմ առ դէմ։

ԵՐԳ 79.

1.

Քեզ գալիս եմ, Փըրկիչ Յիսուս,
Մեղք—վէրքերովս սըրտիս յամառ.
Ջի Դու կարես միակդ իմ յոյս,
Բուժել վէրքերն իմ անհամար։

2.

Լ՛ոյս իմ Յիսուս, այս աշխարհում,
Լեր ուղեցոյց իմ, միշտ ինձ մերձ.
Որ հետքերիդ ճանապարհում,
Առաջնորդես ինձ մինչ ՚ի վերջ։

3.

Ընդունիր ինձ, Հովիւդ իմ քաջ,

Բազկացրդ մէջ, որպէս ոչխար.
Այնտեղ հոգիս մընայ հանգչած,
Իր յոյզերից բազմաչարչար։

4.

Ծո՛յս իմ Յիսուս, գալիս եմ Քեզ,
Ինձ չես թողել Դու բընաւին.
Սիրտս լեցրել է սէրդ հոգեկէզ,
Քոնն եմ, ո՛վ Տէր, ես գըլխովին։

ԵՐԳ 80.

1.

Տէր Յիսուսի խաչին տակ՝
Առնում եմ ես կայան.
Ե՛ւ աշխարհումն այս աւերակ,
Գըտնում եմ ապաստան։
Սա մի տուն է անապատում,
Եւ մի տեղ հանգըստեան.
Երբ կէս օրուայ շոգն է նեղում,
Եւ ծանրութիւնք օրուան։

2.

Ո՛վ իմ Ամրոց բարձրաշէն,
Եւ խաչի անարգ սիւն,
Պատուանդանումդ միանում են
Սէրն և արդարութիւն.
Ասա տեսնում եմ ինչպէս Յակոբ,

Մի սանդուղք հաստատուած.
վեր եմ ելնում սրտատրոփ,
Օրհնում փառացն Աստուած։

3.

Այս խաչի շուքի տակ
Մահը չ'ունի խայթոց.
Խաչի խօսքն է մեր վառ ճրագ,
Լոյս է տալիս մարդոց։
Փայտից կախուած է Խաչեալը,
Ձեռքերը տարածուած.
Նա գըրկում է մոլորեալը,
Որ տանէ առ Աստուած։

4.

Տէր Յիսուսի խաչն 'իվեր՝
Երբոր աչք եմ ուղղում,
Ես տեսնում եմ ի՜նչպիսի սէր
Ունիմ իմ Յիսուսում.
Երևում են աչացս առջև,
Երկու մեծ հրաշալիք—
Մէկն է Իր մեծ սիրոյ պարգև,
Միւսն էլ իմ մեծ չարիք։

5.

Ինձ շուքն, ով խաչափայտ,
Զովացնում է ինձ միշտ.
Ինձ թըշնամու չար որոգայթ,

Չէ անում անհանգիստ.
Ես չեմ վախում ճամբից փըշոտ,
Ի՞նչ կ'անէ ինձ վըտանգն.
Իմ հրպարտ ՙԵսՙ-ն է իմ ամօթ,
Եւ Ինձ խաչն իմ պարծանքն։

ԵՐԳ 81.

1.

Թէ լինէի ես մի շուշան՝
Կանաչ դաշտում Սարօնի,
Կը բուրէի Ինձ սէրն միայն,
Ծաղկանց միջում գեղունի։

2.

Թէ լինէի ես մի սոխակ՝
Լիբանանի անտառում,
Երգով անվերջ ո՛ւ ներդաշնակ՝
Սէրդ կ'երգէի անպատում։

3.

Թէ լինէի ես մի աղբիւր՝
Այս կեանքի ճանապարհին,
Կը բղխէի սէրդ սըրտաբիւր՝
Բոլոր ծարաւ սըրտերին։

4.

Թէ լինէի ես մի գըրիչ՝
Մեծ բանաստեղծի ձեռքում,

Յայնժամ միայն ես Քո սէրից՝
Կը խօսէի անդադրում։

5.

Թէ՛ լինէի ես մի հռետոր՝
Յափըշտակող մրտքեր բիւր,
Քո սէրդ լեզուով բազմայորդոր՝
Կը պատմէի ամենուր։

6.

Թէ՛ լինէի ես մի հրեշտակ՝
Վերն երկընքում փառահեղ,
Քեզ յաւիտեան հոգւովս համակ՝
Կը պաշտէի սիրագեղ։

7.

Թէ՛ հազար կեանք ունենայի՝
Այս աշխարհի վրայ ունայն,
Հազարն էլ Քեզ ձօն կը տայի,
Ո՛վ իմ Փըրկիչդ աննըման։

ԵՐԳ 82.

1.

Վէմդ դարաւոր՝ կողահերձ,
Շնորհքն է առած մեզ Քո մէջ.
Բացուած կողիդ այն առատ
Ջուրն և արիւն անարատ,
Կան մեզաց մեր կըրկին բոյժ,
Ջընջելով հեաքըն և ոյժ։

2.

Դարող չէր մեր գործ կամ ջանք՝
Կատարել այն սուրբ պահանջք.
Թէ միշտ վառէր մեր նախանձ,
Վազէր արցունք աննահանջ,
Կարող չէին քաւել մեղք,
Այլ լոկ արեանդ սուրբ հեղեղք։

3.

Դու մեզ յաւէտ փրկարեցիր,
Քաշար սիրովդ շնորհաձիր.
Արդարութիւն մեր եղար,
Շընորհք առատ մեզ հեղար.
Մեզ արիւնովդ լըւացիր,
Կեանք շնորհեցիր երկնաձիր։

4.

Մինչ վաղանցուկ շունչս շընչենք,
Եթէ մահով մենք նընջենք,
Քո հրամանով կ՚ելլենք, Տէր,
Գընալ Քեզ հետ երկինք վեր.
Այնտեղ Քո սէրն անվախճան,
Երգել յաւէտ բարձրաձայն։

ԵՐԳ 83.

1.

Քո կեանքը, Տէր, տըւիր
Մեր փըրկութեան համար.

Արիւն Քո հեղեցիր,
Շնորքով սիրապատար։
Քո կեանքը, Տէր, տըւիր յօժար,
Իակ մենք ինչ քեզ համար։

2.

Լուսոյ Հօր օթևան՝
Թողիր եկար աշխարհ.
Փառաց գահի փոխան,
Ծառայի պէս եղար։
Ամեն բան Դու թողիր յօժար,
Իակ մենք ինչ քեզ համար։

3.

Կրեցիր փուշի պըսակ,
Ցաւ տառապանք և ահ.
Խմեցիր դառըն բաժակ,
Հնազանդ մինչև ի մահ։
Ո՛հ, այդ ամենն կրեցիր յօժար,
Իակ մենք ինչ քեզ համար։

4.

Արդ մեզ Քո փըրկութիւն,
Առատ պարգևել ես.
կեանք և խաղաղութիւն,
Բաշխել ձըրիապէս։
Դու ամեն բան տըւիր յօժար,
Իակ մենք ինչ քեզ համար։

5.

Քոնն ենք, ով Տէր, մեր կեանք,
Հոգի, մարմին և միաք.
Նոյն՝ մեր ամեն վայրկեանք,
Եւ ըսաացուածք և իղձք։
Դու Քեզ տըւիր սիրայօժար,
Մենք էլ քոնն ենք իսպառ։

ԵՐԳ 84.

1.

Անհուն սիրովդ ի Գողգոթա,
Ո՛հ խաչուեցար, Տէր մեր Յիսուս.
Արիւնդ հեղուեց խաչի վըրայ,
Մեզ շնորհեցիր ներում և լոյս։
Ով Գողգոթա, վհն Գողգոթա,
Գառին արեան եղար վըկայ.
Ո՛վ Գողգոթա, սուրբ Գողգոթա,
Փըրկչին մահուան եղար վըկայ։

2.

Ժայռերն պատռան, արևն սևցաւ,
Երբ խաչի վրայ մեռաւ Յիսուս.
Մինչ մահովն Իր յաղթանակաւ
Ազատեց մեր հոգին անյոյս։

3.

Տէր մեր Յիսուս, ով Սէր անճառ,
Ի՜նչ գառն տառնապ խաչին վըրայ,

Ո՛հ, կըբեցիր Դու մեզ համար՝
Երբ խաչուեցար ՚ի Գողգոթա։

ԵՐԳ 85.

1.

Փառաւորեա՛լ Աստուածորդի,
Աղբիւր սիրոյ, կեանք Քո հօտի,
Քեզ գմայլում ենք սիրով սըրտի,
Ո՛վ պաշտելի Տէր մեր Յիսուս։

2.

Ո՛հ, ինչ սիրով համբերատար,
Յըմեցիր դաւն բաժակն խպատ.
Քեզ կ՚օրհներգենք մենք անդադար,
Ո՛վ անեըման Տէր մեր Յիսուս։

3.

Դու սուրբ արիւնդ հեզար անգին,
Ե՛ւ փըրկեցիր մեր խեղճ հոգին.
Ուստի մենք Քոնն ենք գըլխովին,
Ո՛վ կենսատու Տէր մեր Յիսուս։

4.

Օ՛հ, կ՚ուզենք միշտ յիշել Քո սէր,
Նայել ղէմքին Քո անըստուեր,
Սիրել՝ պաշտել Քեզ անձնըւէր,
Ո՛վ մարդասէր Տէր մեր Յիսուս։

ԵՐԳ 86.

1.

Գառն Աստուծոյ, սուրբ արիւն Քո՝
Քաւող է մեղսալոյծ,
Մինչև ամէն սուրբ Աստուծոյ,
Փըրկուէ մեղանչելուց։

2.

Շուտով կ՚օրհնենք Քս վեհ Անուն,
Վերին սըրբաբանում.
Ուր չըկայ մահ, տըկարութիւն,
Բայց անպայման խընդում։

3.

Հաւատում ենք մեզ համար, Տէր,
Թէև ենք անարժան,
Արեամբդ գընել ես քընարներ,
Երգել քեզ յաւիտեան։

4.

Ի՜նչ քընարներ Աստուածակերտ,
Ձըքնաղ և քաղցրաձայն.
Պիտի հընչեն Անուանդ անթ,
Դարերում անվախճան։

ԵՐԳ 87.

1.

Երգենք Նըբան գովեստ ամեն,
Ո՛ր մահացաւ խաչի վըրան.

Ցոյս կորածին — մարդիկ ծաղրեն,
Մենք կը զոհենք աշխարհ Նըրան։

2.

Աչքին վըրայ փայլուն գըրուած՝
Մենք տեսնում ենք, «Աստուած Սէր է»։
Բերաւ մեզ շնորհք Գառն անարգուած,
Ինչ որ ամեն մըտքից վեր է։

3.

Նա վեր առաւ մեր մեղքն խպտուռ,
Նա թոյլ հոգին է բարձրացնում.
Մութ օրն անում է լուսավառ,
Եւ դառն բաժակն է քաղցրացնում։

4.

Որախանում է երկնոտ հոգին,
Անզօր սիրտը յուսաւորում,
Ջրնջում երկիւղ գերեզմանին,
Մահուան մահիճն լուսաւորում։

5.

Ո՛վ Տէր, Դու ես դարման ցաւին,
Սիրոյ չափըն և գրաւական,
Աղբիւրանոս վէմ՝ ծարաւին,
Վերն գովութեանց մեր առարկան։

ԵՐԳ 88.

1.

Եղբայր ենք մենք, որդիք մի Հօր,
Յօդուած Նըրա սիրով հըզօր.
Գընուած արեամբն ենք Գառնուկին,
Կընքուած Հոգւովն սուրբ խոստմունքին։

2.

Եղբարք, յիշենք զոհն խաչի վրայ,
Որ զենուեցաւ 'ի Գողգոթա.
Այն Աչեալի սիրոյն միայն,
Կեանք մեր լինի ձօն յաւիտեան։

3.

Կայ անուն մի այնքան սիրուն,
Քան անձկալի Յիսուս անուն.
Կայ մի հաւատք, ոհ, կենդանի,
Որ հաւատքին մեր նըմանի։

4.

Կայ մի էակ այնքան հըզօր,
Քան մեր Յիսուսը փառաւոր.
Կայ, ոհ, մի կեանք շատ ցանկալի,
Քան մեր Փըրկչին կեանք սըքնաքալի։

5.

Եւ ինչ կայ քնաւ այնքան պայծառ՝
Քան Նըրա խաչն վեհ ու անճառ,
Որի լուսից ամենազառն,
Փարատւում է մեղքի խաւարն։

6.

Ահ, չըկայ մի լոյս գօրաւոր,
Քան Արուսեակը փառաւոր.
Կամ թագաւոր յաղթող այնքան,
Քան Թագաւորն արդարութեան։

7.

Բոլոր ազգերը խոնարհած՝
Պիտի ծըռեն Ներա առաջ,
Թագաւորներ երկրի վըրայ՝
Կը հպատակուեն ներքոյ Ներա։

8.

Շուտով Ներա ոտից մօտ մենք՝
Պիտի ձըգենք մեր պըսակներն,
Ներան սիրենք, պաշտենք, գովենք,
Անվերջ գարեր երկընքում վերն։

ԵՐԳ 89.

1.

Երբ մենք կապուած վիրաւոր,
Ընկած էինք խեղճ, անգօր,
Առաւ իր մօտ մեզ Յիսուս,
Յաւարն փոխեց մեր 'ի լոյս։

2.

Կարէ՞ զգըրել անձնըւէր՝
Դէպ իր որդին, մօր մի սէր.

Այո, գուցէ Նա մոռ'նայ,
Իսկ Տէրը մեր նոյն մընայ։

3.

Անփոփոխ է Ներա սէրն,
Բարձր քան երկնից բարձունքներն.
Քան անդունդներն խոր, անհուն,
Հըզօր իբր մահ՝ ջինջ, բեղուն։

4.

Շուտ կը տեսնենք փառք Տիրոջն,
Երբ լըրանայ շնորհքի գործն.
Վերն իր գահին ենք հաղորդ,
Սա իր սիրոյ վեհ խորհուրդ։

5.

Այս է գանգատ մեր, ո՛վ Տէր,
Որ թոյլ տըկար է մեր սէր.
Իսկ սիրում ենք, պաշտում Քեզ,
Տուր շնորհք սիրենք հոգեպէս։

ԵՐԳ 90.

1.

Փըրկիչն արաւ ողորմութիւն,
Երբ մենք կորած էինք անյոյս.
Նա ցոյց տըւաւ իր սէրն անհուն,
Փըրկեց մահիցը դառնայոյզ։
Ուստի մենք է՛լ ողորմութեան,
Պիտի երգենք փառք յաւիտեան։

Արժան որդիք մենք բարկութեան,
Տէր Յիսուսից չընորհք գըտանք.
Նա կոտրատեց մեղքի շղթան,
Եւ ջընջեց մեր բոլոր յանցանք։
Ո՛վ կատարեց այս գըթութիւն,
Ողորմութիւն, ողորմութիւն։

3.

Էմմանուէ՛լ Աստուած մեր Տէր,
Պիտի պատմենք ողորմութիւնդ,
Որ Քեզ գառնան մեղաւորներ,
Պատուեն օրհնեալ վեհ սուրբ անունդ։
Տըրամեալք պիտի ուրախանան,
Ողորմութիւնդ երբ հասկանան։

4.

Վարիր մեզ Դու, 'ի մէջ կենաց,
Ո՛վ պայծառ Աստղ առաւօտեան.
Քո խոստումնքին ապաւինած՝
Ըսպասում ենք Քո յայտնութեան։
Որ գահիդ մօտ մենք յաւիտեան։
Փառք երգենք Քո ողորմութեան։

ԵՐԳ 91.

1.

Քո սէրդ մըթէ, Յիսուս, մոռ՛նանք,
Բընաւ չըյիշենք՝ Քեզ,

Որ մեր կրեցիր բոլոր յանցանք,
Անվերջ սիրելով մեզ։
Քո վըշտալից կեանքը մոռ՛նանք,
Քըրթինքդ արեան նըման,
Քո խաչն, Քո ցաւ, Քո չարչարանք,
Քո մահն, և գերեզման։

2.

Գեթսեմանին ինչպէս մոռ՛նանք,
Աղօթքըդ անձնըւէր,
Գոչումդ ուժգին և զարհուրանք,
Եւ լաց Քո գառնավէր։
Փուշից կըրածդ սըրակն մոռ՛նանք,
Թուքերն և ապտակներն.
Քեզ պատեցին դժոխքին խուժանք,
Երկիր մերժեց Քո սէրն։

3.

Ո՛հ, Քո չնորհքի գաղտը յիշատակն՝
Մեզ քաղցրագոյն լինի,
Եւ մեր սըրտի մինչև յատակն,
Լուսավոր փայլուն լինի։
Կեանքի ցընծուքն մենք կըմոռ՛նանք,
Նաև աշխարհ համայն,
Բայց չենք մոռ՛նալ Քո սէրն, Քո կեանք,
Բընաւ մինչ յաւիտեան։

---

101 Երգարան

ԵՐԳ 92.

1.

Ե՛րբ դիտում ենք, Աստուած, անվերջ
Ողորմութիւնդ համայն,
Ընկերզուում ենք ցընծութեան մէջ,
Սիրոյ և հիացման։

2.

Ընդունում ենք անթիւ շնորհքներ,
Ամէն օր Քեզանից։
Բայց շնորհակալ սրտերն են մեր
Պարգև մեծ ամենից։

3.

Բոլոր կեանքում պիտի երգենք՝
Տիրոջը սէրն գըթած,
Մինչ վերն կըրկնենք և նոյնը մենք
'ի մէջ երկնից փառաց։

4.

Ուրախ երգեր Քեզ յաւիտեան,
Պիտի երգենք, ով Տէր.
Անթիւ դարեր չեն բաւական՝
Փառաբանել Քո սէր։

ԵՐԳ 93.

1.

Յիսուս մեղքի քաւիչ եղաւ,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի,
Իր սուրբ արիւնը Նա հեղաւ,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի։
Ո՛հ, ինչ հիանալի,
Փըրկիչ մեր Յիսուս,
Ո՛հ, ինչ հիանալի,
Փըրկիչ մեր և լոյս։

2.

Օրհնում ենք սուրբ Անուդ յաւէտ,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի,
Մեզ հաշտեցրիր Աստուծոյ հետ,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի։

3.

Մեր Բարեկամն ես մըտերիմ,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի,
Միշտ մընանք Քեզ հաւատարիմ,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի։

4.

Մեր սիրտ ու սէրն Քոնն է խապար,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի,
Մեզ ընաւ հրապոյր չ'ունի աշխարհ,
Ո՛հ, Փըրկիչ հիանալի։

ԵՐԳ 94.

1.

Սիրում ենք Քեզ, ո՛վ Տէր,
Հոգւով Քեզ պաշտում ենք.
Քեզմով հանգիստ են մեր սրտեր,
Քեզմով կեանք ունենք մենք։

2.

Քո քաղցրը սէրդ անխախտ,
Անճառ է յաւիտեան.
Ո՛ւր ներկայ ես այնտեղ է դրախտ,
Ուր չես՝ դժոխք միայն։

3.

Թո՛ղ զըւարթնոց հնչեն՝
Քընարք միշտ քաղցրապէս,
Երկինք այնտեղ կոչելու չեն՝
Եթէ Դու ներկայ չես։

4.

Եւ սիեզերք համայն՝
Բընաւ չեն բաւական,
Ոը առանց Քո ներկայութեան՝
Դէ՛թ մի հաճոյք մեզ տան։

5.

Սիրոյ ծովն աննըման,
Անհուն է, անվախճան.
Դու ես, Տէ՛ր, մեր կեդրոն ցընծման,
Եւ մեր սըրտից շըրջան։

ԵՐԳ 95.

1.

Շընորհք, քո՛նչ անուշ ձայն,
Մեր սըրտերի համար.
Երկինքը միշտ քո՛ղ կըրկնէ այն,
Երկիրն լըսէ յօժար։
Ո՛հ, շնորհք Փըրկչական,
Երգ սիրայարմար,—
«Քեզ սուրս մեռաւ վասն մարդկան,
Մեռաւ հէնց մեզ համար»։

2.

Շնորհքը կեանքի գըրքում՝
Անուանքը մեր գըրեց.
Եւ մեզ Գառին օրհնեալ գըրկում
Հանգըստութիւն շնորհեց։

3.

Շնորհքը մեզ սուրբ փառաց,
Երկնից արաւ ժառանգ.
Եւ մենք քանի գընանք յառաջ,
Շնորհքով կը զօրանանք։

4.

Շնորհքը մեզ յարաժամ
Աղօթել սորվեցուց,
Եւ մեզ կապեց յօժարակամ,
Մեր Փըրկչին հետ անլոյծ։

5.

Քո շնորհքը տուր, ո՛վ Տէր,

Լինի մեզ պահապան.
Եւ մենք սըրտից Քեզ անձնըւէր,
Լինենք միշտ օրհնաբան։

ԵՐԳ 96.

1.

Արքայն սիրոյ է հովիւ մեր,
Մենք մէկ բանի կարօտ չենք.
Ի՜նչքան ուրախ են մեր սըրտեր,
Մինչ Նա մերն է, Իրենն մենք։

2.

Իր կըրծքին վրայ մեզ Նա կրում է,
Որպէս հանդարտ ջըրի մօտ.
Եւ հոգին մեր կերակրում է,
Իր արօտում սիրայօրդ։

3.

Մենք շատ անգամ խեռ ու յիմար,
Թողել ենք Իր բարի հօտ.
Բայց Նա փընտրեց սիրայօժար,
Կըրկին բերաւ մեզ Իր մօտ։

4.

Մահուան ձորն է՛լ մեզ վախ չ՛ուներ,
Երբ Դու մեզ հետ ես, ով Տէր.
Քո գաւազանդ և ցուպդ գոնէ՛,
Մեզ նեցուկ են և ընկեր։

5.

Ո՛վ Տէր, բոլոր մեր կեանքի մէջ,
Մեզ հետ լինի Քո՛ղ Քո սէր.
Եւ Քեզ գովենք դարեր անվերջ,
Ե՛րբ այս ձորից ելլենք վեր,

ԵՐԳ 97.

1.

Երբ հաւատքով նայում ենք վեր,
Տեսնում ենք Յիսուսին.
Զրկայ Նրա պէս սիրելի Տէր,
Ամենն են փուչ և սին։
Ճեղքուած Նըրա կողքի խոցը՝
Մեր ապաւէնն է միայն.
Գորովալից Նըրա ծոցը՝
Մեր հանգիստն յաւիտեան։

2.

Մ՛էլ, թանգագին էմմանուէ՛լ,
Սիրովըդ Քո անվերջ,
Կ՛ուզենք իսպառ Քեզ նըմանուել՝
Երեսիդ լոյսի մէջ։
Թող սըրտերում մեր քանդակուած՝
Լինի Քո անունը.
Երգենք սէրըդ, մահդ անարգուած,
Եւ հեղուածդ արիւնը։

ԵՐԳ 98.

1.

Տէ՛ր, ժողովուել ենք Քո սուրբ անունով,
Օրհնիր մեզ այժմ Քո ներկայութիւնով.

Շնորհ՛ը որ ըզգանք թէ այստեղ ես Դու,
Վառի՛ր մեր սըրտերն Քո սիրով ազդու.
Զառի՛ր ամենևին աշխարհիս խաղաս,
Որ մահըդ պատմենք մենք արժանաբար։

2.

Մեզ տո՛ւր տեսնենք, Տէ՛ր, այժըմ փառքը Քո,
Եւ թո՛ղ միշտ փայլենք Քո աչքի ներքոյ.
Լեցրո՛ւ գութովը Քո՝ մեր սըրտերը.
Զօրացրո՛ւ մեզ, Դու մեր միայն Տէրը.
Մեր խորհուրդներըն արա հոգեշունչ,
Սըրբի՛ր մեր մարմին, և՛ հոգի, և՛ շունչ։

3.

Տէ՛ր, տուր մեզ յիշենք, ի՛ լոյս Քո դէմքի՝
Թէ յաւիտեան մենք, Քո փըրկող շնորհքի
Յաղթանիշներն ենք, նաև ըզգանք թո՛ղ
Որ շընորհքը Քո է մեզ պահպանող.
Այսպէս մենք խոնարհ և ապաս սըրտով,
Միշտ կ՛ըսպասենք Քեզ խաղաղ՝ անվըրդով։

ԵՐԳ 99.

1.

Քո սէրը, ով Յիսուս, պիտ՛գովեմ ես միշտ,
Որ վառեց սըրտիս մէջ մի սըրբազան հուր,
Քո սէրը գըտաւ ինձ, ըսփոփեց իմ վիշտ,
Դու իմը, ես Քոնը, ահա, ինչ կապ ամուր։

2.

Քո սէրը, ով Յիսուս, մըտուրիս փայլեց,
Որ խաղաս փարատէ աշխարհի խաւար.
Քո սէրը առատ է, անվախճան ու մեծ,
Մի փարոս լուսատու ամենքի համար։

3.

Դու թողիր երկինքը և իջար երկիր,
Որ բերես մեզ համար փըրկութեան պարգև,
Մի պարգև թանգագին և ոսկուց ընտիր,
Իմ սիրտը հալումէ Քո սիրոյդ առջև։

4.

Այդ սիրոյդ, ով Յիսուս, ձօնում եմ իմ երգն,
Քանի որ շընչում եմ այս երկրի վրան.
Իսկ երբոր կը հասնեմ լուսեղէն եզերք,
Պիտ՝ հընչէ իմ երգը չըրերի նըման։

ԵՐԳ 100.

1.

Մեր կեանք, մեր սէր, պատկան են Քեզ,
Գողգոթայի Գառնուկըդ հեզ,
Որ մահուամբդ կեանք տըւիր Դու մեզ,
Յիսուս Փըրկիչ մեր և Աստուած։

Պիտի ապրենք լոկ Քեզ համար,
Որ խաչին վրայ վասն մեր մեռար.
Քաւելով մեր մեղքն անհամար,
Յիսուս Փըրկիչ մեր և Աստուած։

2.

Անմեղ էիր և անարատ,
Մեղքի պատիժն առար վըրադ.
Դու զոհ եղար և մենք ազատ,
Յիսուս Փըրկիչ մեր և Աստուած։

3.

Բի՛ւր փառք յաւէտ Քեզ, ով Փըրկիչ,
Մեռար մեր տեղ յօժար կամքից.
Աբիր լոյսիդ մեզ մատնակից,
Յիսուս Փըրկիչ մեր և Աստուած։

ԵՐԳ 101.

1.

Աստուած այնպէս աշխարհն սիրեց
Մեղաւորաց յամառ,
Որ Իր Որդին Նա նըւիրեց,
Մեռնելու մեզ համար։
Ո՛հ, աննըման հրաշալի սէր,
Որ Նա մեզ կեանք բերաւ.
Յօժար կամքով Փըրկիչն մեր Տէր,
Գողգոթայում մեռաւ։

2.

Այժմ հաւատքով Քեզ ասում ենք,
Փըրկիչ, Դու մեր Տէրն ես.
Քո մահիդ մէջ հանգիստ ենք մենք,
Ապաւինել ենք Քեզ։

3.

Ո՛վ Յիսուսին հաւատացողք,
Ձըլինի՛ք սըրտաբեկ.
Ինչ որ ունիք, մահ կամ դըժոխք,
Կարող չեն խլել երբէք։

4.

Ա՛րդ, երգեցէ՛ք Դուք յաղթանակ,
Ցուսով Աստ՛ծոյ փառաց.
Այնտեղ կ՛երգենք վերն շարունակ,
Փըրկչին գահի առաջ։

ԵՐԳ 102.

1.

Հեռո՛ւ, վայելք երկրի,
Յիսուս է իմս.
Զո՛ւր ձեզ յոյս ես դըրի,
Յիսուս է իմս։
Անապատով եմ գնում,
Ուր հանգիստ չեմ գըտնում,
Նրան եմ ապաւինում.
Յիսո՛ւս է իմս։

2.

Աշխարհն ինձ ինչ կ՛անէ,
Յիսուս է իմս։
Նա ինձ կըպահպանէ,
Յիսուս է իմս։
Ունայնութիւններից,
Անցաւոր բաներից,
Սիրտս հեռու կացի՛ր.
Յիսո՛ւս է իմս։

3.

Մնաք բարև երազներ,
Յիսուս է իմս.
Սին են յոյսերը ձեր,
Յիսուս է իմս։
Զո՜ւր մի՛ սիրաբս խաբէք,
Որ ինձ ձեզ հետ կապէք,
Արժէք չ'ունիք երբէք.
Յիսո՜ւս է իմս։

4.

Հեռո՜ւ, ունայնութիւն,
Յիսուս է իմս.
Բարև՜, երանութիւն,
Յիսուս է իմս։
Բարև՜, երկնից դրռներ,
Բարև՜, լոյս երեսներ,
Յիսուս է ինձ ընկեր.
Յիսո՜ւս է իմս։

ԵՐԳ 103.

1.

Քեզ գովում ենք Տէր բարերար,
Որ մեզ համար սիրով մեռար,
Մեզ տըւիր կեանք ձըրիաբար.
Փառք և գովեստ Քեզ յաւիտեան։

2.

Քո երեսից փայլում է վառ՝
Ուրախութեան լոյս փըրկարար,
Դու կրեցիր մեր մեղքերն խաչառ.
Փառք և գովեստ Քեզ յաւիտեան։

3.

Ո՜հ սըրտերը մեր պատրաստիր,
Լեցրու Հոգւովդ առաւտաձիր,
Որ միշտ երգենք սէրդ գերբնաիր.
Փառք և գովեստ Քեզ յաւիտեան։

4.

Ընկալ Աստուած, երգս օրհնութեանց,
—Պըտուղ սիրովդ օծուած շըրթանց,
Որ ձօնում ենք Քեզ այժմ սըրտանց.
Փառք և գովեստ Քեզ յաւիտեան։

ԵՐԳ 104.

1.

Կամիմք երգել Փըրկչի կեանքիցը,
Նըրա սիրոյ զօրութիւնից,
Նըրա խաչի չարչարանքիցը,
Եւ քաւչարար սուրբ արիւնից։
Երգեցէ՛ք Փըրկչի կեանքիցը,
Նըրա սիրոյ զօրութիւնից,
Նըրա խաչի չարչարանքիցը,
Եւ քաւչարար սուրբ արիւնից։

2.

Պիտի երգենք Նըրա մեծ սէրը,
Որ դըժոխքից մեզ ազատեց.
Եւ մեր մեղքի սև շղթաները՝
Իրեն մահով Նա կոտրատեց։

3.

Պիտի օրհնենք մեր Փրկիչ Տէրը,
Ամեն բան լաւ է Նա անում.
Ըսփոփում է Նա մեր սըրտերը,
Եւ մեզ չարից միշտ պահպանում։

ԵՐԳ 105.

1.

Սէր անունը Տէր Յիսուսին,
Պահիր սըրտիդ մէջ մըշտաբար.
Զօրավիգ է Նա անյոյսին,
Սիրոյ աղբիւր է անըսպառ։

Քաղցր անունը Տէր Յիսուսի,
Լոյս երկնից է և յոյս երկրի.
Քաղցր անունը Տէր Յիսուսի,
Լոյս երկնից է և յոյս երկրի։

2.

Սուրբ անունը Տէր Յիսուսի,
Սըրտերը մեր պահել կարէ.
Որ հաւատքի, սիրոյ, յոյսի
Շընորհքներով մեզ զարդարէ։

3.

Քաղցր անունը Տէր Յիսուսի,
Մեզ քաղցրութեամբ թող տոգորէ.
Որ մեզանով Իր նարդոսի՝
Քաղցրաբեղուն հոտը բուրէ։

4.

Վըսեմ անուն Տէր Յիսուսի,
Գաշտենք Նըրան հոգւով աննենգ.
Միշտ կեանք մեր Իր սիրուց խօսի,
Եւ անուն Նրա փառաբանենք։

ԵՐԳ 106.

1.

Տէր Յիսուսին երբ նայում ենք,
Չենք տեսնում մենք այլ մի բան.
Երբ կամքին Նրա յենւում ենք մենք,
Ներշընչում ենք սէր միայն։

2.

Մենք պիտ՝ նայենք դէմքին Նըրա,
Որ չըտեսնենք այլ մի բան.
Բարձրացրու լոյս դէմքիդ մեզ վրայ,
Ուրիշ սէրեր չըքանան։

3.

Երբ Յիսուս մեզ հետ խօսում է,
Ուրիշ ձայներ չենք լըսում.

Նըրա բերնից զըմուռս, հալուէ,
Յորիսխի մեղը է հոտում։

4.

Պիտի լըսենք ձայն Քո, ով Տէր,
Թող չըլըսենք ուրիշ ձայն.
Քո կամքի մէջ թաղի՛ր կամք մեր,
Մեր իղձերը չըքանան։

ԵՐԳ 107.

1.

Մեր կեանքն է Քրիստոս,
Ե՛ւ մեզ օգուտ է մահ.
Յաչն ունի մեզ ուրախութիւն,
Եւ մեր վընասն է շահ։

2.

Այստեղ մենք պանդուխտ ենք,
Մեր տունն է վերն շինուած.
Տիրոջ շնորհքին մէջ կանգնած ենք
Իր սիրովն ենք գինուած։

3.

Ցիսուս է մեր Ընկեր,
Այս ձորի մէջ նըսեմ.
Նըրա ցաւին մասնակցելով՝
Ունենք հըրճուանք վըսեմ։

4.

Ո՛հ, երբ պիտի ծագի

Քաղցր Աստղն առաւօտեան,
Անցնի մեզաց գիշերն իսպառ,
Ցընդին ցաւք յաւիտեան։

5.

Շո՛ւտով պիտ՛ վեր ելլենք,
Տիրոջը հրամանով.
Անվերջ դարեր Իր հետ լինենք,
Օրհնըւենք նըրանով։

6.

Ի՛նչպէս իր սէրն պիտի
Երգենք մենք քաղցրաձայն.
Կ՛երկրպագենք, կը սիրենք Նրան
Դարերուա՛մ անվախճան։

ԵՐԳ 108.

1.

Թէ հանդարտ գետի պէս անցնում է
մեր կեանք,
Թէ ժանտ ալեաց հետ մարտընչում,
Ինչ վիճակ երկրի վրայ, ով Տէր, ունե-
նանք,
Քո ձեռքի մէջն ենք միշտ հանգչում։
Դու մեզ հետ ես, ով Տէր,
Քո ձեռքիդ մէջ ենք միշտ հանգչում։

2.

Թէ մեզ վրայ խըռնեն Թըշնամիք միաբան

Զըկայ մեզ երկիւղ կամ վըտանգ.
Աստուած մեզ հետ է Նա է մեր պա-
հապան
Ներան անդադար փառք կըտանք։

3.

Նա մեր մեղքերը բազմաթիւ վեր
առաւ,
Եւ խաչի վըրայ քևեռեց.
Այնտեղ ուր Փրկիչը մեր տեղակ մեռաւ,
Հեղուեց սուրբ արիւնն կողահերձ։

4.

Մեր կեանքն այժըմ մեր Տիրոջն է
պատկանում,
Ներան մենք պիտի ծառայենք.
Աշխարհում արծաթ, ոսկի չենք
ցանկանում,
Միայն թէ՛ հոգիներ շահենք։

5.

Տէ՛ր, ինձ ենք սպասում ամեն օր
սրտաբաց
Շուտ եկ, մենք ինձ ենք կարօտում.
Ո՜հ, երանելի օրն թող գայ անյապաղ.
Երբ ինձ կը տեսնենք վերն օդում։

ԵՐԳ 109.

1.

Դէմ առ դէմ, Տիրոջը հետ մենք,
Դէմ առ դէմ, ի՜նչ փառք անբաւ,
Երբ հիացած Ներան տեսնենք,
Որ սիրով մեր տեղն մեռաւ։
Դէմ առ դէմ պիտի Նրան տեսնենք,
Ամպերից հեռու շատ վեր.
Դէմ առ դէմ պիտի Նրան տեսնենք
Իր փառաց մէջ անքստուեր։

2.

Այժմ հաւատքով տեսնում ենք Ներան,
Այս ձորում խոր և նըսեմ.
Բայց շուտ կըգայ օրհնեալ օրն այն՝
Երբ կը տեսնենք դէմ առ դէմ։

3.

Ո՜հ, ինչ ցընծում, ասա Նրա ամեն
Երբ ցաւ ու վիշտ չքանան,
Ասրդ ու բորբերն հաւատարուեն,
Մութ բաներն գան երևան։

4.

Դէմ առ դէմ, Նրա հետ ընակենք,
Դէմ առ դէմ, օրհնե՜ալ վայրկեան.
Դէմ առ դէմ, Նրա սէրն հրոչակենք,
Որ սիրեց մեզ յաւիտեան։

ԵՐԳ 110.

1.

Ո՛վ Յիսուս, Դու երբ պիտի գաս,
Եւ մեր կարօտութեան վերջ տաս,
Ո՜հ, կ՚ուզենք Քո տեսնել երես,
Այնպէս լինել ինչպէս Դու ես։

2.

Ո՛վ Յիսուս, Դու սիրում ես մեզ,
Քո արիւնով լըւացել ես.
Կամենում ենք Քեզ ծառայել,
Քո մեծ սիրոյն միշտ վըկայել։

3.

Ո՛վ Յիսուս, Դու խոստացել ես,
Որ շուտ Քեզ մօտ կը տանես մեզ.
Մենք է՛լ սպասում ենք օրէցօր,
Քեզ, ով Փըրկիչ՝ մեր Թագաւոր։

4.

Ո՛վ Տէր, աշխարհս անապատ է,
Զոր ու ցամաք միգապատ է.
Ո՜հ, Քո հոգւովդ Դու մեզ լեցրու,
Ե՛ւ մեզնից գետեր բըղխեցրու։

5.

Ո՛վ Տէր, հեղի՛ր Քո սուրբ սէրը,
Վառի՛ր հուրով մեր սըրտերը.
Որ նարդոսի անուշ հոտով՝
Բոլոր տունը լեցուի շուտով։

6.

Ո՛վ Յիսուս, Էկ, սըրտից մենք Քեզ
Ցանկանում ենք կարօտակէզ.
Դու մեր պահիր ջահերը վառ,
Առաւօտեան Աստղըդ պայծառ։

ԵՐԳ 111.

1.

Փըրկչին սիրով ամենն հարկաւ՝
Կը լինի լաւ.
Շընորհ Նըրա ձըրի՛, անբաւ,
Ամենն է լաւ։
Բուժող Արիւնն ի՞նչ պատուական,
Կընքող Շընորհքն ի՞նչ անսահման,
Տէրն կարող է, և՛ ամեն բան
Պիտ՚ լինի լաւ։

2.

Թէ ցաւք խուժեն, ամենն դարձեալ՝
Կը լինի լաւ.
Մեր փըրկութիւնն է կատարեալ,
Ամենն է լաւ։
Աստուծով մեզ քաջալերած,
Քրիստոսում շատ պըտուղ բերած,
Լըցուած Հոգւովն, ամեն դիպուած՝
Պիտ՚ լինի լաւ։

3.

Կըգայ պայծառ օրն երբ ամենն՝
Կը լինի լաւ.
Կ'երգենք վըշտաց մէջ հառօրէն,
Ամենն է լաւ
Մեր Հօրը սէրն մեզ ապաւէն,
Ցխտւս կարեաց մեր Տընօրէն,
Կեանքում, մահում, վըստահ ամենն
Պիտ' լինի լաւ։

ԵՐԳ 112.

1.

Ազատ ամեն հովերից խիստ,
Ե՛ւ հոգսերից ճընշող՝ հանգիստ
Մեզ համար կայ մի տեղ անդուլ,
Ե՛ւ այն Շնորհաց Գահին է մօտ։

2.

Կայ մի տեղ ուր Փըրկչին Անուն,
Ա՛ինքան անուշ, այնքան սիրուն,
Թափուած իւղի պէսում է հոտ,
Եւ այն Շնորհաց Գահին է մօտ։

3.

Հոգեպարար, վեհ տեսարան,
Ուր սերտ սըրտեր մխացած կան՝
—Թէև զատուած—իրրև մի հօտ,
Եւ այն Շնորհաց Գահին է մօտ։

4.

Օ՛ն, արծիւի առած թևեր,
Այս մութ երկրից թըռչենք ի վեր.
Հրճուե՛նք, երգե՛նք, միշտ անպաղատ
'Ի լոյս, Շնորհաց Գահին անդ մօտ։

ԵՐԳ 113.

1.

Նայում ենք հոգւով Քեզ,
Ո՛վ զենուած Գառըդ հեզ,
Մեր Տէր միայն.
Յայտնեցիր մեզ Քո սէր,
Քաւեցիր մեղքեր մեր,
Արիր մեզ Քոնն, ով Տէր.
Մինչ յաւիտեան։

2.

Թո՛ղ Քո ընորհքդ անհուն՝
Պահէ մեզ միշտ արթուն,
Սիրովդ վառէ.
Մահուամբդ մեզ փըրկեցիր,
Ապա մեզ անխըտիր,
Հոգիդ առատաձիր,
Թո՛ղ միշտ վարէ։

3.

Բըռնիր ամենազօր
Ձեռքովդ մեզ ամեն օր,
Պահիր չարից.

Դու մեր անբաժուեր լոյս,
Սըրտերի մեր խրախոյս,
Դու մեր կեանքը, մեր յոյս,
Մըխիթարիչ։

4.

Ե՛ւ երբ այս կարճ մեր կեանք,
Աղէտք և՛ հեկեկանք,
Անցնեն համային,
Յայնժամ օրհնեալ Յիսուս,
Վերն անբաժուեր ՚ի լոյս,
Կ՚երգենք սէրդ քաղցրայոյզ,
Մինչ յաւիտեան։

ԵՐԳ 114.

1.

Ով Յիսուս, չեմ գալիս շուտով,
Կարօտ ենք մեծապէս.
Ամ՛ս, երբ պիտի Քեզ աչքերով՝
Տեսնենք ինչպէս Դու ես։
Այստեղ ուրախ ենք Քո սիրով,
Հոգւով կարօտակէզ.
Ամ՛ս, երբ պիտի Քեզ աչքերով
Տեսնենք ինչպէս Դու ես։

2.

Ե՞րբ կրհասնենք ճամբիդ վրշոտ,
Այն վայրերը ընտիր.

Ո՜հ, գընում ենք փեսային մօտ
«Ըսպիտակ ու կարմիր»։
Աշխարհն է չար և՛ փորձանուտ,
Անհաստատ և՛ պատիր.
Ո՜հ, գընում ենք փեսային մօտ
«Ըսպիտակ ո՛ւ կարմիր»

3.

Արի՛ շուտով, ո՛վ Փըրկիչ մեր,
Մի՛ ուշանա երկար.
Ցանկանում ենք Քեզ սըրտից մեր,
Թէև խեղճ ո՛ւ տըկար։
Մենք է՛լ յենուել ենք Քո խոստման,
Սա Քո պատգամը սուրբ—
«Շուտ կը գամ հարսդ իմ աննըման,
Ես չեմ թողել քեզ որբ»։

ԵՐԳ 115.

1.

«Տիրոջ հետ յաւիտեան»,
Ի՜նչ մըխիթարուԹիւն.
Մեր երաշխիքն է հանգստեան,
Կեանք և՛ անմահուԹիւն։
Անցնում ենք այժմ մենակ,
Իբրև պանդուխտ կարօտ.

Բացում ենք վրան մեր շարունակ,
Տէր, ֆեզ աւելի մօտ։
Տէր, ֆեզ մօտ, Տէր ֆեզ մօտ,
Տէր, ֆեզ աւելի մօտ։

2.

Նայում ենք դէպի վեր,
Որտեղից գայ մեր Տէրն՝
Մեզ տանելու Հօր անըստուեր
Լուսոյ օթևաններն։
Օթևանք երջանիկ,
կանչում ենք փափագով.
Ե՞րբ կը տեսնենք Նրա արժանիք,
Որ յարեաւ սուրբ փառքով։
Սուրբ փառքով, սուրբ փառքով,
Որ յարեաւ սուրբ փառքով։

3.

Եւ թէ՛ դիզուեն մեր վրայ՝
Ամպեր բազմայորով,
Զըւենք յառաջ պիտ՛ փառաց Նրա
Լուսով, միշտ ցընծալով։
Վերն չեն լինիլ ամպեր,
Էլ անապատ չը կայ.
Ա՛նդ կը լինի վայելում մեր,
Հանգիստը յարակայ։
Յարակայ, յարակայ,
Հանգիստը յարակայ։

ԵՐԳ 116.

1.

Օրհնեալ երաշխիք, իմս է Յիսուս,
Ո՛հ, այս խորհուրդըն ինչ քաղցր է հոգուս.
Փըրկութեան ժառանգ Տիրոջն եմ ես,
Իր մեծ շնորհքով ներուած ձրիապէս։
Պիտի պատմեմ Փըրկչիս քաղցր Անուն,
Ե՛ւ երգեմ միշտ Նըրա սէրն անհուն։

2.

Իրն եմ ես, Նա իմ Տէր և Արքայ,
Իր փառքն ըզգում եմ անձիս մէջ ներկայ.
Նըրա շնորհաց Յօսքը յաւիտեան՝
Իմ բերկրանքն է, իմ երգն օրհնութեան։

3.

Ես յանձնել եմ ինձ Նըրա բազկաց,
Արդ երջանիկ եմ, անվախ, անկասկած.
Իր բարութեամբ լեցուն է հոգիս.
Միակ Իր սէրը նիւթ է երգիս։

ԵՐԳ 117.

1.

Այստեղ սովորցրու մեզ,
Տէ՛ր, Քո ճամբան.
Օգնիր, իմացրու մեզ,
Տէ՛ր, Քո ճամբան։
Շնորհով մենք շրջում ենք,

Թըշնամուց նեղուում ենք,
Ուրիշը չ՚ունենք մենք.
Ծոյց տուր ճամբան։

2.

Վախի մէջ տեսնես մեզ,
Ծոյց տուր ճամբան.
Փոթորիկ ուղարկես,
Ծոյց տուր ճամբան։
Երբ մենք չը տեսնենք այն,
—Ա՛խ, յոյս չ՚ունենք մեր վրան—
Դու, Տէր, մեր օգնական,
Տար Քո ճամբան։

3.

Ամեն օր մեզ յայտնի,
Տէր, Քո ճամբան.
Ուր մեր վիճակն ընկնի,
Ծոյց տուր ճամբան։
Այս է մեր փափագը,
Որ տեսնենք Քո փառքը,
Առնենք մեր պըսակը,
Հեզ պաշտենք միայն։

ԵՐԳ 118.

1.

Տէր, գովում ենք Քո սուրբ անուն,
Որ մեզ արեամբդ գընեցիր.

Մեզ տըւեցիր Քո լուսիւն,
Ե՛ւ մեզ գործիք շինեցիր։
Լոկ անօթ ենք, լեցրու, ով Տէր,
Մեզ յաւէտ Քո զօրութեամբ.
Տուր կենդանի ջըրի գետեր՝
Մեզ՚նից բղխեն Քո անուամբ։

2.

Լոկ անօթ ենք, բայց, ով Յիսուս,
Դու մեզ զարձրու ընդունակ.
Որ մենք լինենք ճըրագ ու լոյս՝
Մարդոց համար շարունակ։

3.

Մենք դատարկ ենք, Դու մեզ լեցրո՛ւ,
Ե՛ւ թող լինենք Քո գործիք.
Մեզ ուղարկիր և՛ օծիր Դու,
Ե՛ւ դիր մեզ վրայ Քո կընիք։

4.

Օրհնիր որ մենք լինենք վըկայ,
Ե՛ւ աւետենք բերկրալից,
Թէ՛ մեզ համար մի Փըրկիչ կայ,
Որ փըրկում է կորուստից։

5.

Վառիր Հոգւոյդ կրակի բոցով՝
Մեր սըրտերը ամեն օր,
Որ Քո շնորհքը մեր միջոցով՝
Գործ կատարէ զօրաւոր։

ԵՐԳ 119.

1.

Գիտեմք, Փըրկիչ մեր բարերար,
Որ երբ էինք մեղքի տակ,
Սուրբ արիւնը Քո կենարար՝
Արաւ ձիւնից մեզ յըստակ։

2.

Մինչ Դու կրեցիր բեռը մեղաց,
Երկիւղ չ՚ունենք մենք մեղքից.
Արեանդ զընով Քոնըն եղած,
Քեզ պաշտում ենք, ով Փըրկիչ։

3.

Տէր, չ՚ունենք այլ իղձ մի, իրաւ,
Բայց տեսնել դէմքդ գեղանի.
Հիմա ունենք Հոգւոյդ գըրաւ,
Քեզ տեսնելն ինչ կը լինի։

4.

Ազատ մեղքից և՛ անարատ,
Կը լինենք միշտ վերն Քեզ հետ.
Կը խըմենք Քո շնորհքից առատ,
Ե՛ւ կ՚երգենք փառք Քեզ յաւէտ։

ԵՐԳ 120.

1.

Ե՞րբ պիտի ժողովուենք,
Վերն Փըրկչին մեր մօտ.

Որ Իր սէրն գովենք,
Ի լոյս անազօտ։
Այս չար աշխարհն մեզ միշտ՝
Միայն տալիս է վիշտ.
Ատ չ՚ունենք մենք հանգիստ,
Բընաւ յաւիտեան։

2.

Ե՞րբ սէրն պիտ՝ հեղեղի,
Իբր կենաց ջուր զուտ.
Ե՛ւ մեզ այլ չի նեղի
Զար կիրք ու խօսք սուտ։
Ամեն անձ երկընքում,
Ունի միայն ցընծում,
Զըկայ անդ դէմք տըրտում,
Բընաւ յաւիտեան։

3.

Շուտով տար մեզ Քեզ մօտ,
Դու, ով Փըրկիչ մեր.
Որ մեր աչքերն անձկոտ,
Քեզ միշտ տեսնեն, Տէր։
Ամեն ինչ քաղցր է վերն,
Մեղքի չըկայ ըստուերն,
Ջեն դադարում երգերն,
Բընաւ յաւիտեան։

4.

Շուտով վերն փըրկչին մօտ,
Գիտի մէկտեղ գանք.
Իր տեսքին անկարօտ,
Այնտեղ միշտ մընանք։
Սիրտ մեր պիտի բերկրի,
Ջերծ ցաւերից երկրի,
Ե՛ւ մեր երգ չի դադրի
Բընաւ յաւիտեան։

ԵՐԳ 121.

1.

Դու մեր օգնութիւնն ես,
Գրթառատ Տէր.
Մեզ մեղքից պահում է
Քո անհուն սէր։
Տէ՛ր, միշտ Քեզ պէտք ունենք մենք,
Գէտք ունենք ամեն ժամ.
Գահիր ներկայութեանդ մէջ
Մեզ յարաժամ։

2.

Դու մեր օգնութիւնն ես,
Մեզ մօտ մընայ.
Երբ մօտ լինես, փորձանքն
Կ՛անհետանայ։

3.

Դու մեր օգնութիւնն ես,
Ե՛ւ ապաստան.
Քեզմով ապահով ենք
Մինչ յաւիտեան։

4.

Դու մեր օգնութիւնն ես,
Առաջնորդիր,
Ե՛ւ քո սիրոյդ մրտքերն՝
Մեզ հաղորդիր։

5.

Դու մեր օգնութիւնն ես,
Տէր Թագաւոր։
Ե՛ւ մենք քո մեծ ուժովն
Ենք զօրաւոր։

ԵՐԳ 122.

1.

Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք.
Իր կամքի պէս ձեզ միշտ վարէ,
Իր ձեռքի մէջ պատըսպարէ.
Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք։
Տէրն ձեզ հետ, Տէրն ձեզ հետ,
Մինչև վերը ժողովուենք,
Իր Անուն սուրբ գովենք.
Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք։

2.

Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք.
Իր թևերով թող ձեզ կըրէ,
կենաց հացով կերակրըէ.
Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք։

3.

Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք.
Ըրբ սև ամպեր ընդ շուրջ խըռնեն,
Հրզօր ձեռքերն ձեզ վեր բըռնեն.
Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք։

4.

Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք.
Նրա սիրով միշտ վառ, զգաստ, լինիք,
Ե՛ւ Նա գալիս պատրաստ լինիք.
Տէրն ձեզ հետ մինչև կըրկին տեսնենք։

ԵՐԳ 123.

1.

Յօժար ծառայութեամբ, ո՛վ Տէր,
Տուր լինենք Քեզ խոնարհ ընկեր.
Յայտնիր սիրոյ գաղտնիքըդ մեզ,
Արա ներող, քաղցըր և հեզ։

2.

Քեզ նըմանուենք սիրով, գութով,
Թուլասիրտին շահենք փութով.

Մեզ կըրկողին սըրտանց սիրենք,
Մոլորուածին Քեզ մօտ բերենք։

3.

Յիսուս, շնորհիր մըտերմութիւնդ,
Սորվեցրո՛ւ մեզ համբերութիւնդ.
Սիրով, գործով, Քեզ հետ քայլենք,
Բարի Հոգւովդ մինչ վերջ փայլենք։

ԵՐԳ 124.

1.

Ապրիր միայն Փըրկչի համար,
Ուրիշ կեանք արժէք չ'ունի.
Տո՛ւր առաջին սէրըդ Նըրան,
Նա է միայն արժանի։

2.

Ապրիր միայն Նըրա համար,
Մի լինիր աննըպաստակ.
Գարգիր խաչի գըրօշակը,
Ո՛ւ կոչմըն է յաղթանակ։

3.

Հազարաւոր խեղճ հոգիներ
Տառապում են սիրելիս.
Ասա մի խօսք Տէր Յիսուսից,
Քանի դեռ միջոց ունիս։

4.

Պատմի՛ր միայն Ք՛ո տեսածը,
Յօսի՛ր Նըրա մեծ սիրուց.
Ասա թէ ինչ ես դու գըտել,
Յաչն արա Ք՛ո ապացոյց։

5.

Զոհուի՛ր Նըրան ամբողջովին,
Պինդ պահի՛ր Ք՛ո հաւատքը.
Հաւատարիմ մընա մինչ վերջ,
Որ ժառանգես պըսակը։

ԵՐԳ 125.

1.

Միանանք պիտ՝ մի օր վերն,
Քաղցըր օր, մի քաղցըր օր.
Այնտեղ ուր տիրում է սէրն,
Քաղցըր օր, մի քաղցըր օր։

Քաղցըր օր, մի քաղցըր օր,
Երբ հասնենք մեր հայրենիքն,
Որի կեդրոնն է Գառըն Ինքն.
Քաղցըր օր, մի քաղցըր օր։

2.

Երբ աշխարհս ձըգենք ետին,
Քաղցըր օր, մի քաղցըր օր,
Ցաւ, հառաչ պիտ՝ անհետին,
Քաղցըր օր, մի քաղցըր օր։

3.

Միանանք երբ սուրբերին,
Քաղցըր օր, մի քաղցըր օր,
Կ՝ունենանք փառքը վերին,
Քաղցըր օր, մի քաղցըր օր։

4.

Ե՛րբ անցնենք ոսկի եզերքն,
Քաղցըր օր, մի քաղցըր օր.
Պիտ՝ երգենք յաղթութեան երգն,
Քաղցըր օր, մի քաղցըր օր։

ԵՐԳ 126.

1.

Հեռուն երկիր մի փայլում է լուսագեղ,
Հաւատոյ աչքն այն տեսնում է իբր մօտից.
Ա՛նդ կը տեսնենք Փըրկչին երեսն սիրագեղ,
«Տէր Յիսուս, շո՛ւտ եկ», կանչում ենք կարօտից։

Օ՛հ, շո՛ւտ եկ, թռչե՛լով եկ,
Կարօտ ենք Քեզ, շո՛ւտ եկ.
Տէ՛ր, մի ուշանա երբէք,
Մեզ առ մօտըդ, շո՛ւտ եկ։

2.

Անդ ամենքը երջանիկ են, բախտաւոր,
Փըրկչին սէրը միշտ երգում են քաղցրաձայն,

Ձըքացել են նըրանց հոգսերն բիւրաւոր,
Ընդունել են երկնից հանգիստն
անվախճան։

3.

Անդ բազմաթիւ այն մեծ խումբը
սիրազգած,
Ընկնում են սուրբ գահին առաջ
խոնարհած,
Իրենց թագերն ղենուած Գառին մօտ
ձըգած,
Գաւմում են միշտ փառքը Նըրա մեծ
շնորհաց։

ԵՐԳ 127.

1.

Ի՞նչ քաղցր է այն միտքը
Ինձ համար շատ անգամ,
Որ օրէցօր դէպ երկինքը
Աւելի մօտենամ։

Աւելի մօտ եմ, մօտ եմ, այո,
Աւելի մօտ եմ, այսօր, այսօր։
Այո, մօտ քան երէկ։

2.

Այսօր մօտ եմ տանըս՝
Աւելի քան առաջ։
Լուսեղէն է բնակարանըս,
Այնտեղ չըկայ հառաչ։

3.

Մօտ եմ Նըրա գըրկին,
Որը բաց է ինձ միշտ.
Ե՛ւ ցաւերըս կը փարատին,
Անդ հարըր չ՚ունի վիշտ։

4.

Ա՜խ, մօտ է մեզ այն օր,
Ե՛րբ կը տեսնենք Տէրը.
Հանդէս տօնենք պիտ՚ փառաւոր,
Ե՛ւ երգենք Նրա սէրը։

ԵՐԳ 128.

1.

Ուրիշ է՛լ մեզ ի՞նչ փոյթ.
Յիսուսըն է մեզ հետ.
Մեզ սարսափ չէ ազդում,
Ո՛չ ցաւ և ո՛չ ազէտ։

2.

Ուրիշ է՛լ մեզ ինչ պէտք,
Տէրըն է մեր Հայրը.
Նրա հետ կարենք գընալ
Մինչև երկրիս ծայրը։

3.

Ուրիշ է՛լ մեզ ի՞նչ հոգ,
Քանզի մենք չենք մենակ.
Հոգին է մեզ համար
Աստուածային ճըրագ։

4.

Ուրիշ կարիք չ՝ունենք,
Տէրըն է մեր նեցուկ.
Նա մեր երգը յաւէտ՝
Այս կեանքում վաղանցուկ,

ԵՐԳ 129.

1.

Մենք երգում ենք Յիսուսին,
Որ մօտ է շարունակ.
Շարժում է սիրտն երգելու,
Լեցնում է մեր բաժակ։
Մենք երգում ենք Յիսուսին,
Աստ՛ծոյ անբիծ Գառան.
Նա եղաւ մեր փըրկութիւնն
Հեղմամբ իր սուրբ արեան։

2.

Մենք երգում ենք Յիսուսին,
Նըստելով ոտից տակ.
Յիշում ենք բարութիւնը,
Քաղցր է իր յիշատակ։
Մենք երգում ենք Յիսուսին,
Թող ալիքներն գոչեն.
Գիտ՛ երգենք Նըրա շնորհքը,
Որ է մեր ապաւէն։

3.

Մենք երգում ենք Յիսուսին,
Քանի այս խոր ձորից՝
Բայլենք երկիրն բեղմնաւոր,
Պրսակուելու Տէրից։
Ե՛ւ երբ մեր անձն ներս մրտնէ
Այն փառաւոր երկինք,
Պիտի Փըրկչին մեծ սէրը
Մենք նոր երգով երգենք։

ԵՐԳ 130.

1.

Ա՛խ, մեզ մօտ կաց, ով Տէր Յիսուս,
Գիշերն հասել՝ մութ խաւար է.
Քո քաղցրը խօսք և՛ պայծառ լոյս,
Թող երբէք մեր մէջ չը մարէ։

2.

Այս յետին չար օրերում մեզ,
Հաստատութիւն շնորհիր, ով Տէր.
Մինչ վերջն խոնարհ հոգւով և՛ հեզ,
Պահենք Քո խօսքն և՛ սուրբ պատուէր։

3.

Պահիր, ով Տէր, միշտ մեզ արթուն
Հաւատքի մէջ՝ խօսքիդ վըրայ.
Սուրբ խօսքին Քո տուր զօրութիւն,
Որ մենք լըսենք ձայնին Նըրա։

ԵՐԳ 131.

1.

Ո՛վ Հովիւ ամենակալ,
Ռահվիրայ մեր անսրխալ,
Առաջնորդիր քաղցրօրէն,
Պանդուխտներիս այս ձորէն.
Թող մեր խոնջ հոգիք ցընծան,
Երբ լսեն Քո քաղցրը ձայն—
«Պանդուխտներ յոգնած, նըկուն,
Հետևէ՛ք ինձ դէպի տուն»։

2.

Միշտ ներկայ, միշտ իրական,
Բարեկամ մեր աննըմանի,
Մի՛ թողիր անմըխիթար.
Մեզ՝ ցաւոց մէջ անհամար.
Ե՛րբ վըշտաց ալիք բաղխեն,
Ե՛ւ սըրտերն մեր նըւաղեն,
Ծօսիր ձայնովդ մեղմ, սիրուն,
«Պանդուխտներ, եկէ՛ք ’ի տուն»։

3.

Գործն ու կռիւն այս աւուրը մարտին,
Տիրոջմով երբ աւարտին,
Թէ՛ կաւից նաւն այս կեանքին,
Ծորտակուռի մօտ եղերքին.
Երբ հրաժեշտ տանք այս երկրին,
Մեր հոգիքը թող բերկրին,

’ի լուր ձայնիդ մեղմ, սիրուն,
«Պանդուխտներ, եկէ՛ք ’ի տուն»։

ԵՐԳ 132.

1.

Թէև նըւաղած՝ գընում ենք մեր ճամբան.
Տէրն է առաջնորդ, Նա ինքն է մեր պաշտպան,
Թէև տառապանք և՛ փորձանք խիստ մօտ են.
Ի՞նչ հոգ, երբ ունենք Տէրը մեզ ապաւէն։

2.

Ի՞նչպէս լըցնամուխ է ոչխարներն հօտին.
Ի՞նչպէս տանուտէր է մեզ կանաչ արօտին.
Ծոպան դաշտերում գառներին գըրկում է,
Մոլորուածներին չարիքից փըրկում է։

3.

Ե՛րբ ամպ պատէ մեզ, մեր Աստուածն է մեր լոյս,
Մըրրիկ թէ՛ մեր շուրջ գոռայ, Տէրն է մեր յոյս.
Ցառաջ կ’երթանք, թէև յոգնած, և կերգենք,
—Տէրն առաջնորդ է, և մեր տունն է երկինք։

Փառք մեզ համար, փառք մեզ համար.
Երբ տեսնենք Նրա երեսը լուսափառ,
Այդ կը լինի փառք, մեծ փառք, մեզ
համար,

2.

Երբ Փըրկչին առաջ կ'անգնենք
լուսազարդ՝
Որից բըղխում է կեանքի գետն
հանդարտ,
Սոսկ մըտիկ տալը Նըրան մեզ համար,
Կը լինի մեծ փառք դարեր անհամար։

3.

Թող վերը մեր մօտ լինեն սիրելիք,
Եւ ճոխ խրախճանաց շուրջ ծըփայ ալիք,
Սակայն Փըրկչին մէկ ժըպիտն մեզ
համար,
Կը լինի մեծ փառք դարեր անհամար։

ԵՐԳ 134.

1.

Օ՜ն, երգենք օրհներգ Նըրան փառաւոր,
Որ վարում է մեր կեանքը յարաժամ.
Անվախ մըտնում ենք ամեն ուղի նոր,
Քանզի Տէր Յիսուսն է մեր Բարեկամ։

2.

Լոյսի, ըստուերի, մէջ պիտի երգենք,
Սըրտի ցըծութեամբ և՛ յօժարակամ.

Կարող չէ չարի՝ վընասել մեզ նենգ,
Քանզի Տէր Յիսուսն է մեր Բարեկամ։

3.

Թող մեզ պաշարեն վըշտեր դըժընդակ,
Մեր վրայ յարձակեն կասկածներ
տարտամ,
Փոյթ չէ, անպայման մերն է յաղթանակ,
Քանզի Տէր Յիսուսն է մեր Բարեկամ։

4.

Մահն էլ կարող չէ զատել մեր հոգին,
Նրանից որ տըւաւ մեզ կեանք անթառամ,
Շուտով կը թըռչենք իր մօտ խընդագին,
Քանզի Տէր Յիսուսն է մեր Բարեկամ։

ԵՐԳ 135.

1.

Աղօթքն է խօսք շատ զօրաւոր,
Կոտրած սըրտի բաղձանք խորին.
Սա Մեզ համար միջոց է հօր՝
Մօտենալու սուրբ աթոռին։

2.

Դըրանով մենք այժ ենք գըտնում՝
Հաւատքովը Տէր Յիսուսին,
Վարագոյրին այն կողմ մըտնում՝
Առաջ դըրուած մեր քաղցր յոյսին։

3.

Դրբանով և՛ ըստանում ենք,
Խաղաղութիւն սըրտերում մեր,
Եւ ցընծալով ընթանում ենք՝
Արծուենըման թըռչելով վեր։

4.

Եւ օգնելով մեզ Սուրբ Հոգին,
Ազօթքին մեր լըսում է Տէրն.
Եւ մեզ սիրով Իր կաթոգին՝
Պարգևում է մեր խընդրածներն։

5.

Ով Տէր, տուր մեզ որ մենք յաւէտ,
Բոլոր սըրտից աղօթք անենք.
Խորհենք սիրուց Քո փըրկաւէտ,
Եւ Անուն Քա փառաբանենք։

ԵՐԳ 136.

1.

Օ՜ն, ՚ի գործ, օ՜ն, ՚ի գործ, ով եղբարք.
օ՜ն, յառաջ,
Հետևենք այն ուղին, որում Տէրն է քալած.
Անդադար աշխատենք, տարածենք սէր և՛ լոյս,
Քաջասիրտ միշտ լինենք, Տէրն է մեր
խըրախոյս։
Օ՜ն յառաջ, օ՜ն յառաջ, օ՜ն յառաջ,
օ՜ն յառաջ,
Մեծ յոյսով ըսպասենք Տիրոջ գալուն,
անդուլ գործենք։

2.

Օ՜ն. ՚ի գործ, օ՜ն, ՚ի գործ, քաղցածին
կերակրենք,
Եւ կենաց Աղբիւրին ծարաւին մօտ բերենք.
Պարծենանք ՚ի խաչ Տըրան, աւետենք այս
սիրուն,
կենսական մեծ պատգամն, «է ձըրի
փրկութիւնն»։

3.

Օ՜ն, ՚ի գործ, օ՜ն ՚ի գործ, յարաժամ մեզ
կայ գործ,
Կործանենք Սատանին զօրութիւն և ամրոց.
Ցաւիտեան բարձրանայ Յիսուսի մեծ անուն,
Եւ գոչենք միաձայն, «է ձըրի փրկութիւն»։

4.

Օ՜ն, ՚ի գործ, օ՜ն ՚ի գործ, Տէրն է մեզ
օգնական,
Թէ գործենք եռանդուն՝ կայ մեզ վարձք
պատուական.
Ե՛րբ հասնենք մենք երկինք, փառաւոր
տուն փայլուն,
Սուրբերին հետ կ՚երգենք, «է ձըրի
փրկութիւնն»։

ԵՐԳ 137.

1.

Յիսուս, ես վըճռել եմ Քեզ,
Ծառայել քանի կաճ.
Եղիր ընդմիշտ ինձ մօտ Դու,

Իմ Տէրս և Բարեկամ։
Զեմ վախենալ մարտիցը,
Կողքիս երբ մօտ մընաս.
Զեմ թափառել ճամբիցը,
Թէ լինես Ռահվիրաս։

2.

Թող ըզգամ ինձ մօտ ես Դու,
Քանզի մօտ է աշխարհ,
Իր հրապուրող ձայներով,
Տեսարաններով վառ։
Թըշնամիներս շատ մօտ են,
Իմ շուրջ և ինձանում.
Բայց Դու, Տէր, էլ մօտ եղիր,
Ծածկիր ինձ Քեզանում։

3.

Յիսուս, Դու խոստացել ես
Քեզ հետևողներին,
Որ ուր Դու ես փառքի մէջ՝
Ծառայքդ է՛լ լինին.
Ե՛ւ, Տէ՛ր, ես վըճռել եմ, Քեզ
Ծառայել քանի կամ.
Տուր ինձ շնորհք Քեզ հետևեմ,
Իմ Տէրս և Բարեկամ։

4.

Օ՜հ, տուր ինձ տեսնել հետքերդ,
Ե՛ւ նրանցում դիր իմը.

Քո զօրութեան մէջ է իմ
Հաստատութեան հիմը։
Ուղիր, կոչիր, քաշիր ինձ,
Պահիր աստ, քանի կամ.
Ապա առ ինձ երկնից մէջ,
Իմ Տէրս և բարեկամ։

ԵՐԳ 138.

1.

Ո՜հ, այն խաչեալ Գառն անըմման,
Նայում էր ինձ արիւնլըւայ.
Ներող շընորհ, սէր անսահման,
Աւազակին տարածեց Նա։
Մօտեցայ ես և՛ ինչ տեսայ,
Խաչին գամուած իմն համար Նա։

2.

Նա մեղք չ՛ունէր, ընդէ՞ր սակայն,
Այնպէս մեռաւ անարգ մահով.
«Է՞ր թողիր Ինձ», Նա բարձրաձայն
Գոչեց. երկիրն դողաց ահով։
Ե՛ւ նայեցի, ի՞նչ ես տեսայ,
Իր կեանք տըւաւ իմն համար Նա։

3.

Ո՜հ, ես էի օրինազանց,
Ի՛սկ Նա եղաւ դատապարտուած.
Ցաւ ու տանջանք կրեց չափազանց,

Որ ես լինիմ միշտ պատուած,
Եւ խորհելով, ինչ ես տեսայ,
Բոլորն կըրեց ինձ համար Նա։

4.

Արդ, դու-էլ, ով անապաշխար,
Լըսիր Փըրկչին կոչ սիրահամայ.
Թող այս դըժբախտ, ունայն աշխարհ,
Եւ կ Նըրա մօտ դու հէնց հիմա։
Պարտուած է դժոխք, եղիր վըստահ,
Նա բիւր բարիք և կեանք կըտայ։

ԵՐԳ 139.

1.

Եթէ գինուոր ենք խաչին մենք,
Ինչից էլ ամաչենք.
Թէ Գառնուկին հետևող ենք,
Դաւանել երկընչենք։
Փըրկչին չնորհքով որ Իր անգին
Տըւաւ կեանքն մեզ համար,
Հասնենք պիտի ուրբ պըտակին,
Կըռուելով անդադար։

2.

Մենք ծաղկազարդ մահճի վըրայ,
Կարճենք տարուել երկինք.
Արդիօք մեզ Թըշնամի չըկայ,
Մենք պէտք չէ՞ որ կըռուենք։

3.

Արեան չափ կըռուելով առին,
Շատերը մըրցանակ.
Ծառայելով մենք մարմինին,
Կառնենք փառաց պըսակ։

4.

Եթէ կուզենք յաղթել երբէք,
Պիտի կըռուենք անվերջ.
Տէ՛ր, չը լինենք մենք սըրտաբեկ,
Թէ մահն է՛լ լինի մերձ։

5.

Այս մարտին մէջ կ՚առնեն, ո՛վ Տէր,
Սուրբերն յաղթանակը.
Հեռուից հաւատքի աչքերն մեր
Տեսնում են պըսակը։

ԵՐԳ 140.

1.

Լոյս, մեհաւոր նըժդեհ սըրտին,
Ա՛ստըղ, ծագող օրուան.
Ե՞րբ Քո լուսից ճառագայթող,
Ցաւերն կ՚անհետանան։

2.

Ցայնժամ երկիրն ցընծմամբ կըցուած,
Վերին աշխարհի հետ,

Կ'երգէ սիրոյդ քաղցր յիշատակն՝
Ըղձիւ և բերկրաւէտ։

3.

Այժմ օդ, երկիր, և ծով համակ,
Հեծում են վըշտաբար.
Մեր սըրտերի հետ միացած՝
Գոչում են Քեզ համար։

4.

Քոնն էր խաչը՝ պըտուղներուին
Շնորհաց, խաղաղութեան.
Ե՛ւ Քոնն է այժմ փառքի պըսակն,
Քոնն յաղթանակն միայն։

ԵՐԳ 141.

1.

Քաջ եղէ՛ք ով եղբայրներըս,
Մօտ է օգնութիւն.
Երևում է վերից նըշան,
Սուրբ է յաղթութիւն։
«Շուտ կը գամ, պահեցէ՛ք բերդը»,
Տէրն ասիս է ձայն.
«Կը պահենք, Տէ՛ր, Քո շնորհքովըդ»,
Տըւէ՛ք պատասխան։

2.

Զօրեղ զօրքով մեզ դիմամարտ
Կայ չար սատանան.

Մի վհատիք, կացէք հաստատ,
Շուտ կ'անհետանան։

3.

Լըսւում է ձայն փողի և պերճ
Շարժում է դրօշակ.
Մեր Զօրապետի անուն մեզ
Կը տայ յաղթանակ։

4.

Ճակատամարտն է խիստ երկար,
Կրռուեցէ՛ք անահ.
Մօտ է անյաղթ Զօրագլուխ մեր,
Քաջ եղէ՛ք, վըստահ։

ԵՐԳ 142.

1.

Տար մեզ քաղցրութեամբ, ով Հովիւդ գըթոտ,
Ճոխ արօտների և ջրերի մօտ,
Դու որ շարունակ պահում ես Քո հօտ.
Երբէ՛ք չենք շեղուի Քեզ'նից։
Երբէ՛ք ... երբէ՛ք ...
Երբէ՛ք,ահ, երբէ՛ք, մինչ Դու ես ճամբան։
Երբէ՛ք ... երբէ՛ք ...
Երբէ՛ք չենք շեղուի Քեզ'նից։

2.

Թէև երկինքը լինի ամպամած,
Թէև դառն լինի ամեն մի դիպուած,
Քո խօսքի լոյսը մեր ճամբում ընկած,
Երբէ՛ք չենք շեղուի Քեզ'նից։

3.

Մեր տըկաբութեան ծածկում է Քո ոյժ,
Տուր մինչ վերջ լինենք քաղցր և՛ խոնարհ յոյժ.
Ապա երկընքում կ՛երգենք մենք անոյշ—
Երբէ՛ք չենք շեղուի Քեզ՛նից։

ԵՐԳ 143.

1.

Լըսեցէ՛ք, ով փոքր տըղայքըդ,
Տէր Յիսուսն է ձեզ կարօտ.
Ձեզ ուղղակի Ներա ձայնը
Ասում է՝ եկէ՛ք Ինձ մօտ։
Փոքըր տըղա՛յք, այս կանչողը
Ձեր Փըրկիչն է պաշտելի.
Ձեզ համար Իր կեանքը տըւաւ
Խաչի մահուամբ վըշտալի։

2.

Ո՜հ, կ՛արժէ, ով փոքր տըղայքըդ,
Այս օրհնեալ Փըրկչին սիրել.
Այո՛, կ՛արժէ ձեր սըրտերը
Ընդ միշտ Ներան նըւիրել։
Վայել է որ Ներա գործերն,
Փոքրիկ ձեռքերն գործեն միշտ.
Կը վայելէ փոքըր ոտներ
Ներա ճամբով քալեն ճիշտ։

3.

Թող փոքր աչքեր կարդան Սուրբ Գիրք՝
Աստուծոյ տըւած մատեան.
Փոքր ականջներ թող լըսեն միշտ
Փըրկութեան աւետարան։
Թող փառք տան փոքր լեզուները,
Քրիստոսի անչափ սիրոյն.
Փոքրիկ մարմիններ թող լինեն.
Մի մի տաճար Սուրբ Հոգւոյն։

ԵՐԳ 144.

1.

Ամեն բանըս, Տէ՛ր, ամեն բան,
Նըւիրում եմ շարունակ.
Սիրտըս, սէրս և կամքս թող միայն
Քեզ լինեն միշտ հրպատակ։
Ամենն եմ տալիս,
Ամենն եմ տալիս,
Ինձ յաւէտ սիրող Փըրկչին իմ
Ամենն եմ տալիս։

2.

Ամեն բանըս, Տէ՛ր, ամէն բան,
Փառք, պատիւ, հաճոյք բոլոր,
Կ՛անեմ յաւէտ Քեզ պատուանդան,
Որ լինեմ զոհ օրէցօր։

3.

Ամեն բանըս, Տէ՛ր, ամեն բան,
Քոնն արա, մօտ քաշէր Քեզ.
Դու իմ եղէր, ինձ Քեզ արժան
Ծառայ արա մըշտապէս։

4.

Ամեն բանըս, Տէ՛ր, ամեն բան,
Իրաւ լինեն Քոնն միայն.
Որ ես յաւէտ Քո ուրբ անուան,
Երգեմ երգեր ցընծութեան։

ԵՐԳ 145.

1.

Քրիստոնեայ, Քո հայրենիքը՝
Փառաւոր մի հանդիստ կայ.
Անդ սպասում է Փըրկիչդ՝ Ինքը,
Նա զարձեալ քեզ մօտ կը գայ։

Յոգնածին անդ հանդիստ կայ, (3 անգամ)
Կայ հանդիստ քեզ միշտ։
Այնտեղ վերին հայրենիքում,
Ուր չը կայ ոչ ցաւ, ոչ վիշտ,
Ուր Գառն բազմած է Հօր փառքում,
Կայ հանդիստ քեզ միշտ։

2.

Քեզ կը պատրաստէ Քո Տէրը
Մընայուն բընակարան,

Ուր յաւիտեան Քո երգերը
Անվերջ կ'ընծայես Ներքան։

3.

Այն սուրբ երկրում մահն դառնավիշտ
Պիտի բընաւ չերևի.
Այլ սըրբոց հետ քեզ յարամիշտ
Կեանքի պըսակն կը տըրուի։

4.

Մահ և դըժոխք յաղթուած են արդ,
Փըրկեալներ, ուրախացէ՛ք,
Բաց են ձեզ դըռներն լուսազարդ,
Ա՛սա երկար մընալու չէք։

ԵՐԳ 146.

1.

Թող օրէցօր միշտ Քեզ, ով Յիսուս,
Աւելի մօտենամ.
Թող յենուելում Քեզ շատ մօտից, Յիսո՛ւս,
Կեանքիս մէջ յարաժամ։

2.

Լերանց վրայ արևի պէս, Յիսո՛ւս,
Գեղեցկութիւնդ ցոյց տամ.
Թող քաղցրութիւնդ շըրթունքներս
հեղեն
Առատ և անդադրում։

Պատուական աղբիւրի պէս, Յիսուս,
Արա՛ քեզ համար ինձ.
Գործածի՛ր ինձ և օրէցօր, միշտ
Պահի՛ր մաքուր և չինչ։

4.

Իմ սըրտում, կամքում բոլոր, Յիսուս,
Լեր թագաւոր հրգօր.
Մընամ քեզ ճըշմարիտ, հրպատակ,
Ամենում ամեն օր։

5.

Քեզ իրա՛ւ ծարաւում եմ, Յիսո՛ւս,
կարօտագին սըրտով.
Վերը Քեզ հետ ես պիտի ապրեմ
Անուշ և՛ անվրդով։

ԵՐԳ 147.

1.

Երբ կեանքի ալեաց վրայ ծըփւում իս դու խիստ,
Երբ ամենն կորած է և՛ կաս անհանգիստ,
Համրի՛ր միւսմի քո շատ օրհնութիւններն,
Ե՛ւ կը զարմանաս թէ՛ ինչ է արել Տէրն.
Համրի՛ր միւսմի քո օրհնութիւններն,
Տե՛ս թէ քեզ համար ինչ է արել Տէրն.
Համրի՛ր միւսմի քո օրհնութիւններն,
Ե՛ւ կը զարմանաս թէ՛ ինչ է արել Տէրն։

2.

Բեռնաւորուած ես դու վիշտ ու հոգսերով,
Կարող չե՞ս տանել քո ծանր բեռը սիրով.
Համրի՛ր օրհնութիւններդ, կ՛երթայ ամեն ամպ,
Ե՛ւ դու կ՛երգես բոլոր օրերդ ցընծութեամբ։

3.

Երբ տեսնես այլոց ինչք և կալուածք պէսպէս,
Ցիշի՛ր այն բարիք որ Քրիստոսում ունես.
Համրի՛ր օրհնութիւններդ, դըրամք անհամար
Չեն գընել կեանք կամ փառք բընաւ քեզ համար։

4.

Մի լինիր պայքարին մէջ դու սըրտաբեկ,
Աստուած վերիվխում է, մի վախիր երբէք.
Համրի՛ր օրհնութիւններդ, քեզ հրեշտակներ բիւր՝
Մինչ վերջ ուղեւոյդ կըտան օգնութիւն և դիւր։

ԵՐԳ 148.

1.

Լայնատարած՝ անցնում ենք մէկ ծովից,
Մեր հայրենիք գընալու.
Խաւն ալիքներ քըշում են մեզ հովից,
Մեր հայրենիք գընալու։
Նաւահանգիստն ինչքան լինի հեռու,
Մենք վըստահ ենք ապահով հասնելու,

Մեր սիրելի եղբայրներն տեսնելու.
Ո՜հ, հայրենիք, հայրենիք։

2.

Թող ըսպառնան մեզ հովերը սաստիկ,
Մեր հայրենիքն ենք գընում.
Մեզ չի սարսում վայրենի փոթորիկ,
Մեր հայրենիքն ենք գընում։
Որչափ է՛լ գոռան ջրերն սաստկաբար,
Ե՛ւ պատեն մեզ մութ ամպեր անհամար,
Լոյս ու հանգիստ մեր առաջ կան պայծառ.
Ո՜հ, հայրենիք, հայրենիք։

3.

Նաւահանգիստն երբ մըտնենք փառաւոր.
Մեր հայրենիքն երբ հասնենք,
Վերն միացած սուրբերի հետ բոլոր,
Մեր հայրենիքն երբ հասնենք,
Փառք Աստուծոյ մենք կ՛երգենք բարձրաձայն,
Փառք անսահման բերկրալիր օրհնութեան,
Փառք Աստուծոյ մենք կ՛երգենք յաւիտեան.
Մեր հայրենիքը հասանք։

ԵՐԳ 149.

1.

Տէր, ահվ կարէ պարտքը բոլոր
Վըճարել Քո սիրոյ հըզօր.
Անքընին է սէրդ՝ անսահման,
Աստուածային և՛ աննըման։

2.

Տուր մեզ տեսնենք ամեն մի օր,
Պարգևատուիդ առատաձեռն,
Իրաւ ճենչքան պարտական ենք,
Որ սէրդ գովենք, փառաբանենք,

ԵՐԳ 150.

1.

Ո՜հ, թէ Փըրկչին շընորհքն անհուն,
Ե՛ւ Հօրը սէրն վեհ՝ անպատում,
Ե՛ւ Սուրբ Հոգւոյն հաղորդութիւն,
Մեզ հետ լինի բոլոր կեանքում։

2.

Որ մենք կըցուած միմեանց սիրով՝
Ապրենք Տիրոջ և՛ Իրար հետ.
Ե՛ւ վերին քաղցր պարգևներով՝
Սուրբ կեանքի մէջ ածենք յաւէտ։

ԵՐԳ 151. (Բացակայ բառերամաց համար)

1.

Ով Տէր, պահիր, ազատում ենք՝
Քո ձեռքով հըզօր.
Մեր բացակայ սիրելիքը
Ամեն օր։

2.

Թո՛ղ միշտ Քո սուրբ ներկայութիւն,
Լինի նըրանց լոյս.
Վառի՛ր նըրանց սըրտերում Քո
Պայծառ յոյս։

3.

Երբ վըշտի մէջ կամ վրտանգում
Լինեն՝ կամ մենակ,
Դու մըխիթար նըրանց եղիր
Շարունակ։

4.

Թո՛ղ լինի Քո ուրախութիւն՝
Նըրանց ոյժ, նեցուկ,
Որ Քեզ սիրեն և փառքդ գովեն
Լուսաշուք։

5.

Թո՛ղ Սուրբ Հոգին, ով Տէր, սըրբէ
Նըրանց կեանք ողջոյն,
Որ միշտ յաղթեն չարին ամեն
Փորձութիւն։

6.

Տէր, օրհնի՛ր նրանց և՛ վարիր միշտ
Քո սուրբ խորհըրդով,
Քո կողքիդ մօտ պահիր հանգիստ՝
Անվըրդով։

ԵՐԳ 152

1.

Յիսուս Քոնն է միայն՝
Գործն մարդկանց փըրկութեան.
Դու խոստացար որ յաւիտեան
Լինես մեր օգնական։
Ընդդրում ենք միաբան,
Դու տար մեզ Քո ճամբան.
Թո՛ղ պըտուղներ լինեն առատ,
Փըրկուեն հարուստ՝ աղքատ։

2.

Դու՛, Տէր, առաջ գնացիր,
Ե՛ւ ճանապարհն բացիր.
Նաչ, նեղութիւն, մահ կըրեցիր,
Արեամբդ մեզ փըրկեցիր.
Ա՛րդ կեանքը մեր է Քոնն,
Որպէս մի չընչին ձոն.
Քեզ հետևենք, պաշտենք, օրհնենք,
Սիրենք սըրտով աննենգ։

3.

Յոր՛նի հատի նըման,
Մըտար, Տէր, գերեզման.
Ե՛ւ օրհնեցիր աշխարհ համայն՝
Քո սուրբ խօսքով միայն։
Ղըրկիր բոլոր աշխարհ,
Ծառաներ հոգեվառ.

Քո գործըդ անձամբ առաջ տար,
Յիսուս, Տէր բարերար։

ԵՐԳ 153.

1.

Եւ դաշնարկիը իմ սիրտ փըծուն,
Աղբիւրդ ամեն օրհնութեան,
Որ ես երգեմ իմ Աստուծուն
Անվերջ շնորհքներն յաւիտեան։

2.

Երբ ես էի թափառական՝
Օտարացած Աստուծուց,
Յիսուս արեամբն իր պատուական՝
Հոգիս փըրկեց մեղապոյծ։

3.

Օ՜հ, ըզգում եմ օրէցօր ես,
Որ պարտական եմ շնորհքին.
Թող ինձ այդ շնորհք չըղթայի պէս
Տէր, կապէ Քեզ անմեկին։

4.

Սիրոս հակուած է թափառելու,
Հակուած թողել Աստուծուս.
Իսկ հոգուովդ այն կընքելու Դու
Հաճեցել ես, Տէ՛ր Յիսուս։

5.

Ա՛րդ, եղիր Դու իմ Ռահվիրայ,
Որ ինձ պահես ամեն օր.
Իբրև պանդուխտ՝ չար երկրիս վրայ,
Իբր որդի և ժառանգ Հօր։

ԵՐԳ 154.

1.

Իրաւ այն սուրբն իմաւ աշխարհ,
Երկնից փառաց Արքայն,
Որ մեղապարտ որդըքս թըշուառ
Բարձրացնէը յաւիտեան։

2.

Այո՛, փառաց գահն անընդմեան,
Թողեց Փրկիչը հեզ.
—Ի՞նչ գըթութիւն, սէ՛ր անսահման—
Որ մեղքից փըրկէը մեզ։

3.

Ոճրապարտին տեղն ըրաւնեց Նա,
Եւ կըրեց ցաւ անհուն.
Օ՜հ, հրաշք շնորհքի, որ անխընայ
Թափէը Իրեն արիւն։

4.

Օրհնեմ Յիսուս, կըրած Քո խաչ՝
Ունի մեծ զօրութիւն.

Ինեւ մեղաւորք նրանով փրկւած
Բերւում են Աստուծոյն։

5.

Ա՛րդ, հոգիս Քեզ, ով իմ Փրկիչ,
Ծրտում է խոնարհած.
Սէրդ փրկարար ինձ մանակից
Արել է Քոյդ շնորհաց։

ԵՐԳ 155.

1.

Ո՛վ Գլուխ, անգամ մի լքուած՝
Ցաւ ու տագնապի մէջ,
Փուշի թագով պըսակուած՝
Մաղրի տարափի մէջ.
Ո՛վ Գլուխ, որ այժմ փառքովդ վառ՝
Երկինք լեցընում ես,
Մեռար խաչին վրայ թըշուառ,
Ո՛հ, թողուած ու անտես։

2.

Ո՛վ Դէմք վըսեմ, աննըման,
Արևըդ կենսատու,
Քեզմով աշխարհք կայուն կան,
Իսկ թըք՛նար եղար Դու.
Ա՛խ, Տէր, մեր մեղքն ահարկու,
Քեզ տըւաւ շատ տանջանք.

Մինչ սուրբ արիւնդ հեղար Քու,
Որ ջընջես մեր յանցանք։

3.

Քո մահով, Տէր, հին լիժը՝
Վէրք կըրեց մահացու,
Դու կըրեցիր պատիժը
Մահից մեզ փըրկելու։
Քո զօրութեամբ չարդեցիր՝
Այդ հին օձին գըլուխ,
Դըժոխք և մահ պարտեցիր.
Փառք Քեզ տամք սըրտաբուղխ։

4.

Քեզ, ով Փրկիչ թանգագին,
Տըրուի փառք անհամար.
Ի՞նչեր կըրեց Քո հոգին.
Ծաչուելովդ մեզ համար։
Տո՛ւր մեզ Քո հաւատարմութեան
Վըստահենք իբրև վէմ,
Մինչ փառքիդ մէջ՝ յաւիտեան
Տեսնենք Քեզ դէմ առ դէմ։

ԵՐԳ 156.

1.

Ինչքան լինի խաչն իմ ծանրագին՝
Շնորհքը Նրա մեծագոյն է.
Թէ՛ մըրրիկ և՛ ամպ պատեն ուժգին՝

Նրա դէմքի լոյսն ինձ նոյնն է։
Աչքը մեծ չէ բնաւ շնորհքից Նրա,
Մերկիկն չէ զրկող դէմքից Նրա,
Ես վրատահ եմ որ յաւէտ
Կարեմ անել Փրկիչս հետ՝
Թըշնամեայն ոյժըն անհետ։

2.

Ճամբիս մէջ փուշերն սուր չեն այնքան՝
Ինչ հիւսեցին պատակ Նրա.
Բաժակն իմ բընաւ դառն չէ այնքան՝
Ինչ Նա խմեց խաչին վրայ։

3.

Նրա սիրոյ լոյսն փայլում է վառ,
Երբ ընկնում մութ ճամբիս վրայ.
Վիշտ ու հոգերս ցըրւում են իսպառ,
Երբ յենւում եմ կամքին Նրա։

4.

Ա՛խ, կամքը Նրա իմ բերկրանքն է
Որ միշտ քայլեմ իր առ՝ջին.
Նրա արիւնն իմ փըրկանքն է,
Նա պաշտպան է իմ անձին։

ԵՐԳ 157.

1.

Լըսում ենք սիրոյ ձայնն,
Արեամբն ենք ապահով.
Աստուծոյ հետ խաղաղութիւն՝
Ունենք գառին մահով։

2.

Անվերջ է, անփոփոխ,
Նրա խաղաղութիւն.
Իր գահին պէս կայ յաւիտեան
Անշարժ և հաստատուն։

3.

Ցաճախ մեր սէրն թոյլ է,
Ուրախութիւնն տատան.
Ի՛սկ նոյն է Նրա շընորհքն և սէր,
Փոխւում չէ յաւիտեան։

4.

Մենք ենք փոխւում, ոչ Նա,
Թէև անցնեն դարեր.
Իր սէրն, ոչ մերն, է ապաստան,
Յուսով ենք անվեհեր։

5.

Դեռ կայ խաչն անփոփոխ,
Իսկ Նա է յերկինս Իւր.
Մեծ քարն հեռուն թաւալած է,
Գերեզմանն է թափուր։

6.

Այդ գերեզման տեղ է
Այժմ մեր ցաւոց անբաւ,
Գիտենք եկաւ Աստուած-Որդին,
Գիտենք մեռաւ, յարեաւ։

7.

Գիտենք կենդանի է,
Աստ'ծոյ աչ կողմը վերն.
Գիտենք Գլխն ուր բազմած է Նա,
Գիտենք Իր անհուն սէրն։

ԵՐԳ 158.

1.

Տէր Յիսուս յաղթում է միշտ,
Փառք Աստուծոյ, Ամէն.
Սըրտերն մեր հրճւում են խիստ,
Փառք Աստուծոյ, Ամէն։
Որդիք Աստ'ծոյ քալեցէք,
Պարտուած է ժոխք, գիտացէք,
«Տէրն յաղթում է», ասացէք.
Փառք Աստուծոյ, Ամէն։

2.

Յիսուս երբէք յաղթուղ չէ,
Փառք Աստուծոյ, Ամէն.
Թըշնամու ուժն ոչինչ է,
Փառք Աստուծոյ, Ամէ՛ն։
Հապ օ՞ն 'ի մարտ անվեհեր,
Կըռուե՞նք հոգւով անձնըւէր,
Գոչենք, «մեզ հետ է Տէր մեր».
Փառք Աստուծոյ, Ամէ՛ն։

3.

Ո՛վ Քրիստոսի զինուորներ,
Յառաջ, մի կանգնեցէ՛ք.
Շուտով կ'անցնի մութ գիշեր,
Անհոգ մի քընեցէ՛ք.
Վերից Տէրն մեզ կը դիտէ,
Բոլոր կարիք մեր գիտէ,
Նա Ինքը միշտ մեզ հետ է.
Փառք Աստուծոյ, Ամէ՛ն։

4.

Մարտը մեծ է և սաստիկ,
Բայց դուք մի վեհերիք.
Վարձքըն է բիւրապատիկ,
Բընաւ չըդեգերիք.
Աչքերն ձեր երկինք յառէ՛ք,
Տէրն նըպատակ ձեր արէ՛ք.
Նա յաղթող է, սիրտ առէ՛ք.
Փառք Աստուծոյ, Ամէ՛ն։

5.

Հաւատարիմ մընանք միշտ,
Ահեղ այս մարտի մէջ.
Թո՛ղ բուն չ'դնեն մեզք ու վիշտ,
Բընաւ մեր սըրտի մէջ։
Եւ թո՛ղ յաւէտ լինեն ձօն
Տիրոջը՝ կեանք մեր ողջոյն,

«Տէրն յաղթող է», գոչենք օ՛ն,
Փա՛ռք Աստուծոյ, Ամէ՛ն։

6.

Տէրը մօտ է, համբերէ՛ք,
Նա պիտի շուտով գայ։
Զը լինենք մենք սըրտաբեկ,
Նա մեզ մեծ վարձք կը տայ։
Անցան մարտը, վիշտ ու ցաւ,
Էլ լինելու չեն բընաւ,
Հարսը Փեսային տեսաւ.
Փա՛ռք Աստուծոյ, Ամէ՛ն։

ԵՐԳ 159.

1.

Ո՛հ, Աստուծոյ Գառն աննըմանի,
Խաչի վրայ, խաչի վրայ,
Բարձաւ մեղքերն լեռնանըմանի,
Խաչի վրայ, խաչի վրայ.
Աստուածանից թողուած՝ նա լի
Ցաւօք սըրտի գոչեց, «Էլի,
Էլի լամասաբաքթանի»,
Խաչի վրայ, խաչի վրայ։

2.

Ձեռքերն մեկնած արիւնաքամ,
Խաչի վրայ, խաչի վրայ,

Կանչեց ամէն Հայրն յոժարակամ,
Խաչի վրայ, խաչի վրայ,
Թողնել մեղքերըն անհամաբ,
Իր Թըշնամեաց անգութ, յամառ,
Աղօթելով նոցա համար,
Խաչի վրայ, խաչի վրայ։

3.

Այժմ Հօր տունը մեզ բացել է,
Խաչի վրայ, խաչի վրայ,
Մեծ յաղթութիւն ըստացել է,
Խաչի վրայ, խաչի վրայ,
Այն ինչ գոչեց յաղթանակաւ,
«Կատարուած է», ձայնն սիրագըրաւ,
Երբ Հոգին Հօրն յանձնած մեռաւ,
Խաչի վրայ, խաչի վրայ։

4.

Ա՛րդ ուր գընանք՝ պատմենք պիտի
Զոհն Փըրկչին խաչին վրայ,
Ուրախութեամբ երգենք սըրտի՝
Զոհն Փըրկչին խաչին վրայ։
Ե՛ւ վերն յաւէրժ սիրապատար,
Պիտի պաշտենք Նրան անդադար,
Որ տըւաւ կեանք Իր մեզ համար,
Խաչի վրայ, խաչի վրայ։

ԵՐԳ 160.

1.

Յիշենք Գողգոթան, ահ, եղբայր,
Ուր Մեսիան խաչուեցաւ որ պըրկեց մեր Հայր.
Նա պատմեց մեզ համար թէ սէր է Աստուած,
Բուժեց մեր վէրքեր, բայց մեռաւ նախատուած.
Փառք տանք մենք Ներան։

2.

Յիշենք Գողգոթան, ահ, եղբայր,
Մեր մեղաց համար տանջուեցաւ վըշտաց Այր.
Նա ծարաւեց, քացախ մեկնեցին Նորան,
Որից բըղխեցին չըրերն կենսածորան.
Գովե՛նք մենք Ներան։

3.

Յիշենք Գողգոթան, ահ, ե՛ղբայր,
Թող միտք մեր բարձրանայ սըրբազան այդ վայր,
Ուր Յիսուս աղօթեց, «Հայր ներիր դըրանց,
Թող որ այդ աղօթքով ապրի և մեր անձ.
Օրհնե՛նք մենք Ներան։

4.

Յիշենք Գողգոթան, ահ, ե՛ղբայր,

Ուր գոչեց Փըրկիչը՝ լըքուած վերջին ծայր.—
«Ո՛հ, Աստուած իմ, Աստուած, ընդէ՞ր թողեր զիս»։
—Իմ եղբայր, որ փըրկէ հոգիդ և հոգիս.
Դիմե՛նք մենք Ներան։

5.

Յիշենք Գողգոթան, ո՛հ, եղբայր,
Ուր Փըրկչին խօսքը հընչեց ծայրէ 'ի ծայր.
«Կատարուած է, Հոգիս աւանդում եմ ձեզ»,
Ա՛յսպէս զոհուեց մեզ համար Գառնուկը հեզ.
Սիրե՛նք մենք Ներան։

6.

Յիշենք Գողգոթան, ո՛հ, եղբայր,
Բարձրանանք հոգւով այդ ահեղ մըրցավայր.
Նա կըրեց մեղքերն մեր և տանջուեց անհուն,
Ո՛հ, ինչ թանգ գընով Նա գընեց փըրկութիւն.
Պաշտե՛նք մենք Ներան։

ԵՐԳ 161.

1.

Մի սուրբ աղբիւր երակներից
Փըրկչին՝ հոսեց առատ.
Սըրբում են այդ հեղեղք մաքրիչ՝
Մեզքին ամեն արատ։

2.

Խաչին վըրայ՝ խեղճ աւազակն
Երբ տեսաւ այն աղբիւր,
Զարչարանացը ժամանակն՝
Ցընծաց նա սըրտագիւր։

3.

Մենք էլ թէև նըրա նըման,
Մեղաւորներ թըշուառ,
Նոյն աղբիւրի ջըրով միայն
Լըւացուեցանք իսպառ։

4.

Երբ հաւատքով տեսանք այն գետ
Բղխած կարմըրաներկ,
Այնուհետև Սէրն փըրկաւէտ
Եղաւ մեր ցընծման երգ։

ԵՐԳ 162.

1.

Ի՜նչ օրհնալից անուշ վարկեանք,
Երբ խոկում ենք խաչի վըրայ.

Խաղաղութիւն և անհուն կեանք
Ունենք միայն մահով Նըրա։

2.

Ի՜նչ հանգիստ սա. զարմացամբ՝ մեղք
Մեր դիտում ենք Փըրկչին վըրայ,
Ուր փըրկութեան առատ հեղեղք
Հոսում են միշտ զոհից Նըրա։

3.

Այստեղ երկնից փայլում է այգն,
Մինչ յառում ենք Գառին վըրայ.
Ջընջուած մեղքերն մեր, յաղթանակն
Օրհներգում ենք շնորհքի Նըրա։

4.

Ո՜հ, թէ հըզօր հաւատքի մէջ,
Յենուենք միայն Տիրոջ վըրայ.
Վառուած Նըրա սիրովն անշէջ,
Ջըգենք ամենն վասըն Նըրա։

5.

Իմաստութիւն տուր, ով Աստուած,
Միշտ սընանուենք Փըրկչին վըրայ.
Պես պես հրաշքներն սորվենք շնորհաց,
Քայլենք յաւէտ լուսով Նըրա։

ԵՐԳ 163.

1.

Շընորհք՝ է լըսած մեր
Ամենաքաղցըր ձայն.

Երբ մենք անյոյս էինք, վախեր
Անհետացրեց մեր՝ այն։

2.

Գերւոյն է ազատում,
Լոյս և ուրախութիւն.
Ձիրմից սոսկումն է փարատում,
Մահից էլ դառնութիւն։

3.

Շընորհքն է հանք անհուն,
Բաց՝ ամենի համար.
Զօրութեան ակն է զերագոյն,
Կեանք ճոխ և անբասիր։

4.

Երգե՛նք շնորհքից ապա,
Ուրախ սրտով յաւէտ.
Շնորհով եկողն, փառով կըգայ,
Որ մենք իշխենք Իր հետ։

5.

Կը տեսնենք Իր երես,
Սուրբերին հետ վերը.
Ուր կ'երգենք շնորհքն Իր մըշտապէս,
Եւ Իր փըրկող սէրը։

ԵՐԳ 164.

1.

Հայ մի բըլուր կանաչաւէտ,
Գողգոթայ իբ անուն,

Ուր մեր Փրկիչն ՚ի մահ խաչին,
Ցայտնեց Իր սէրն անհուն։
Ո՜հ, փոխարէն այսքան սիրոյ,
Տէ՛ր, Քեզ մենք ինչ բերենք։
Իցի՜ւ մեր սէր, մեր սիրտ բոլոր՝
Միայն Քեզ նըւիրենք։

2.

Քանի՜ դառն վիշտ օրհնեալ մեր Տէրն,
Ա՜հ, կըրեց մեզ համար.
Ո՛չ մի լեզու կարէ պատմել
Ցաւերն Իր անհամար։

3.

Այն որ անմեղ, անարատ էր,
Իբր յանցաւոր եղաւ.
Որ արդարներ մեզ անէր Նա՝
Իր սուրբ արիւնն հեղաւ։

4.

Այդ արիւնոտ սուրբ ձեռքերիդ
Համբոյր բիւր, Տէր Յիսուս,
Որով բացեր երկնից դըռներ,
Պարգևեցեր մեզ յոյս։

ԵՐԳ 165.

1.

Յիսուս յայտնեց մեզ սէր անքաւ,
Խաչին վըրայ չարչարուեցաւ.

Բարձաւ մեր մեղք, բուժեց մեր ցաւ,
Սիրովն անճառ, անբաւ։

Ներա սէրն է անճառ, անբաւ,
Ներա սէրն է անճառ, անբաւ,
Սէրն որ Յիսուս մեզ ցոյց տուաւ,
Սէր է անճառ, անբաւ։

2.

Կըրեց վըշտեր բազմատեսակ,
Եւ ահ, դըրաւ փուշից պըսակ.
Իր կեանք տըւաւ մեզ փըրկանակ՝
Սիրովն անճառ, անբաւ։

3.

Ծաղաղութիւն մեր Նա ինքն է,
Իր Արիւն մեր արժանիքն է.
Նա Բարեխօս մեր երկինքն է,
Սիրովն անճառ, անբաւ։

ԵՐԳ 166.

1.

Թէ որ ես Քեզ, ով Տէր Յիսուս,
Չ'ունենայի բաժին հոգուս,
Եւ չըլինէր թէ սուրբ արիւն
Քո՝ մեղքերին իմ քաւութիւն,
Ամեն խեղճից ես խըղճալի,
Այսօր ո՛րին կըդիմէի։

2.

Փրկիչըդ իմ, հե՛զ, ա՛նըմման,
Ո՛հ, ո՛ւր կայ սիրտ, սըրտիդ նըման.
Միշտ գըթառատ և ըղգայուն,
Քեզ դիմողին սիրով լեցուն։
Քեզ'նից դատ ինձ պէտք չէ մի բան,
Դու ապաւէն, յոյս իմ միայն։

ԵՐԳ 167.

1.

Բարի Յիսուս, Քո սըրտումը,
Ինչ լաւ է տեղ ունենալ.
Այս աշխարհում մեզ ո՛չ մի բան
Կարող չէ լիութիւն տալ։
Բայց Քո սըրտում մենք հանգիստ ենք,
Հեռու խառն ամուլներից.
Ո՛վ Բարեկամ հաւատարիմ,
Տո՛ւր լիանանք Քո սէրից,

2.

Քո ծոցի մէջ սիրովդ առատ՝
Ապահով ենք յաւիտեան.
Ա՛խ, պահի՛ր մեզ որ Քեզանից
Չը հեռանանք մի վայրկեան։
Քո սիրոյ մէջ —քաղցը երաշխիք—
Մենք չենք շարժուի այլ մի կողմ,

Քանզի սիրոյդ մէջ հաստատուած՝
Մեզ չի ազդի ոչ մի հոգմ։

3.

Քեզանից դուրս էլ ուր մընանք,
Հիւանդանում ենք իսկոյն.
Քեզանից դուրս ում մօտ գըտնենք
Հանգիստ և խաղաղութիւն։
Ո՜հ, Քո սիրոյ հովանու տակ,
—Ի՜նչ հրաշագեղ ապաստան—
Ջըրի փըրփանք, կեանք և ցընծում
Մեր բաժինն է յաւիտեան։

ԵՐԳ 168.

1.

Կա՛յ երբէք մի ընտիր հովիւ,
Նըման Փըրկչին պատուական.
Կա՛յ Նըրա պէս հըզօր մէկը
Որ մեզ լինի պահապան։
Գրթութիւն Նըրա անհուն է,
Սէր Նըրա Աստուածային,
Մեր խորհուրդը և մեր միտքը
Չեն հասնի Նըրա չափին։

2.

Քան ովկեան՝ վըսեմ ու լայն է՝
Աստուծոյ ողորմութիւնն.
Իր արդարութեան մէջ գութ կայ,

Պատուական է փըրկութիւնն։
Դատապարտեալին ընորհք կայ,
Փըրկեալին էլ օգնութիւն.
Մեռեալին, ահ, յոյս և կեանք կայ,
Այն է Յիսուսի արիւնն։

3.

Յաւիտեան մեր Հօրը գութը,
Կը մընայ անչափելի.
Եւ անսահման սիրան է Նըրա՝
Ակ սիրոյ ըսքանչելի։
Ա՜խ, ուր էր որ անկեղծ սըրտով,
Մեր Տիրոջը յուսայինք.
Նըրա լոյսին մէջ յարաժամ
Բերկրութեամբ մենք գընայինք։

ԵՐԳ 169.

1.

«Ժամն ազօթքի, ժամն ազօթքի»—
Երբ հոգսերից այս աշխարհքի՝
Մենք դիմում ենք Հօր աթոռին,
Եւ յայտնում մեր իղձերն խորին։
Երբ խուժում են դառն փորձեր խիստ
Մեր վրայ՝ և մենք չ'ունենք հանգիստ,
Ո՜հ, ինչ միջոց մեզ սփոփանքի—
«Ժամն ազօթքի, ժամն ազօթքի»։

2.

«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի»—
Երբ թևերով սուրբ հաւատքի՝
Մատչում ենք մեր Փրկչին գըթած՝
—Վարագոյրի ետևն մըտած։
Իրեն դիմել պատուիրել է.
Շընորհք խընդրել հրաւիրել է.
Ո՛հ, սա ատիթ մեզ բերկրանքի—
«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի»։—

3.

«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի»—
Մինչև տեսնենք մեր Տէրն փառքի,
Փոխուենք Նըրա դէմքին սիրուն,
Լըցուենք սիրուն Իր պատարուն։
Ցայնժամ տլկար մարմնից ազատ,
Փըրկչին մօտ միշտ բերկրազըւարթ՝
Կ'երգենք 'ի լոյս Իր սուրբ դէմքի—
«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի»։

ԵՐԳ 170.

1.

Երբ նայեցի, Տէր, Քո խաչին,
Փառք՝ հաճոյքներ մեռան, և ես.
Էլ ինչ պէտք է ինձ այլ բաժին,
Դու վըշտերովդ ինձ հերիք ես։

2.

Երբ թըքալից, արիւնաներկ
Տեսայ երեսդ, ինչ ազդեցիկ,
Անշըքացաւ ինձ ոխերըդ,
Դու ամենից ես գեղեցիկ։

3.

Երբ դիտեցի արիւնախառն՝
Արտասուալից Քո քաղցր աչքերդ,
Այլ սէրեր ինձ թոյն եղան գառն,
Զօրաւոր է մահից Քո սէրդ։

4.

Մեռար խաչի վրայ, Տէրդ փառաց,
Ա՛խ, սուրբ Գըլուխ, էլ ինչպէս ես
Փընտռեմ ուրիշ մի արարած,
Նախատինքովդ Դու իմ Տէրն ես։

ԵՐԳ 171.

1.

Տէր Յիսուսն ահա գալիս է,
Իր սուրբերով բիւրաւոր,
Տե՛ս, մեղաւոր, Նա տալիս է
Վերից Նըշան փառաւոր։
Թագաւոր է, թագաւոր է,
Տէր է բոլոր աշխարհի.
Թագաւոր է, թագաւոր է,
Տէր է բոլոր աշխարհի։

2.

Նա մեր Փրկիչն է թանգագին,
Տըւէք Նըրան դուք յարգանք.
Արժանի է Տէրն իր թագին,
Նա քաշեց շատ չարչարանք։

3.

Մեղաւորք Նըրան ասել են,
Չարկեւով սուրբ երեսին.
Փըրկեաններըը շուրջ պատել են,
Օրհնեն Նըրան միասին։

4.

Ցընծման ձայներ ամեն տեղում
Բարձրացընում են մարդիկ.
Նըրանց սըրտերն սիրով զեղում,
Նրան տալիս են երախիք։

ԵՐԳ 172.

1.

Վեր ում քեզ հետ Յիսուս Անունն,
Երբ ճամբից կը նեղանաս.
Դա կըտայ քեզ նոր զօրութիւն,
Եւ դու նոր կեանք կըստանաս։

Սուրբ Անունն,
Սէր անունն,
Քեզանում կայ փըրկութիւն։

2.

Վեր ում քեզ հետ այդ Անունը,

Որ պըսակուես յաղթութեամբ.
Երբ գայ քո վրայ փորձութիւնը,
Ազօթիր միշտ այդ Անուամբ։

3.

Այդ Անունը, ահ, ինչ բերկրանք
Տալիս է խեղճ մարդկութեան.
Արդեօք մենք երբ կ'արժանանանք
Վերը փառք տալ այդ Անուան։

4.

Եւ մենք Յիսուս Անուան առջև
Պիտի ընկնենք ծընկաչոք.
Երկինք, երկիր, երկրի ներքև—
Թող ծունը դնեն ամեն օք։

ԵՐԳ 173.

1.

Խոնարհւում եմ սիրոյ զօրութեան,
Որ Յիսուսով մեզ յայտնուեցաւ.
Օ՜հ, ինչ Սէր՝ չընչին որդիս տեղ Այն
Խաչին գառն մահուան մատնուեցաւ.
Քո բարերար երախտեաց ներքոյ,
Ընկղմւում եմ անհուն ծովն սիրոյ։

2.

Ի՜նչպէս քաղցրը եմ ես քեզ համար,
Ինչպէս սիրտդ փափագում է ինձ.
Իմ սիրտն էլ քեզ կարօտում է յար,
Սիրուց խանդաստատ և չինչ.

Դու, ով իմ Փըրկիչ, բարի և հեզ,
Դու ընտրեցիր ինձ, և ես էլ Քեզ։

3.

Ես ղգում եմ պէտք է Քեզ ունենամ,
Եւ Քեզ համար միայն ապրեմ.
Ոչ մի բանով քնաւ չը պարծենամ,
Ա՛յլ ամեն փառք Քեզ վերադրեմ.
Քեզ մօտ կայ հանգիստ, երջանկութիւն,
Դու տըւիցիր ինձ Քո փըրկութիւն։

4.

Ա՛խ, Տէր Յիսուս, Քո սուրբ անուն
Փորագըրուէր խորքում սըրտիս.
Ա՛խ, երանի՛ թէ Քո սէրն անհուն
Թափանցէր իմ միտք, սիրտ, հոգիս.
Գործում, խօսքում, ամենայն բանում,
Միայն Յիսուս, այլ բան չեմ ցանկանում։

5.

Փառք Քեզ, Յիսուս և Քո բարձր Անուանդ,
Քեզնից բըղխում է ակ սիրոյ,
Քեզնից վազում են գետք ամենայն,
Քեզնից խմում է սուրբ հօտը Քո.
Քեզ նուիրում եմ երգս օրհնութեան,
Երկըրպագում եմ Քեզ յաւիտեան։

Ե Ր Գ 174.

1.

Փրկչին գիրկն է, ո՜հ, ի՞նչ սիրուն
Վայր մեր հոգւոյն հանգըստեան.

Անդ մեղք, փորձանք, տրկարութիւն,
Չըքանում են յաւիտեան։
Ո՜հ, վայր սիրուն և աննըման,
Փրկչի սիրոյն քաղցր ծորան.
Յոգնած սըրտին կազդուրարան,
Եւ կարօտ հոգւոյն խորան։

2.

Ա՛նդ վախ չըկայ, ո՛չ էլ խաւար,
Ո՛չ տըրտմութիւն և ո՛չ վիշտ.
Սիրոյ լոյսը, ո՜հ, բոցավառ
Լուսաւորում է անդ միշտ։

3.

Պիտի երգենք յաղթութեան երգն,
Երբ սըլանանք օդից վեր.
Գահից հոսող գետի եզերքն՝
Մեզ կըտանէ Հովիւն մեր։

Ե Ր Գ 175.

1.

Ես Քոնն եմ, ով Տէր, իմ անձըս բոլոր՝
Գերի է արել Քո սէր.
Կամիմ հաւատքի թևերով հըզօր՝
Առ Քեզ շատ մօտ թռչել, Տէր։

Քաշիր ինձ մօտ, Յիսուս, Քեզ շատ մօտ,
Որ խաչն իմ տեղ բարձրացար.
Քաշիր ինձ մօտ, շատ մօտ, շատ մօտ,
ով Յիսուս,
Այս աշխարհից դառն և չար։

2.

Թող հաւատարիմ վըկայի պէս, Տէր,
կանգնեմ սիրոյդ համար մեծ.
Տուր հաստատ յոյսով նայեմ դէպի վեր,
Թաղիր իմ կամք կամքիդ մէջ։

3.

Ի՜նչ ուրախութիւն աթոռիդ առաջ
Ունեմ ես, ով Տէր Յիսուս,
Երբ Քեզ ծընկաչոք, սրտից խոնարհած,
Ազօթում եմ լիայոյս։

4.

Քո սէրը գիտեմ քնաւ չ'ունի սահման,
Ե՛րբ ես կ'անցնեմ այս նեղ ծով,
Երանութեան մէջ լինեմ Քեզ նըման,
Եւ Քեզ, Տէր, տեսնեմ աչքով։

ԵՐԳ 176

1.

Առաջնորդիր մեզ, ով Յիսուս,
Անապատիս միջով չոր.
Մեզ ուրկարացս Դու միայն յոյս,
Տար մեզ ձեռքով Քո հզօր։
Ման'նայովը,
Ման'նայովը,
Յագեցրու միշտ մեր սովը։

2.

Սուրբ վէմիցը յաւ'տենական՝
Խըմեցրու մեզ ամեն օր.
Կրակի սիւնով լեր մեր պաշտպան՝
Դէմ թըշնամեաց զօրաւոր։
Ո՛վ Փըրկիչ մեր,
Ո՛վ Փրկիչ մեր,
Դու մեր յոյսըն և ընկեր։

3.

Մինչ այս ձորում ենք արտասուաց,
Տուր մեզ սիրոյդ մէջ մընանք.
Պահիր մեզ միշտ, ով Տէր գըթած,
Քո կողքիդ մօտ անվըտանգ։
Միշտ յուսալով,
Միշտ յուսալով,
Հօր սիրոյն մեր անվըրդով։

4.

Արի շուտով, ով մեր Տէրը,
Կարօտում ենք Քո տեսնուն.
Մեզ տար Քեզ մօտ, այնտեղ՝ վերը
Միշտ փառք երգենք Քո սիրուն։
Ո՛վ Տէր Յիսուս,
Ո՛վ Տէր Յիսուս,
Տա՛ր մեզ Հօր տունն երկնային։

ԵՐԳ 177.

1.

Վիշտ ու ցաւով պատած հոգի,
Ապաւինիր Աստուծուն.
Քո ցաւերը նա կ'ամոքի
Եւ կը տայ քեզ օրհնութիւն։

Մի վախիր դու խաւար ժամին,
Քո Աստուծուն հաւատայ.
Նա համաձայն Իր խոստումին՝
Անհուն բարիք քեզ կը տայ։

2.

Թող թշնամին չըյաղթէ քնաւ
Քեզ խաւարի խուճապում.
Ցիշի՛ր Փրկչիդ որ լըքուեցաւ
Մահուան սաստիկ տագնապում։

3.

Կ'ուզե՞ս ապրել Յիսուսի հետ,
Պիտ' մեռնի քեզ աշխարհը.
Կ'ուզե՞ս լինել դու օգտաւէտ,
Մահով է ճանապարհը։

4.

Հեռո՞ւ ամեն քո տարակոյս,
Պինդ բըռնի՛ր Տէր Յիսուսին.
Ապրի՛ր յաւէտ դու լիայոյս
Կեանք Նըրա հետ միասին։

ԵՐԳ 178.

1.

Երբ մոլորուած մեղքի մէջ,
Կորած էի իրաւ,
Ինձ գըտաւ Հովիւը մեծ,
Ուսերի վրայ առաւ։
Երբ դիտեցին հրեշտակները,
Օրհներգեցին ցընծմամբ վերը։

Հովիւն ինձ որոնեց,
Արիւնով ինձ գընեց,
Եւ Իր մեծ շնորհքով բերաւ ինձ տուն,
Փառք և պատիւ, Տէ՛ր, Քո մեծ սիրուն։

2.

Նա լուաց վէրքերս անխընայ,
Չէթ և գինի ածեց.
Եւ ականջիս ասաց Նա,
«Քեզ սիրել եմ անվերջ»։—
Չեմ լըսել ձայն այնպէս սիրուն,
Օրհնաբալ լինի Նրա մեծ անուն։

3.

Տե՛ս նշանները խոր վէրքի՝
Ձեռք, ոտքերում Նըրա.
Փուշի պըսակ հեգնանքի,
Կըրեց գըլխին վըրայ։
Նա չարչարուեց հէնց ինձ համար,
Փըրկեց անյոյս հոգիս խպատ։

4.

Մ՚նչափ ուրախ եմ հիմա
Իր հաղորդութեան մէջ.
Ո՛չ ոք Նըրա նման չըկայ
Առաջնորդութեան մէջ։
Սըրտանց պիտի օրհնեմ Նըրան,
Այժըմ և միշտ և յաւիտեան։

5.

Թըռչում են իմ օրերը՝
Տիրոջ հետ միասին.
Շուտով օդին մէջ վերը,
կը տեսնենք Յիսուսին։
Բեհեզով զարդարուած հարսը՝
կ՚տեսնէ Փեսայի երեսը։

ԵՐԳ 179.

1.

Տէր Յիսուս անցնում է ջուր ու ցամաքով,
Պաշտում են շատերը սըրտանց փափագով.
Որին որ Սուրբ Հոգին արել է նոր մարդ՝
Քրիստոսի դրօշի տակ կանգնել է զըւարթ։
Եղբայրք, քոյրեր, չըլինենք անփոյթ,
Մէկ մէկ մարդկանց բերենք Տիրոջ մօտ.
Եղբայրք, քոյրեր, չըլինենք անփոյթ,
Մի առ մի ամենին բերենք Տիրոջ մօտ։

2.

Ասո՛ղոյ քահանաներ, եկէ՛ք խըմբովին,

Սուրբ ձեռքիր դէպ՝ վեր բարձրացնենք
կամովին,
Գործենք և աղօթենք սիրով, եռանդով,
Կոյրեր և կաղերը ներս բերենք փութով։

3.

Թէ ուժեր մեր սպառեն, սիրտ մեր թուլանայ,
Սուրբ Հոգին նըպաստ է, մեզ չի թողնի Նա.
Նայենք միշտ Յիսուսի խաչի դրօշակին,
Եւ կըռուենք քաջութեամբ կըրկին և կըրկին։

4.

Ի՜նչ մեծ երանութիւն է սա մեզ համար,
Շահել շատ հոգիներ միշտ և անդադար.
Երբ լըսուի մի անգամ փըրկելոց շարքը,
Կը տեսնենք Գառի վեհ հարսանեաց փառքը։

ԵՐԳ 180.

1.

Թէ վախենամ չարիցը,
Քրիստոս պահող է.
Թէ փորձէ ինձ փորձիչը,
Պահել կարող է։
Նա մեզ կը պահէ,
Նա մեզ կը պահէ,
Մեր Փրկիչը մեզ սիրում է,
Նա միշտ կը պահէ։

2.

Ես չեմ կարող ինձ պահել,
Նա ինձ կը պահէ.

Ես պատրաստ եմ միշտ սահել,
Նա ինձ կը պահէ։

3.

Ի՞նչ թանգ եմ փըրկչի համար,
Նա ինձ կը պահէ.
Թող անեն ինձ արհամարհ,
Նա ինձ կը պահէ։

4.

Նա չի անտես անել ինձ,
Նա ինձ կը պահէ.
Մեծ գընով է գընել ինձ,
Նա ինձ կը պահէ։

ԵՐԳ 181.

1.

Լաւ բարեկամ կայ բարձրում վերն,
Յիսուս Քրիստոս է Իր անուն.
Այս աշխարհիս բարեկամներն,
Շուտով կ'անցնեն՝ չեն հաստատուն։
Ուստի մենք էլ թող յարաժամ,
Յիսուսն անենք մեզ բարեկամ։

2.

Աշխարհք կ'անցնի փառքովն ամեն,
Յիսուսն մեր վէմ կայ միշտ հաստատ.
Մարդիկ երբ որ մեզ լըքում են,
Այնժամ Յիսուս մեզ մօտ է շատ։

3.

Նա մեզ համար զոհեց Իր անձ,
Որ օրհնութիւնն երկնից մեզ տար.
Հեղեց արիւնն Իր գերապանծ,
Որ Իրմով մեզ անէր արդար։

4.

Բարեկամի մեր՝ մեծ սէրը
Օրէցօր մեզ կ'առաջնորդէ.
Մենք Նորանն ենք, Նա մեր Տէրը,
Մեր Քահանան և Միջնորդ է,
Միչև որ վերն միանանք այն
Բարեկամի հետ յաւիտեան։

ԵՐԳ 182.

1.

Տէր, Դու ես իմ հոգածու.
Փորձութեան այս ժամանակին՝
Այնպէս դու ինձ անցկացրու,
Որ առնեմ կենաց պըսակին։
Ցաղթողի պէս, տուր յաւէտ,
Այնժամ կ'անգնեմ առաջիդ.
Եւ սիրոյդ նոր երգ սըրբոց հետ
Երգեմ բերկրաւէտ։

2.

Թո՛ղ իմ կեանքը Քո Հոգին,
Քաղցըր շնորհքովդ միշտ վարէ.

Որ իմ խանդքը բորբոքին՝
Թո՛ղ սիրտս սիրով Քո վառէ։

3.

Ես չեմ վախիլ մութ ժամին,
Երբ Դու, ով Տէր, ինձ հետ ես.
Թէ ճրնշէ ինձ թըշնամին,
Դու ձեռքովդ ինձ կը պատես։

ԵՐԳ 183.

1.

Դու յոգնած կամ վրհատուած ես,
Կամ տանջուում ես խիստ.
Յիսուս ասում է, «եկ Ինձ մօտ
Կայ հանգիստ»։

2.

Կան ապացոյց, ցոյց տալու թէ
Առաջնորդ է Նա.
«Կան վէրքեր շատ, ձեռք՝ ոտքեր և
Կողքին վրայ»։

3.

Կան զարդարող պըտակ վրաեմ,
Ձակատն Իշխանի.
«Այո՛, դափնի, բայց փուշերից
Վայրենի»։

4.

Ի՞նչ վարձք եթէ Նըրան գըտնեմ,
Եւ հետևեմ միշտ.
«Շատ արցունք և աշխատանք կան,
Եւ շատ վիշտ»։

5.

Եթէ Նըրան ամուր յարեմ,
Ի՞նչ կայ պատրաստուած.
«Ցաւ, աշխատանք և լաց ջընջուած,
Մահ պարտուած»։

6.

Թէ խընդրեմ որ ընդունի ինձ,
Կը մերժէ՞ Նա այն.
«Ո՛չ, մինչ երկինք, երկիր անցնեն
Ամենայն»։

7.

Հետևեմ միշտ, հըսկեմ, մըրցեմ,
Ինձ կըտայ օրհնէք.
«Այո» ասեն հրեշտակք, սուրբք և
Մարգարէք։

ԵՐԳ 184.

1.

Թո՛ղ քո յուզմունքներըդ
Ո՛վ Թերահաւատ,

Սըրբէր արցունքներըդ,
Է՛ր կաս յուսահատ։
Բոլոր տըրտմութիւնըդ՝
Պատմիր Յիսուսին,
Շուտով մրթմրթիւնըդ
Կը փոխուի լուսին։

2.

Դառն են քո վըշտերը,
Չեն մընալ բընաւ.
Քեզ համար միշտ Տէրը՝
Նեցուկ է հարկաւ։
Ինդրիր Իր արևը,
Հաստատ հաւատա՛,
Նա Իրեն պարգևը՝
Անշուշտ քեզ կըտայ։

3.

Յիսուս քեզ նըպաստ է,
Մեծ իմաստութեամբ.
Օգնել միշտ պատրաստ է։
Անհուն գըթութեամբ։
Գնա՛ և տըրտմածին՝
Դու մխիթարիր,
Եւ քո պարտքն առանձին՝
Տիրոջդ կատարիր։

ԵՐԳ 185.

1.

Ես գըտել եմ մի Բարեկամ,
Որ ինձ սիրեց նախ քան ես.
Նա կապեց ինձ յօժարակամ,
Իր սիրտի հետ մըշտապէս,
Կա՛պ անբաժան, անքակտելի,
Ո՛հ, Նա իմն է՝ ես Նորանն.
Ի՛նչ գըթառատ, ինչ՛ սիրելի,
Ես Նորանն եմ յաւիտեան։

2.

Ես գըտել եմ մի Բարեկամ,
Որ Ինքն Իրեն ինձ տըւաւ.
Ո՛հ, Նա մեռաւ որ յարաժամ՝
Բուժէ իմ վէրք, վիշտ ու ցաւ։
Ես տալիս եմ ինչ որ ունիմ,
Սիրտ, միտք, ու անձ, ամեն բան,
Բարեկամիս հաւատարիմ.
Ես Նորանն եմ յաւիտեան։

3.

Ես գըտել եմ մի Բարեկամ,
Ի՛նչ հեզ, քընքուշ և քաղցրիկ,
Ներքան պիտի ես միշտ յուսամ,
Նա մենակ իմ զօրավիգ։
Ինձ չեն զատի ո՛չ կեանք ո՛չ մահ,

Փըրկչիս սէրից աննըման.
Կասկած չունիմ, վիտեմ վըստահ,
Ես Նորանն եմ յաւիտեան։

ԵՐԳ 186

1.

ԴիմՓել ես Յիսուսին, որ քեզ մաքրէ Նա,
ԼուացուՓել ես արիւնով Գառնուկին ...
ՈւնՓս յոյս կատարեալ Իր շնորհացը վրայ,
Լուացուել Ըս արիւնով Գառնուկին։
ԼուացուՓել ես ... արիւնով ...
Հոգեբուժ արիւնով Գառնուկին ...
ԱնբԸծ են հանդերձներդ, ձիւնին պէս սպիտակ,
ԼուացուՓել ես արիւնով Գառնուկին։

2.

Քայլում ես ամեն օր Փըրկչին հետ գըԸած,
ԼուացուՓել ես արիւնով Գառնուկին ...
Այն Խաչվողին մէջ հանգիստ ես գըտած,
ԼուացուՓել ես արիւնով Գառնուկին։

3.

Երբ որ գայ Փեսան հանդերձներդ ջինջ, փայլուն,
ԿըլինՓն արիւնով Գառնուկին ...
Հոգիդ պատրաստ է փառքի յայտնուելուն,
ԼուացուՓել ես արիւնով Գառնուկին։

4.

ՀանԸը քո մեղսաներկ հանդերձներդ իսկոյն,
Եւ լըուացուԸը արիւնով Գառնուկին...

Հոսում է քեզ համար աղբիւրն վարդագոյն,
Օ՜հ, լուացուԸր արիւնով Գառնուկին։

ԵՐԳ 187.

1.

Յիսուս կըրեց խաչն մեր փոխան,
Մեր մեղքն, պատիժն և վիշտ.
Մենք էլ մեր խաչն առած՝ Նորան
Պիտի հետևենք միշտ։

2.

Ի՜նչ երջանիկ են այն սուրբերն,
Որ այստեղ տըրտմեցին.
Իսկ այժմ անխառն սէր ունեն վերն,
Եւ ցընծում լիովին։

3.

Պիտի տանենք օրհնեալ խաչ մեր,
Փըրկչին սիրոՓն անհուն.
Եւ պսակն առնել վերջն ելլենք վեր,
Կեանքի պըսակն փայլուն։

ԵՐԳ 188.

1.

Ո՜հ, այն գիշերն Գեթսեմանում
Քո վիշտ ու տառապանք.

Մենք կարող չենք, ո՛վ Տէր, մոռնալ
եւ ո՛չ Քո չարչարանք։
Բնաւ չենք մոռնալ, բնաւ չենք մոռնալ
Քո վիշտ և սէրդ, ով Տէր.
Հօր սուրբ կամքին, ծընկան վրայ,
Եղար Դու անձնուէր։

2.

Մութ պարտէզի ծառերի տակ,
Տեսարան աննըման,
Հեղում էին տագնապի մէջ,
Քրտինքդ արեան նըման։

3.

Մարդկանց կողմից թողուած իսպառ,
Մենակ, անօգնական.
Բնաւ չենք կարող մենք հասկանալ
Քո վիշտն անզուգական։

4.

Թէ որ Քեզ վրայ պաղած տեսնես
Սէրըն առաջին մեր,
Յիշեցրո՛ւ մեզ Գեթսեմանին,
եւ կրածդ չարչարանքներ։

ԵՐԳ 189.

1.

Լո՛յս բարերար, տիրող մըթութիւնիդ
Տար մեզ դէպ վեր.
Մութ է գիշերն և մենք հեռու տունից,
Տար մեզ դէպ վեր։

Պահիր ոտքերն մեր, չենք խընդրում բընաւ
Հեռուն տեսնել, մեզ մի քայլն է բաւ։

2.

Այսպէս չէինք միշտ, կամք չ'ունէինք մենք
Դու մեզ տանես.
Ներո, ինքնավար էինք, իսկ արդ կ'ուզենք
Դու մեզ տանես։
Շէն օր սիրող, անվախ և անտարբեր,
Կամք մեր հըպարտ, անցեալն չը յիշես, Տէր։

3.

Ցարդ օրհնել է մեզ Աչդ հըզօր, և դեռ
Պիտի տանէ,
Ժայռի, ճահճի վրայից՝ խոր ըստուերներ,
Մինչ լոյդ վանէ։
եւ վաղորդեան սուրբերի հետ վերը,
Դէմքիդ լուսում վայ'լենք Քո սէրը։

ԵՐԳ 190.

1.

Ո՜հ, մի զլջանի, մի անսա փորձիչին,
Կըռուիր միշտ փորձութեանց դէմ մեծ կամ
չընչին։
Զըսպիր յարաժամ Քո ամէն կըրքերը,
Նայիր զօրացնող Յիսուսին վերը։
Քո Փրկիչը գըթած է,
Յաղթութիւն նա քեզ կըտայ.
Օգնութիւն պատրաստած է,
Վըստահ Դու հաւատայ։

2.

Աւիր սըտութիւն և ամեն չար խօսքեր,

Եւ ապականիչ ընկերները մի սիրեր.
Յարգիր Աստուծոյ Անունն և սէրը,
Նայիր զօրացնող Յիսուսին վերը։

3.

Աստուած պիտի թագ տայ յաղթողին միայն.
Յաղթիր հաւատքով Դու ամեն փորձութեան,
Աբեղուն աղօթիր, յիշիր քո Տէրը,
Նայի՛ր զօրացնող Յիսուսին վերը։

ԵՐԳ 191.

1.

Ի՜նչպէս բարեկամ է Տէրը,
Որ մեզ միշտ համբերում է.
Ներում է մեր յանցանքները,
Եւ վիշտերն մեր կըրում է։
Քրիստոնեայ, արտօնութիւնըդ
Այս է միշտ բերկրապատար.
Քո ամեն փորձառութիւնըդ
Աղօթքով Տիրոջը տար։

2.

Շատ անգամ խաղաղութիւնը,
Մենք կորցընում ենք իսպառ.
Աղօթքի արտօնութիւնը,
Երբ թողում ենք զանցաբար։
Կա՛յ Յիսուսի պէս քեզ մէկը՝
Յաւակից կամ հոգատար.

Վըստահիր Նըրան քո հոգը,
Աղօթքով Տիրոջը տար։

3.

Դու յոգնած՝ բեռնաւորուած ես,
Սիրելիքըդ հեռացաւն,
Քո Փըրկիչն կանչում է քեզ,
Նա քեզ համար ապաստան։
Յիսուսի բաց բազուկները
Ապաւէն են մըշտաբար.
Դիմիր այնտեղ և բոլորը
Աղօթքով Տիրոջը տար։

ԵՐԳ 192.

1.

Այնպէս անուշ անուն չըկայ,
Չըկայ այնպէս սիրուն.
Ինչպէս որ ծընուելուց առաջ,
Փըրկչին տըրուած Անունը։
Փափագում ենք տեսնել մեր Տէրն,
Տեսնել մեր Հօրը տունը.
Այնպէս անուշ անուն չըկայ,
Ինչպէս Յիսուս անունը։

2.

Հրեշտակն իջաւ, «Յիսուս» ասաց
«Դրնես Նըրա անունը».
Քանզի Նրանով լինելու էր
Մեղքերից փըրկութիւնը։

3.

Յաչէին վրայ էլ գըրեցին այս
Սիրոյ Անուշն աննըման,
Որ մարդ տեսնէ ինչու Ներան
Սիրելու է յաւիտեան։

4.

Եւ հիմա Հօրը մօտ նըստած՝
Նա է մեր Բարեխօսը.
Ուստի սիրենք և միշտ գովենք
Մեր Տէր Յիսուս Քրիստոսը։

ԵՐԳ 193

1.

Ի՞նչ անես որ փըրկուես միայն,
Մեղաւոր յիշիր,
Տէր Յիսուսը վաղուց այն
Արել է մահուն Իր։
Տէր Յիսուս պարտք մեր
Բոլորն է վըճարել.
Եւ մեզ մեծ կամ փոքրիկ բաներ,
Ըզձաց կատարել։

2.

Երբ որ Նա անարգանքով՝
Յաչէին վրայ մեռաւ,
Հոգին առ հայրն յանձնելով՝
Ասաց. «կատարուեցաւ»։

3.

Ո՛վ յոգնած հոգի անյոյս,
Է՞ր չես հաւատում.
Կատարել է բոլորն Յիսուս,
Է՛լ ի՞նչ ես աշխատում։

4.

Հաւատալով Դու Փըրկչիդ,
Եղիր միշտ վըստահ.
Բոլոր քո գործն է մահառիթ,
Դըրա վախճանն է մահ։

5.

Լո՛ւռ նայելով Փըրկչիդ հեզ,
Ձըգիր գործըդ բոլոր.
Նա կատարեալ կ՚անէ քեզ,
Եւ վերջը փառաւոր։

ԵՐԳ 194.

1.

«Կէ՞ս համոզուած» Փրկչին հաւ՚տալու.
«Կէ՞ս համոզուած» սիրտըդ Ներան տալու.
Թերևս ասում ես սա —
«Հոգի առայժմ գընա,
Երբ առիթ գըտնեմ ես՝
Կը կանչեմ քեզ»։

2.

«Կէ՞ս համոզուած», Դու մի ուշանա,

Մեծ հրաւէրին անհոգ մի մընա.
Կանչողն Քրիստոսը է,
Սիրով քեզ ձայնում է.
«Արի յօժարակամ,
Քեզ հանգիստ տամ»։

3.

«Կէ՞ս համոզուած», կ՚անցնի հունձքը շուտ,
Գիտի կընքուի վրճիռ Իւ անշուշտ.
Ահ, մի Դու ետ մընա,
Որ դառն չ՚ողբաս ապա—
Ո՜հ, ո՜հ, կէս համոզուած,
Բայց կորսըւած։

ԵՐԳ 195.

1.

Շնորհաց Աթոռն վեհասքանչ,
Գատրաստ աւեն տեղ մեզ կայ.
Երբ աղօթող ենք սըրտանց,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։

2.

Թէ տըկար ենք կամ աղքատ,
Կամ մեզ հանգիստ մի չը կայ,
Երբ մեր ձայնն է անքնդհատ,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։

3.

Երբ մեր ճարը հատած է,
Եւ ամեն ինչ մեր դէմ կայ,
Երբ մութ խաւարն պատած է,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։

4.

Գանք համարձակ մեր Քրիստոսին,
Ինչ տագնապ որ մեզ վրայ գայ,
Նա չի թողնի մեզ քնաւին,
Տէրն է միշտ մեր մէջ ներկայ։

ԵՐԳ 196.

1.

Ինչ հաստատուն է հիմ մեր հաւատքին,
Դըրւած Աստուծոյ խօսքում սըրբազան.
Անսուտ խոստումներն Նըրա Թանգագին,
Միշտ կան մեզ համար նեցուկ անսասան։

2.

Նա Ինքը Տէր մեր որ սիրով անհուն՝
Մեզ համար տըւաւ Իր անձ պատուական,
Խօսում է մեզ հետ, Ինչ շեշտով սիրուն,
Մեզ՝ որ արել ենք Իրեն ապաստան։

3.

«Երբէ՛ք մի վախիր և մի վըհատիր,
Ես Աստուածդ եմ՝ Քեզ պատրաստ նեցուկ.
Ես միշտ քեզ հետ եմ, խօսքերս չեն պատիր,
Ասպար՝ նպաստ է հըզօր Իմ բազուկ»։

4.

«Որ չըրերից երբ անցնես սըրտաթունդ,
Գետաք թախիծների չը պիտ՝ կոխեն քեզ,
Ներկայութիւնով կ՛օրհնեմ փորձութիւնդ՝
Սըրբագործելով վըշտերդ հոգեկէզ»։

5.

«Նա որ Ինձ ունի իրեն ապաւէն,
Բընաւ չեմ մատնի ձեռքն իր ոսոխին.
Եթէ յարձակեն դըժոխք համօրէն,
Ո՛հ, երբէք ես չեմ լըքի այն հոգին»։

ԵՐԳ 197.

1.

Յաւիտենական էակ,
Ճըշմարիտ Աստուած միակ՝
Արարիր աշխարհ համայն,
կառավար ամենիշխան։
Տիեզերքի դըրութիւն,
Քեզանով է հաստատուն,
Եւ կարգ ու զարդ բընութեան,
Անխախտ կայ Քեզանով միայն։

2.

Մեծութեանդ չըկայ սահման,
Գիտութիւնդ է անպայման.
Անպայման է զօրութիւնդ,
Մըտքից վեր է բարութիւնդ։
Դու ամենին ես պատճառ,

Եւ բարիքներդ են անճառ.
Դու փըրկութեան մեր համար,
Որդւոյդ տըւիր զոհ յարմար։

3.

Ամենօրհնեալ սուրբ Աստուած,
Ինքնակալ Տէր մեր գըթած,
Յընամող, սիրող, նայող,
Բիւր պարգևներ ընծայող,
Մութին մէջ մեր քաղցրը լոյս,
Վըշտերի մէջ հըզօր յոյս,
Դո՛ւ աղբիւր ճոխ օրհնութեան,
Քեզ փառք տըրուի յաւիտեան։

ԵՐԳ 198.

1.

Աստուած է մեր բերդ հաստատուն,
Նա է հըզօր մեր պաշտպան,
Թէ մեզ պատեն վիշտ, փորձութիւն,
Նա է մեր քաջ օգնական։
Այն հին չար թըշնամի՝
Մեզ վընասել կամի.
Միշտ կայ դարանամուտ,
Որ դաւերով անգութ՝
Մեզ տապալէ յաւիտեան։

2.

Մեր զօրութիւնն է սին՝ չընչին,

Մեր քաջուԹիւնը խոտան.
Բայց զօրավիգ ունենք Քրիկէին,
Իշխան է խաղաղուԹեան։
Ո՞վ է այս զօրավարն,
«Ցիսուս Քրիստոս Աբդարն».
Նա յաղԹեց փորձիչին.
Եւ Թշնամւոյն վերջին՝
Ծափանեց յաւիտեան։

2.

Թող աշխատէ իր դաւերով,
Մեզ բըռնելու սատանան.
Մենք վախ չունենք մինչ Տէրն սիրով՝
Կայ մեզ միշտ պատրաստ պաշտպան։
Եւ դէք պատիր անԹիւ,
Թէ պաշարեն խըստիւ,
Կարենք մենք անվեհեր
Կանգնել՝ մինչ Տէրը մեր
Ապաւէն է յաւիտեան։

ԵՐԳ 199.

1.

Վէմ յաւիտենական,
Աղբիւր ողորմուԹեան,
Ո՞ւր կայ հըրաշք ըսքանչելի,
Քո մեծ սիրոյ նըման։
Ոչ մի հրեշտակ երկնից,

Աստուածային փո շնորհք՝
Կարէ պատմել ըստ արժանւոյն,
Կամ գիտէ սիրոյդ խորք։

2.

Ո՛վ Դու Գառնուկ գենեալ,
Քոնն է փառաց աթոռն.
Դու ես երկնից գեղեցկուԹիւն,
Դու ես նըրա կեդրոն։
Փափագում ենք, ով Տէր,
Իսպառ Քեզ նըմանել.
Մեր գործ լինի՝ Քեզ յաւիտեան
Սիրել, փառաբանել։

ԵՐԳ 200.

1.

Օ՜ն, Քրիստոնեայ զինուո՛րք,
Օ՜ն, յառաջ ՚ի մարտ.
Յիսուսին նայելով,
Կըռուենք քաջայաղԹ։
Քրիստոս, Մեծ Զօրապետն,
Առաջնորդ է մեր.
Օ՜ն, յառաջ, խաչի դրօշն
Բըռնելով ՚ի վեր։
Օ՜ն, Քրիստոնեայ զինուո՛րք,
Օ՜ն, յառաջ ՚ի մարտ.
Ցիսուսին նայելով,
Կըռուենք քաջայաղԹ։

2.

Յիսուսի անունով,
Փախչում է սատան.
Օ՜ն, Քրիստոնեայ զինուո՛րք,
Ելե՜նք յաղթութեան։
Սարսում են դըժոխքը
Զայնից օրհնութեանց.
Երգե՜նք, ապա՛, երգե՜նք,
Մենք բոլոր սըրտանց։

3.

Օ՜ն, չըլենք յառաջ մենք,
Եղբա՛րք, միաբան,
Սիրոյ և հաւատքի
Հոգւով անխափան.
Մի մարմնում մըկըրտուած,
Միևնոյն Հոգւով։
Սուրբ դաւանութեան մեր՝
Կանգնե՜նք չատագով։

4.

Կ՝անցնեն թագ և գահեր,
Եւ աշխարհ համայն.
Բայց յաղթող Գառն յաւէրժ,
Կ՝իշխէ անպայման։
Զուր է չանանում մեզ
Յաղթել սատանան,
Քրիստոսի խոստմունքը՝

Կը մնայ անսասան։

5.

Օ՜ն, մեզ հետ միացէ՛ք,
Դուք ազգեր համայն,
Յաղթութեան երգին մէջ՝
Խառնեցէ՛ք ձեր ձայն։
Փա՜ռք և պատի՛ւ Քըրկչին
Մատուցուի միայն,
Անդադար գովասանք
Երգուի յաւիտեան։

ԵՐԳ 201.

1.

Մի կեանք ունեմ, այն միայն
Տիրոջն է միշտ պատկանում.
Մի կամք ունեմ որ Նըրան
Հաճոյ լինեմ ամենում։

2.

Նա ինձ գընեց գընով մեծ,
Իր արիւնով թանգագին.
Քաշեց սիրով և սեղմեց
Իր սըրտի վրայ անմեկին։

3.

Զըրի շնորհքով՝ անհամար
Ըեղքերից իմ ազատեց.
Իր ձեռքով ինձ՝ Իր համար

Ջոկեց, սըրբեց և գաւեց։

4.

Իմ կամքն արդէն Ներանն է,
Ես իմ անձի տէրը չեմ.
Նա իմ սրտի իշխանն է,
Ներան միշտ Տէրս կը կոչեմ։

5.

Իմ զօրութիւնն էլ Նա է,
Եւ Նա Ինքն է իմ հանգիստ.
Յիսուս յաղթող հրեակայ է,
Ես ծառայ եմ Ներա միշտ։

6.

Իմ յոյսն, իմ կեանքն, Նա Ինքն է,
Իմ պահպանողն յաւիտեան.
Ալ կողմը Հօր՝ երկինքն է,
Բազմած Աթոռն մեծութեան։

7.

Մի կեանք և մի կամք ունեմ,
Տիրոջն եմ միշտ նըւիրած.
Ներան պիտի պատկանեմ,
Մինչև հասնեմ Իր փառաց։

ԵՐԳ 202.

1.

Ահա կանգնած դըռանդ առաջ,
Քեզ կանչում եմ ես գըրկաբաց.

Մեղաւոր սիրտ, լըսի՛ր շեշտերս,
Կարճմ գալ ներս, կարճմ գալ ներս։
Ահա կանգնած դըռանդ առաջ,
Քեզ կանչում եմ ես գըրկաբաց.
Մեղաւոր սիրտ, լըսի՛ր շեշտերս,
Կարճմ գալ ներս, կարճմ գալ ներս։

2.

Փուշով պսակուած ես Քեզ համար,
Ըսպասեցի համբերատար.
Արդ լըսի՛ր դու Փըրկչիդ աղերս,
Կարե՞մ գալ ներս, կարե՞մ գալ ներս։

3.

Թո՛ղ դուրս չ՚անցնի իմ աղերսանք,
Յիշի՛ր իմ վիշտ ու դառն տանջանք.
Մահուան մըղեց քեզ համար սէրս,
Մեղաւո՛ր սիրտ, կարե՞մ գալ ներս։

4.

Քեզ բերել եմ ներում, հըրճուանք,
Խաղաղութիւն, սուրբ սէր, նոր կեանք.
Խե՛ղճ սիրտ, ահա՛ իմ նուէրներս,
Ինձ կընդունե՞ս, կարճմ գալ ներս։

ԵՐԳ 203.

1.

Փըրկչին եկէ՛ք, ո՛հ, մի՛ ուշանաք,
Բաց է ճամբան, սուղ է ժամանակ.

Կանգնած մեր մէջ՝ ձայնով սիրագուարթ
Կանչում է. «Եկէք արդ»։

Ո՛հ, ինչ քաղցր պիտի լինի հրճուանքդ
Երբ, Փըրկի՛չ, քեզի հետ միանանք.
Եւ վայելենք դէմքիդ լոյսն անշէջ,
Մեր երկնային տան մէջ։

2.

Ամենին է Նըրա հրաւէրը,
Անսահման է գութը և սէրը.
Դիմողին Նա չի մերժի երբէ՛ք,
Մի՛ վարանիք, եկէ՛ք։

3.

Նա մեր մօտն է այսօր մանաւանդ,
Լըսենք ձայնին, լինենք հընազանդ.
Մենք էլ հրաւէրն կըրկնենք մարդ-
կանց հէքր
«Տէրն կանչում է, եկէ՛ք»։

ԵՐԳ 204.

1.

Ես լըսեցի ձայն Յիսուսի,
Ասաց. «Ինձ մօտ ե՛կ դու,
Իմ կուրծքի վրայ, յոգնած հոգի,
Գըլուխըդ հանգչեցրո՛ւ»։
Ինչպէս էի եկայ Նըրան,
Կոյր, մերկ, յոգնած տըրտում.

Այստեղ գըտայ ապաստարան,
Նա ինձ տըւաւ խընդում։

2.

Ես լըսեցի ձայն Յիսուսի,
Ասաց ինձ սիրալիր.
«Կենաց ջըրից խըմի՛ր ձըրի,
Եւ խըմելով՝ ապրիր»։
Եկայ, Նա իմ՝ լցրեց բաժակ
Այն կենսատու ջըրով,
Անցրեց հոգուս բոլոր պապակ,
Տըւաւ կեանք անխըռով։

3.

Ես լըսեցի ձայն Յիսուսի.
«Ես աշխարհի լոյսն եմ,
Ե՛կ, որ փոխեմ պայծառ լուսի՝
Խաւարը քո նըստեմ»։
Եկայ, Նա ինձ իր մեծ սիրուց,
Եզաւ լուսոյ շըրջան.
Այդ լոյսըն է իմ ուղեցոյց՝
Մինչև ճամբիս վախճան։

ԵՐԳ 205.

1.

Ո՛վ հոգւոյս սիրող Քրիստոս,
Ի՞նչքան անուշ է Քո ծոց.
Երբ գոռում են յորդահոս՝

Մութ ալիքներ հողմակոծ,
Դու ինձ համար թևաբաց՝
Յենարան ես հանգրստեան.
Մինչ վերև հասնեմ քո փառաց,
Հանգչեմ քեզ մօտ յաւիտեան։

2.

Ես չ'ունիմ ապաւէն այլ,
Դու ես վէմըս, ով իմ Տէր.
Ալեաց միջից գոռ՝ մրռայլ,
Նայում եմ քեզ՝ դէպի վեր,
Դու չես թողնի ինձ մենակ,
Ես ուրիշին կարօտ չեմ.
Ա՛խ, կուրծքիդ վրայ շարունակ՝
Տուր ինձ սիրովըդ հանգչեմ։

3.

Ո՛վ Փըրկիչ իմ, շնորհքիդ ծով
Թաղեց մեղքերս բազմաբիւր.
Պիղծ էի բոլոր անձով,
Սըրբեցիր ինձ, տըւիր դիւր,
Դու ես ակ կենաց, ով Տէր,
Սիրաըդ սիրոյ գետ է մեծ.
Ա՛խ, ծարաւ եմ, թող քո սէր
Ինձ ողողէ ծոցիդ մէջ։

ԵՐԳ 206.

1.

Դուռն է թակում, ներս թող գայ
Տե՛ս, ապաստամ է, ով է Նա.
Պանդուխտ է Նա, արքայանման,
Տեսած էք այդպիսի բան։
Ո՛վ հըպարտ սիրտ, դուռն չուտով բաց,
Ներս առ սիրով՝ Փըրկչիդ գըթած։

2.

Ահա, կանգնած թակում է,
Մըտնելու փափագում է,
Մինչև ճըրք պինդ փակուած պիտի
Մընայ դուռը քո սըրտի.
Տես, փուշեր, խոտեր ծածկել են,
Մուտքըն ինչպէս խըցկել են։

3.

Դուռն է թակում, ով է Նա,
Շատ է ապասել՝ ներս թող գայ.
Տեսէ՛ք ձեռքերը ծակոտուած,
Գլուխ, մարմինը խոցոտուած.
Քաղցր է ղէմքը, օ՜հ, ինչ քընքուշ,
Ներա սէրը ինչ անուշ։

4.

Սուրբ Հիւրդ, մըտիր աներկբայ
Սըրտիս մէջ, քեզ պատրաստ կայ.
Երկար ապասել քեզ տըւած եմ,

Այժմ սիրուդդ ես յաղթուած եմ.
Տիրիր սըրտիս Դու անխըտիր,
Օրհնեա՛լ Յիսուս, ներս մըտիր։

ԵՐԳ 207.

1.

Ընտրիր ուղիս, ով Տէր,
Թող ինձ լինի խաւար.
Ձեռքովդ առաջնորդիր,
Եղիր ինձ կառավար։
Ես չեմ բընաւ վիճակս
Ընտրել համարձակուում.
Տէ՛ր, լեցրու Դու բաժակս,
Սիրովդ՝ դեռ այս կեանքում։

2.

Ընտրիր բարեկամներս,
Ցաւերս, առողջութիւնս,
Փորձանքս ու մխիթարներս,
Եւ կամ հանգըստութիւնս։
Դու խոստացած ես, Տէ՛ր,
Որ ինձ պահես չարից.
Դու իմ յաւէրժ Ընկերը,
Եւ իմ Մըխիթարիչ։

3.

Երկրիս վրայ Դու լացիր՝
Անօգնական, մենակ.

Ես կեանքը քաղցրաձիր՝
Տըւիր ինձ օրինակ։
Փափագում եմ սըրտով,
Որ Քեզ միշտ հետևեմ,
Եւ Քո սուրբ խորհըրդով՝
Մինչ վերջ յարատևեմ։

4.

Ինչպէս որ կ՚ուզես, Տէ՛ր,
Դու հետս լինես, իրաւ
Ի՛նչ որ ընտրէ Քո սէր,
Ինձ ամենըն է լաւ։
Ամեն բան ապահով,
Ներկայ կամ ապառնի,
Երգեմ միշտ սուրբ ահով,
«Քո կամքըդ, Տէ՛ր, լինի»։

ԵՐԳ 208.

1.

Փառք Յիսուսին, փառք, փառք անհուն,
Որ ձրի փըրկանք և կեանք բերաւ.
կայ ամենին սուրբ քաւութիւն,
կարէ փըրկել քեզ էլ հարկաւ։
Այո՛, Նա կարող է փըրկել,
Թող ամենն այս լըսեն մեծ լուր.
Իր կուրծքն է յենարան,
Իր շիթերն սուրբ արեան՝
Լըւանում են ձիւնից մաքուր։

2.

Անյոյս հոգին մեղսագրրաւ՝
Փըրկում է Նա խեղճ վիճակից.
Տալիս է նրան Հոգւոյն գըրաւ,
Իր հետ անում ժառանգակից.

3.

Սիրոյ բարձունքն գերիվեր են,
Շնորհաց խորերն են անյատակ.
Ա՛խ, խըմիր դու սէրից Իրեն,
Եւ ապրիր միշտ թևերին տակ։

ԵՐԳ 209.

1.

Տիրոջ հետ ամեն տեղ
Հանգիստ ենք, վըստահ.
Ամեն տեղ ուր Նա է,
Յաղթութիւն կըտայ։
Ամեն ուր չէ Յիսուս,
Զրկայ մի բերկրանք.
Ո՛ւր իշխում չէ Յիսուս,
Զրկայ խաղաղ կեանք։

Ամեն տեղ Յիսուսով,
Մեր կեանքն է անդորը.
Ամեն տեղ Յիսուսով,
Ուրախ, բաղդաւոր։

2.

Տիրոջ հետ ոչ մի տեղ,
Զենք լինիլ մենակ.
Բարեկամներ թողնեն,
Նոյնն է շարունակ։
Անապատով տանէ,
Մենք չ՛ունենք երկիւղ.
Ամեն ուր Յիսուս է,
Չ՛ունենք ահ ու դող։

3.

Տիրոջ հետ ամեն տեղ,
Ո՛հ, ինչ մի հըրճուանք,
Եթէ մութ էլ լինի,
Զրկայ մեզ փորձանք։
Մեր Փըրկչին ձեռքի մէջ,
Մենք պաշտպանուած ենք.
Տիրոջ հետ ամեն տեղ,
Միշտ անկասկած ենք։

ԵՐԳ 210.

1.

Ի՞նչ է կեանք մեր՝ մի շոգի,
Որ շատ շուտով վեր կը թըռչի.
Նըման է այն թոյլ պատրոյգի՝
Որ շատ շուտով կարէ հանգչի։

Թըռի՛ր, հոգիս, մի՛ սպասիր,
Այն երջանիկ երկիրն հասի՛ր։

2.

Տէ՛ս, այն փառքը մեծափայլ է,
Լեզուն անկար է պատմել մեր.
Անդ Տէր Յիսուսը բազմեալ է,
Բոլոր սըրբոց Արքան և Տէր։

3.

Յիսուս, յաղթած է մըշտաբար՝
Մեր թըշնամի սատանային.
Եւ բացած է նա մեզ համար,
Ճանապարհ և դուռն երկնային։

4.

Ա՛րդ, մեծ փառքով Իր բոլորտիքն,
Օրհներգում են հոգիք արդար.
Ցընծութիւնով բոլոր երկինքն,
Լեցուցանում են անդադար։

ԵՐԳ 211.

1.

Պանդուխտ ենք այստեղ մենք,
Վերն է տուն մեր.
Փըրկչին պէս Տէր ունենք,
Վերն է տուն մեր։
Աստ ամեն ժամ, իրաւ,
Վըտանգ կայ, վիշտ և ցաւ
Բայց վերը՝ փառք անբաւ,
Վերն է տուն մեր։

2.

Կան Փորձեր շարունակ,
Վերն է տուն մեր.
Կարճ է մեր ժամանակ,
Վերն է տուն մեր։
Փոթորիկն վայրենի,
Շուտ անցած կըլինի,
Հասնենք տուն հայրենի.
Վերն է տուն մեր։

3.

Ուստի ի՞նչ գանգատուենք,
Վերն է տուն մեր.
Շուտ երկրից պիտ՝ գաւառնենք,
Վերն է տուն մեր.
Այնտեղ չըկայ արցունք,
Եւ ոչ էլ հառաչմունք,
Ունենք Փըրկչին խոստմունք.
Վերն է տուն մեր։

ԵՐԳ 212.

1.

Երբ ապրում ենք Տէրում,
Եւ ճամբում Իր խօսքերում,
Լուսաւորում է նա մեր ճամբան.
Սոսկ կամքին Իր՝ յենում,
Ի՞նչ քաղցր է մեզ լինում,

Մեզ որ ապաւինում ենք Ներան,
Ապաւինէր, Յիսուսին դու նայիր,
Կ'ուզես երջանիկ լինել,
Ներան ապաւինէր։

2.

Փարատւում է ըստուերը,
Ջրքանում են ամպերը,
Երբ Ներան մենք շատ մօտ ենք լինում.
Ո՛չ մի ցաւ, ո՛չ մի վիշտ,
Չեն անել անհանգիստ,
Երբ մենք Ներան ենք ապաւինում։

3.

Կարող չենք սէրն Ներա
Վրկայել մեր վերայ,
Մինչև Ներան յանձնբռենք ամենում.
Շատ են Ներա չնորհքներ,
Մեր բոլոր մրաքից վեր,
Երբ հնազանդում ենք, ապաւինում։

4.

Մեր բոլոր աշխատանք,
Կամ ամեն մի զբրկանք,
Առատապէս է փոխարինում.
Մեզ ճընշում չէ մի խաչ,
Եւ ո՛չ իսկ մի հառաչ,
Երբ մենք Ներան ենք ապաւինում։

5.

Քաղցր է լինել իր հետ,
Ներսեել իր մօտ յաւէտ,
Կամ հետը քալել երկար ճամբան.
Կատարել իր պատգամ,
Կանխել յօժարակամ,
Անվախ ապաւինել միշտ Ներան։

ԵՐԳ 213.

1.

Անյոյսին յոյս, ով Յիսուս,
Հաստատուն խարիսխ հոգուս.
Դու փրկեցիր իմ հոգին,
Քո արիւնով թանգագին։

2.

Աստուածանից հեռացած,
Կորած էի անկատած.
Փընտռեցի ես ապաւում,
Տըւիր ցընծում անպատում։

3.

Շատ օրեր Քեզ'նից հեռի,
Մեղքին ես ծառայի գերի.
Անյոյս էի, սրրտաբեկ,
Ջ'ունէի լոյս մի երբեք։

4.

Քեզ գըտնել էր, Տէր, իմ ջանք,

Աւ ինչ էր իմ հառաչանք.
Վէրքերդ եղան իմ դարման,
Գին կեանքիս՝ շիթ Ձո արեան։

5.

Տէր Յիսուս, յոյս անյոյսին,
Տո՛ւր ինձ՝ ինչ հետ միասին
Քայլեմ, գործեմ համաձայն,
Ապրեմ յաւէտ սիրալյան։

ԵՐԳ 214.

1.

Երբ խաղաղութիւն իբրև գետ կը յորդէ,
Կամ ցաւք իբր ալիք հոդմայոյզ,
Ինչ որ է բաժինս ուսուցիր Դու ինձ թէ՝
Բարի է, բարի է իմ հոգւոյս։

Բարի է իմ հոգւոյս,
Բարի է, բարի է իմ հոգւոյս։

2.

Թէև փորձութիւնք և դէմք ինձ պատեն,
Յիշեմ թէ գլխաւ Տէրն սիրուն,
Իմ թշուառութիւնս նկատած է արդէն,
Ինձ համար թափած է Իր արիւն։

3.

Մեղքերս, ո՜հ, խորհուրդ մեծ և ըսքանչելի,
Մեղքերս, ոչ մասամբ այլ լըրիւ,
Խաչին վրայ գամուած, ոչ ևս ինձ կըրելի,
Փոխք Տիրոջս, այժմ և միշտ փառք, պատիւ։

4.

Տէ՛ր, շուտ գայ այն օրն երբ ցընդին սև
ամպերն,
Հաւատքը լինի տեսութիւն.
Երբ փողը հընչէ և իջնէ փառաց Տէրն,
Այս նաև բարի է իմ հոգւոյն։

ԵՐԳ 215.

1.

Թո՛ղ ուրախ լինեն սըրտերն մեր,
Եւ գովութիւնով լեցուած.
Հայրն կոչում է մեզ որդիներ,
Իր Որդւոյին ենք մօտեցուած։

Մենք ուրախ ենք, մենք ուրախ ենք,
Եւ ամեն օրեր ուրախ.
Կեանքի ճանապարհը գեղեցիկ է,
Ուրեմն լինենք միշտ ուրախ։

2.

Հայրն իր ձեռքով մեզ տանում է,
Գատերազմում պաշտպանում.
Սիրոյն խորքերն մեզ բանում է,
Մեր վախերն է խափանում։

3.

Երբ Ներանից հեռանում ենք,
Խաւարում է մեր շուրջը.
Այս ու այն կողմ տատանում ենք,
Եւ տըրտմում է մեր անձը։

4.

Բայց արդարները կը փայլեն,
Ջեն շեղուի ճանապարհից·
Շընորհք Նըրա պիտի վայլեն,
Եւ հեռու կենան չարից։

ԵՐԳ 216.

1.

Յիսուս ներած է իմ մեղքերս,
Ազատ եմ, ազատ եմ.
Զոհած է կեանքն ինձ համար Տէրս,
Ազատ եմ, ազատ եմ։

Աստուծոյն փառք, Աստուծոյն փառք,
Գրաւն իմ տեղ մեռաւ, պիտեմ.
Աստուծոյն փառք, Աստուծոյն փառք,
Ազատ եմ, ազատ եմ։

2.

Վըստահելով իմ Տէր-Փըրկչին,
Եղայ ես միշտ ազատ.
Պահում է ինձ Իր Սուրբ Հոգին,
Ազատ եմ, մ'շտ ազատ։

3.

Մեղքի բոլոր չըղթաներից,
Ազատ եմ, ազատ եմ.
Աստ'ծոյ որդի ծընուած վերից,
Ազատ եմ, ազատ եմ։

4.

Զար կըրքերից գերեվարող,
Ազատ եմ, ազատ եմ,
Եւ վիճակից խեղճ յուսաթող,
Ազատ եմ, ազատ եմ։

ԵՐԳ 217.

1.

Յիսուսի պէս չըկայ մի բարեկամ,
Ո՛չ մէկը, ո՛չ մէկը,
Որ մեր ցաւերն բուժէր յօժարակամ,
Ո՛չ մէկը, ո՛չ մէկը։

Յիսուսը մօտ է մեզ ամեն ժամ,
Թէև թողնեն էլ ամենքը.
Յիսուսի պէս չըկայ մի բարեկամ,
Ո՛չ մէկը, ո՛չ մէկը։

2.

Ո՞վ կայ Նըրա պէս վեհ ու հրաշափառ,
Ո՛չ մէկը, ո՛չ մէկը.
Ո՞վ կայ Նըրա պէս քընքուշ ու խոնարհ,
Ո՛չ մէկը, ո՛չ մէկը։

3.

Չըկայ մի ժամ որում Նա չէ մեզ մօտ,
Ո՛չ մէկը, ո՛չ մէկը.
Մութն էլ պահող չէ լուսից Իր կարօտ,
Ո՛չ մէկը, ո՛չ մէկը։

4.

Ո՞ր մէկ սուրբը լքուել է Յիսուսից,
Ո՛չ մէկը, ոչ մէկը.
Ո՞ր մեղաւորն մերժուել է Իր լուսից,
Ո՛չ մէկը, ոչ մէկը։

5.

Պարգև մի բնաւ Փըրչկի պէս տեսած էք,
Ո՛չ մէկը, ոչ մէկը.
կը ժխտէ՞ մեզ երկինք կամ մի օրհնէք,
Ո՛չ մէկը, ոչ մէկը։

ԵՐԳ 218.

1.

Յիսուսին ԵԿ, Յիսուսին ԵԿ,
Յիսուսին ԵԿ հիմա.
Հիմա Յիսուսին ԵԿ,
Յիսուսին ԵԿ հիմա։

2.

կը փըրկէ քեզ.

3.

Նա կարող է.

4.

Նա յօժար է.

5.

Հաւատա դու.

6.

Հաւատում եմ.

7.

կ՛ապաւինեմ Նըրան.

8.

Փառք Յիսուսին, Ամէն։

ԵՐԳ 219.

1.

Երկնային հանգիստ, սէր, խընդում, պըսակ,
Հաճոյքներ բազմատեսակ,
Սուրբերի համար կայ վերն պատրաստուած,
Որ կըտայ մեզ Հայրն Աստուած։
Ո՜հ, կամիմք թռչել՛ի վեր,
Լուսոյ աշխարհն անըստուեր.
Անդ երգել Փըրկչին անուն,
Եւ Նրա սէրն անհուն.
Հայրենիք, հայրենիք,
Վայր սուրբերի միշտ երջանիկ։

2.

Վերն ամէնն է սէր, խանդ ու խինդ և երգ,
Հրեշտակներն էլ մեր ընկերք.
Սուրբ արեամբ գընուած թագեր պատուական,
Անդ մեզ համար պատրաստ կան։

3.

Մեղք ու վիշտ, հոգեր, արցունք դառն, աղի,
Ահը մահուան մանգաղի,
Վերին հայրենեաց պալատների մէջ,
Պիտի յաւէրժ զըտնեն վերջ։

4.

Անդ կեանքն է անմահ, ցերեկն անգիշեր,
Ծառ, ծաղիկ չ'ունենն փուշեր.
Քանզի Յիսուսը կեանք է, լոյս, արև.
Օ՜հ, սիրուն վայր, արգարև։

ԵՐԳ 220.

1.

Սըրտիդ դըրան առաջ կանգնած՝
Ես թակում եմ մեղմօրէն.
Ըսպասում եմ բազկատարած՝
Ես քո միակ ապաւէն։
Քեզ հետ կ'ուզեմ ընթրիք անել,
Բացիր դուռը ինձ համար.
Թէ յաղթութիւն կ'ուզես տանել՝
Ես կըլինեմ զօրավար։

2.

Յիշիր իմ խաչ, յիշիր իմ սէր,
Եւ մի տեղ տո՛ւր ինձ ապատ.
Ըսպասում եմ ես անհամբեր,
Դուրսը ցուրտ է, ձիւնապատ։
Մ՛ախ, դու հըպարտ սիրտ մարդկային,
Փըրկչին համար դուռը բաց.
Տես, կանգնած է դըռան շէմքին,
Եւ թակում է գըրկաբաց։

3.

Թէ սոված ես, աղքատ ու մերկ,
Կը խընամէ շարունակ.
Տես՝ իր ճակատն արիւնաներկ,
Եւ փըշեղէն՝ իր պըսակ։
Նա իր գահը կը հաստատէ
Քո սըրտի մէջ մեղաւոր.
Նա իր արեամբ քեզ կ'ազատէ
Գերութիւնից հէնց այսօր։

4.

Նա թակում է սիրով անբաւ,
Ներս ընդունիր իբրև հիւր.
Երբ կըլինես քաղցած, ծարաւ,
Նա քեզ կըտայ հաց և ջուր։
Ներս առ Փըրկչիդ քաղցրիկ ու հեզ,
Եւ դու հանգիստ կըգըտնես.
Նա էլ մի օր կըբանայ քեզ՝
Իր տանը դուռ՝ որ մըտնես։

ԵՐԳ 221.

1.

Երջանիկ են ամեն նըրանք՝
Որ գըտել են Փըրկչից նոր կեանք,
Եւ դիզել են վերն իրենց գանձ.
Ո՛չ մի լեզու և ո՛չ մի անձ
Կարէ պատմել փառքը սըրբոց՝

Որ սիրոյ հաճի ունենն Տիրոջ։

2.

Մեր կենացը բոլոր օրերն,
Պիտի յաւէտ օրհնենք մեր Տէրն,
Փըրկութիւնն է Նրանով միայն.
Մ՚խ, թէ ամենքն էլ հաւատան,
Հասնեն ձըրի այդ փըրկութեան,
Մէկ ցընծում, մէկ երգ ունենան։

ԵՐԳ 222.

1.

Յիսուս է միշտ մեր առաջնորդ,
Ո՜հ, ինչպիսի օրհնեալ խորհուրդ.
Ուր տանէ ձեռքն առաջնորդող,
Զըկայ փորձանք, ոչ ահ ու դող։

Յիսուս Ինքն է մեզ առաջնորդ,
Մեր պաշտպանը հանապազորդ.
Մենք աշակերտ գըտնըւենք միշտ,
Իր քայլերին հետևող ճիշտ։

2.

Թէ թափառենք անապատում,
Թէ եղեմի լինենք դրախտում,
Լոյս կամ խաւար թէ մեզ պատէ,
Դարձեալ Տէրն մեր առաջնորդ է։

3.

Տէր, ձեռքում մեր բըռնենք ձեռք Քո,

Զը տըրտընջենք կամքիդ ներքոյ.
Քեզ հետևենք այս մութ ձորով,
Հանգիստ սըրտով և անխըռով։

4.

Երբ կատարենք ընթացքը մեր,
Երբ սըրբոց հետ մենք ելլենք վեր,
Գահից հոսող գետին մօտ մեզ,
Կ՚առաջնորդէ Գառնուկը հեզ։

ԵՐԳ 223.

1.

Ո՜հ, նայիր, վեր, ով մեղաւոր,
Տես, քո Փըրկիչն առատաշնորհ,
Յաղթեց մահով սատանային,
Բերաւ մեզ կեանք Աստուածային։

2.

Դիմիր Նըրան դու լիայոյս,
Ընդդիմիր որ Նա քեզ տայ Իր լոյս.
Ո՜հ, Նա հեղաւ Իր սուրբ արիւն,
Պատրաստելով ձրի փըրկութիւն։

3.

Վըստահ եղիր, Նա քեզ կը տայ
Խաղաղութիւն. լո՛կ հաւատայ,
Որ Նա մեռաւ քեզի համար,
Քաւեց մեղքերն քո անհամար։

ԵՐԳ 224.

1.

«Խաղաղութիւն, լըրիւ և պատարուն».
Մեղմ խօսում է Տէր Յիսուսի արիւն։

2.

«Խաղաղութիւն.» մէջ խաւարի, լուսի,
Ինչ որ էլ՝ բարի է կամքն Յիսուսի։

3.

«Խաղաղութիւն.» փորձանք կան բիւրաւոր,
Յիսուսի գըրկում՝ հանդիստ ենք, անդորր։

4.

«Խաղաղութիւն.» զատուած ընկերներից,
Նըրանց և մեզ Տէրն է պահող վերից։

5.

«Խաղաղութիւն.» երբ մութ է ապագան.
Յիսուս նըստած է գահն իշխանական։

6.

«Խաղաղութիւն.» թէ դայ կենաց վախճան,
Մահուան վրայ էլ Յիսուս է յաղթական։

7.

Հերիք է. վիշտ, փորձութիւն կ՚անցնի,
Պատրաստ է մեզ խաղաղութիւն երկնի։

ԵՐԳ 225.

1.

Ես սիրում եմ միշտ պատմել թէ՝
Տէրը զոհեց կեանքըն Իւր.
Պիղծ էի ես, Իր արիւնով

Լըւաց մեղքերս բազմաբիւր։
Ես սիրում եմ միշտ պատմել թէ՝
Տէրը զոհեց կեանքըն Իւր.
Նա ինձ համար մեռաւ յօժար,
Լըւաց մեղքերս բազմաբիւր։

2.

Նա ինձ գըտաւ՝ մոլորուածիս,
Իր գառնուկըն ինձ արաւ.
Խաղաղութիւն պարգեւեց ինձ,
Եւ Իր ուսին վրայ առաւ։

3.

Հիւանդ էի՝ լի վէրքերով,
Յոգնած և թուլացած խիստ.
Ամեն յաւերն իմ բըժշկեց,
Անձիս տըւաւ Նա հանդիստ։

4.

Երբ լեռներով ես անցնում եմ,
Շեղուել պատրաստ են ոտքերս.
Բայց Նըրանով ես պահւում եմ,
Նա Յիսուսն է, բարի Տէրս։

5.

Ինձ Յիսուս չի թողնի երբէք,
Նա միշտ մօտ է ինձ, հարկաւ.
Նա չի անի ինձ սըրտաբեկ,
Նըրան լինի Փա՜ռք անբաւ։

ԵՐԳ 226.

1.

Ահա մի օր անցաւ կըրկին,
Այլևս դառնալու չէ.
Արդէն գիշերն հասաւ մըթին,
Որ մարմին մեր հանգչէ։

2.

Բայց յաւիտեան մընայ Տէրը,
Անփոփոխ իր փառքում.
Մեր գիշերներն և օրերը՝
Գրըուած են իր գըրքում։

3.

Քեզ ենք յանձնում հոգի, մարմին,
Ո՛վ Աստուած, այս գիշեր.
Եւ առաւօտ լուսածագին,
Կ՛երգենք Քեզ նոր երգեր։

4.

Բայց թէ Քեզ՛նից մահուան պատգամ,
Այս գիշեր վրայ հասնի.
Քեզ մօտ հանգչել, ով Բարեկամ,
Ունենք խոստումնըդ բարի։

ԵՐԳ 227.

1.

Աստուած ունենք. բաւ է սա,
Ո՛հ, էլ ինչ կայ սրանից լաւ.

Մ՛թթէ մեծ պատճառ չէ դա,
Բերկրանքում թաղել մեր ցաւ։
Երբ Յիսուսն է մեր Հովիւ,
Կեանք կը վարենք գոհ սըրտիւ.
Ի՞նչ կ՛անէ Թըշնամեաց դաւ,
Նա կը պահէ մեզ հարկաւ։

2.

Աստուած ունենք. բաւ է սա,
Ի՞նչ յաւել պիտ՝ ուզենանք.
Ծանըր խաչից չետ կըտայ՝
Վերը պըսակ և խրախճանք։
Ինչ էլ տայ, ինչ էլ առնէ,
Նա մեր Աստուած և Հայրն է.
Վերջըն Իր մօտ պիտ՝ գընանք,
Յաւիտեան Իր հետ մընանք։

3.

Աստուած ունենք. բաւ է սա,
Լոյս մեր երբ մութն է պատում,
Անտառումն է մեզ ճամբայ,
Ջով աղբիւր՝ անապատում։
Թէ վիճակ մեր աղքատիկ,
Փոյթ չէ, ունենք մեծ բարիք.
Մեր գանձն է Նա անապատում,
Անսահման և անհատում։

4.

Աստուած ունենք բաւ է սա,
Ի՞նչ կարող է վնասել մեզ.
Իր զաւակն ենք աներկբայ,
Ինքն այդպէս է ասել մեզ։
Մենք հարուստ ենք և մեր վիշտ

Կը տանենք Հօրը մօտ միշտ.
Նա կ'պահէ մեզ խնդապէս,
Ի՞նչ կ'ասէ մեզ մարդը վէս։

5.

Աստուած ունենք. բաւ է սա,
Փառք յաւէտ Իր սուրբ Անուան.
Սիրով մեզ քաշում է Նա,
Դէպ տունն Իրեն հայրական։
Նա մեր Փըրկիչն ու Տէրն է,
Մենք Նըրանն ենք, Նա մերն է.
Մահ, դըժոխք և սատանան,
Մեզ ահ չ'ունենն յաւիտեան։

ԵՐԳ 228.

1.

Ես կեանք ունեմ Տէր Յիսուսում,
Մահը չ'ունի էլ խայթոց.
Մեղք ու մահից չեմ վախենում,
Նա իմ բերդն է և ամրոց։

2.

Բաց է, ահա, Նըրա բազուկ,
Ուր հանգչում է իմ հոգիս.
Ուր նընջում եմ իբրև մանուկ,
Մեզմ ժըպիտը երեսիս։

3.

Բարձրացնում եմ յուսոյ խարիսխ,
Եւ նաւարկում դէպի տուն.

Նըրա խօսքը մեղրախորիսխ,
Ինձ տալիս է զօրութիւն։

4.

Այո, Դու իմ փըրկութեան վէմ,
Քեզ վըրայ եմ յուսացած.
Ե՞րբ կըտեսնեմ Քեզ դէմ առ դէմ,
Դու իմ Տէրը և Աստուած։

ԵՐԳ 229.

1.

Ի՞նչ կըլինի քո ապագան.
Ինձ գալիս է ամեն վայրկեան՝
Մի հարց խըրթին և կարևոր,
Ո՞ւր պիտի գնաս մեռնես այսօր։
Կեանքդ ապագայ, ո՛հ, յաւիտեան,
Ո՞ւր պիտի քո անցնի համայն։

2.

Տէր Յիսուսին շատեր անձամբ՝
Մօտենում են անկեղծ զըղջմամբ.
Սէր, խընդութիւն, ո՛հ, իրական,
Նըրանց բաժինն է մըշտական։

3.

Ոմանք թողած են նեղ ճամբան,
Հետևելով լայն պողոտան.
Ի՞նչ պիտ' լինի, դիտես, վաճառ,
Եթէ նըրանք դարձի չըգան։

4.

Եթէ երբէք չը հաւատաս,
Եւ հէգ հոգիդ Նըրան չըտաս.
Գիտ՝ կորսըւես, ոհ, յաւիտեան,
Անյոյս յաւէտ, թըշուառական։

5.

Բայց երբ իրաւ դու դարձի գաս,
Եւ Նըրան քո սիրտ, հոգին տաս՝
Սէր, խինդ յորդէ պիտի առատ,
Մեղքիդ բեռից լինես ազատ։

Ե Ր Գ 230.

1.

Ո՜հ, մի՛ մերժեր Փըրկչիդ հրաւէր,
Եւ լոյսին դէմ աչքդ մի գոցեր.
Ո՛վ մարդ սիրտըդ մի խըստացներ։
Փըրկուի՛ր այս գիշեր։

Ինչո՞ւ չէ այս գիշեր, ինչո՞ւ չէ այս գիշեր,
Պատեհ ժամ է, փըրկուի՛ր այս գիշեր։

2.

Գուցէ արևն է՛լ չըծագի,
Դադրեն րոպէք ժամանակի,
Ապա Նա էլ քեզ չի յիշեր,
Փըրկուի՛ր այս գիշեր։

3.

Երկար միջոց Փըրկիչըդ հեզ,

Ըսպասում է անձկանօք քեզ.
Ո՜հ, արդ մի անգամ ըզգաստ լի՛ր,
Փըրկուի՛ր այս գիշեր։

4.

Մեր Փըրկիչն մէկի չի մերժի,
Իր խոստումն երբէք չի ղըժի.
Քեզ ուղղում է այս լուրջ հրաւէր,
Փըրկուի՛ր այս գիշեր։

Ե Ր Գ 231.

1.

Անձկոտ, կըրքոտ մեր օրերում՝
Երբ կորչում են շատ հոգիներ,
Դու լուրջ, խոհուն, յուսապատար,
Աչքերդ դարձրո՛ւ երկինքն ՚ի վեր։

2.

Շուրջըդ փորձանք, զըրկանք, աւեր,
Քեզ յուզում են վըշտի ծովեր.
Դու մըրմունջներ՝ ջերմ, սըրտագին,
Ցըղէ Տիրոջ երկինքն ՚ի վեր։

3.

Դու մունետիկ եղիր արի,
Ընդարմացած շարժիր սըրտեր.
Թող քո շուրջը ամենն քեզ պէս,
Ցոյսերն ուղղեն երկինքն ՚ի վեր։

4.

Ո՛հ, մեր աշխարհն է վերևում,
Ա՛նդ յաղթութեան մեր պըսակները.
Օ՛ն, համարձակ, զըւարթ կոչենք,
Ո՛վ եղբայրները, ՚ի վեր, ՚ի վեր։

ԵՐԳ 232.

1.

Մի՛ մերժիր դու քեզնից հոգին,
Մի՛ ուշացնիր և ոչ մի օր.
Գիտես պէտք է դառնալ Փըրկչին,
Դարձի՛ր Նըրան դու հէնց այսօր։
Լաւ է այսօր, լաւ է այսօր, } կրկնել
Դարձի՛ր Նըրան, դու հէնց այսօր։ }

2.

Մի՛ նայիր դու աչ և ահեակ,
Ո՛հ, ճիսուսին դիմի՛ր այսօր.
Նա է կեանքիդ Աղբիւրն միակ,
Դարձի՛ր Նըրան դու հէնց այսօր։

3.

Ի՞նչ է տալիս աշխարհքը քեզ—
Ունայնութիւն ամենայն օր.
Թէ որ հաստատ փըրկուել կ՚ուզես,
Դարձի՛ր Նըրան դու հէնց այսօր։

4.

Մեղաւորին Նա փըրկում է,
Նըրան անում է բաղդաւոր,

Ցաւ ու վէրքերն բըժըշկում է.
Դարձի՛ր Նըրան դու հէնց այսօր։

5.

Դարձի՛ր Նըրան բոլոր սըրտիւ,
Մի՛ լինիր դու կասկածաւոր.
Նա սիրում է քեզ հաւաստիւ,
Դարձի՛ր Նըրան դու հէնց այսօր։

ԵՐԳ 233.

1.

Գընում ենք մեր Հօր տունը վեր,
Գալ կուզես, գալ կուզես,
Այնտեղ կ՚օրհնենք Փըրկիչ Տէրն մեր,
Գալ կուզես, գալ կուզես։
Բիւրաւորներ մեզ՚նից առաջ,
Արդէն այնտեղ են գընացած,
Տէրն սպասում է քեզ գըրկաբաց.
Գալ կուզես, գալ կուզես։

2.

Գնում ենք տեսնել Գառնուկին հեզ,
Գալ կուզես, գալ կուզես.
Քաղցրութեամբ Նա կընդունի քեզ,
Գալ կուզես, գալ կուզես.
Փըրկիչն է մեր ուրախութիւն,
Նա է սըրտի մեր ցընծութիւն,

Այնտեղ չըկայ ցաւ, հեծութիւն.
Գալ կուզեմ, գալ կուզեմ։

3.

Եւ դըժուար չէ ճանապարհը,
Գալ կուզեմ, գալ կուզեմ.
Յիսուսին ես, թող աշխարհը,
կարող ես, կարող ես։
Տէրն կանչում է կըրկին, կըրկին.—
«Ե՛կ, դիր յոգնած գլուխդ իմ կրծքին,
ես կը բուժեմ ցաւերդ ներքին.»
Պէտ է գաս, պէտ է գաս։

4.

Ե՛կ մեղաւոր, սըրտից ասիր,
Գալ կուզեմ, գալ կուզեմ,
կանչիր Փրկչին, մի սպասիր,
Գալ կուզեմ, գալ կուզեմ.
Նրան եմ տալիս իմ կեանք համայն,
Իսպառ թողում եմ լայն ճամբան,
կամիմ ապրել իր հետ միայն,
Գալիս եմ, գալիս եմ։

ԵՐԳ 234.

1.

Ի՞նչու հոգանք, Տիրոջ շնորհքը
Նոր է ամեն առաւօտ.
Զօրաւոր է Տիրոջ խօսքը,
Փըրկութիւն կայ Նըրա մօտ։

Մենք գընում ենք դէպի երկինք,
Միշտ մեզ հետ է Յիսուսը Ինք,
Այստեղ Նըրա օրհնանքն ունինք՝
Թէկուզ մենք մի փոքրիկ հօտ։

2.

Ամեն օր նոր է Իր շնորհքը,
Էլ ինչու մենք տըրտընջանք.
Տէր, չափ չ'ունի սիրոյդ խորքը,
Նեղ օրը տաս ըսփոփանք։
Անվերջ սիրով մեզ սիրում ես,
Մեր յանցանքներն միշտ ներում ես,
Թևերիդ վրայ մեզ կըրում ես
Ապահով և անվըտանգ։

3.

Թող լինին լաց լինողները,
Որպէս թէ չի լացողներ.
Նոյնպէս ուրախ եղողները,
Ինչպէս չ'ուրախացողներ։
Շուտով կը գայ այն հըզօրը,
Մօտ է Նըրա գալու օրը,
Փառք տանք Նըրան և մեր Հօրը,
Զը լինինք կասկածողներ։

ԵՐԳ 235

1.

Քաղցրիկ Յիսուս, Դու ասել ես,
Թէ որտեղ որ իմ Անուամբ

Երկու, երեք գան միասին,
Ես նորանց մէջն եմ անձամբ։

2.

Հիմա խընդրում ենք Քեզանից,
Ներկայ եղիր Դու մեր մէջ.
Հեռու պահի՛ր Քո խոստման պէս,
Մեզանից ամեն մի վէճ։

3.

Աղերսում ենք, Տէր, Քո առջև,
Որ Դու մեզ առաջնորդես,
Եւ Քո սիրոյ միաբըդ անգին
Եւ կամքըդ մեզ հաղորդես։

4.

Տէ՛ր, Քո այգում գործողներին,
Տուր յոյս և սէր և եռանդ,
Որ անձնըւէր հոգւով գործեն
Եւ քաջութեամբ անվրկանդ։

ԵՐԳ 236.

4.

Արդէն աստղն առաւօտեան
Ուրախ աւետում է՝
Թէ անցել է գիշերը,
Եւ մութն անհետում է.
Ամեն մի գեփիւռ ծովից
Բերում է լուրեր նոր՝

Թէ՛ Աստուծուն են դառնում
Մարդիկ հազարաւոր։

2.

Եւ ցամաքած երկրի վրայ
Վերից շաղում է ցօղ,
Մարդիկ նոր նոր հըրաշքներ
Տեսնում են սըրտադող.
Եւ աղօթքներ չեն մընում
Այլ ևս անպատասխան,
Նոր աշխարհքների վըրայ
Տեղում է մանանան։

3.

Տէս, կըռապաշտ ազգերը
Ծունկ են չոքում Աստ՛ծուն.
Բիւր սըրտերից բըղխում են
Երգեր բարձրանալիս.
Եւ վազում են օրէցօր
Մեծ և փոքրահասակ,
Որ կեանք գըտնեն Քրիստին մօտ,
Արիւնոտ խաչի տակ։

4.

Առաջ, առաջ, շնորհաց խօսք,
Դէպ՛ երկրի ծայրերը.
Ամենքին յայտնի լինի
Աստ՛ծոյ անհուն սէրը.

Թող մինչև Տիրոջ գալը
Ոչ ոք չը թուլանայ.
Գործենք որ ողջ աշխարհքը
Տէր Յիսուսին դառնայ։

ԵՐԳ 237.

1.

Մենք գովում ենք Քեզ, ով Քրիստոս,
Որ մահիցը փառքով յարեար.
Մահն յաղթեցիր մեծ Բարեխօս,
Անմահութիւնն 'ի յայտ բերար։

ԵՐԳ 238.

1.

Թէ չըստանան այստեղ լուծում
Քո շատ հեղած արտասուքները,
Պայծառ լուսոյ այն աշխարհում,
վերն կը տեսնես միտքըն ինչ էր։

Յուսա Աստծուն, թող ահ ու դող,
Քեզ չըյաղթեն փորձութիւնները.
Մի վըհատիր, եղիր յաղթող,
վերն կը տեսնես միտքըն ինչ էր։

2.

Անդ կը կապուին պատռած կապերը,
Կը միանան բաժանուածները.
Կ'անհետանան մըռայլ ամպերը,
վերն կը տեսնես միտքըն ինչ էր։

3.

Թէ որ երբէք քո կեանքի մէջ
Ուրախ մի օր քեզ չըծագէր,
Եւ դու ապրես տանջանքի մէջ,
վերն կը տեսնես միտքըն ինչ էր։

4.

Թէ որ պայծառ արևն խուսէր,
Եւ ամեն քո փափագ մերժուէր,
Ձիք դառնային ամեն յոյսեր,
վերն կը տեսնես միտքըն ինչ էր։

5.

Կայ բարեկամ մի կաթոգին,
Որ մօտ է քեզ ամեն օրեր,
Կ'առաջնորդէ, գիտէ ուղին.
վերն կը տեսնես միտքըն ինչ էր։

ԵՐԳ 239.

1.

Դարձի՛ր կրկին, դարձիր կրկին,
Է՞ր կորըստեան դու դիմես.
Ձըղջմամբ կրկնի՛ր ծունկերդ գետին,
Տիրոջ առջև ինչպէս ես։

Ինչպէս դու կաս, այնպէս էլ ել,
Լըսիր ձայնն, ով սըրտաբեկ,
Եւ կ'ընդունուես դու սիրալիր,
Դարձիր կրկին, ահ, դարձիր։

2.

Դարձի՛ր կրկին, ով մոլորեալ,
Դէպ՝ ողորմածն քո Աստուած.
Նրա մօտ կարես արդարանալ,
Նա դեղ կը տայ քո վիրաց։
Աչափայտին գընա՛ շատ մօտ,
Դարձի՛ր կրկին, լե՛ր սրբատոտ.
Թէ Ողորմածը քեզ պատժէ,
Վէրքերդ սիրով կը բուժէ։

3.

Դարձի՛ր կրկին առ Նա, ով խեղճ,
Դարձի՛ր մահից դէպի կեանք.
Դարձի՛ր, ով մարդ, անդարձ, անզեղջ,
Թող ամեն քո կասկածանք։
Ա՛խ, Տէ՛ր, տուր ինձ դարձի հոգի,
Սէրդ սրտիս մէջ բորբոքի.
Տուր ինձ լինեմ հնազանդ որդի,
Եւ ներսում իմ՝ կեանքդ յորդի։

ԵՐԳ 240.

1.

Ոտքըս սաստիկ վաստակած էր,
Մեղքի ճանապարհում.
Սիրտըս հիւանդ էր կարեվէր,
Չ՚ունէի դադարում։

Մըթնած էր աչք իմ՝ նայելով,
Երկրի անցնող փառքին.
Առաւ Յիսուս փայփայելով,
Եւ դրաւ ինձ իր կուրծքին։
Ո՜հ, ցընծում մեծ, ամենն անցաւ,
Ջընջեց մեղքերն իմ՝ Տէրն.
Բուժեց բոլոր իմ վէրք ու ցաւ,
Փարատեց իմ վախերն։

2.

Իմ մութ սրտիս խիստ ձմեռը՝
Փառք Աստուծոյ անցաւ,
Եւ մեղքերի իմ ծանր բեռը՝
Ամենն անյայտացաւ։
Ջերմ արևը Գողգոթայի,
Վերից բերաւ գարուն.
Իմ սրտում ցուրտ և ամայի՝
Ծագեց լոյսը փայլուն։

3.

Դուք որ չ՚ունիք խարիսխ տակուն՝
Ալեկոծեալ ծովում,
Ի՞նչու անհոգ էք ձեր հոգուն,
Ի՞նչու այդ վըրդովում։
Փըրկչին խօսքը լըսեցէ՛ք այժմ,
Կանչում է սիրայոյզ.
«Թէ ինձ փընտռէք յօժարակամ,
Ձեզ է՛լ կը ծագէ լոյս»։

ԵՐԳ 241.

1.

Ապաշխարիր, ով մեղաւոր,
Ջըգիր քեզ'նից մեղքն ահաւոր.
Դըրանից դու մահն վարձք ունես,
Անապաշխար ինչո՞ւ մեռնես։

2.

Հեզ Յիսուսին դիմիր հիմա,
Բընաւ ուրիշ էլ յոյս չըկայ.
Յիսուսի պէս Փըրկիչ ունես,
Անապաշխար ինչո՞ւ մեռնես։

3.

Ապաշխարիր, ո՜հ, դու շուտով,
Եկ Յիսուսի մօտ դու փութով.
Մի՛ ուշանա, միջոց ունես,
Անապաշխար ինչո՞ւ մեռնես։

4.

Ո՛ն Փըրկիչըդ քեզ սիրում է,
Սիրով Նա քեզ հրաւիրում է.
«Ինձ մօտ եկ դու, հանգիստ գըտնես,
Անապաշխար ինչո՞ւ մեռնես»։

ԵՐԳ 242.

1.

Ուր կա՛յ հանգըստութիւն,
Յոգնած, տըրտմած հոգւոյն.

Ջո՛ւր է փընտրել ծովի խորքերն,
Կամ քայլել մինչ բևեռն։

2.

Աշխարհս բընաւ կայուն՝
Չ'ունի երջանկութիւն.
Լի է մեղքի նենգ դաւերով,
Եւ բիւր դառն ցաւերով։

3.

Սակայն այս կեանքը՝ միայն,
Չէ ապրիլն ամենայն.
Եւ ո՛չ էլ այս մեռնելն է մահն,
Կամ վերջն է գերեզման։

4.

Այս արտասուաց ձորից
Այն կողմ՝ կեանք կայ նորից.
Այն չի չափուի տարիներով,
Չեղուն է սուրբ սիրով։

6.

Փա՛ռք Քեզ, օրհնեա՛լ Յիսուս,
Դու մեր լոյսը և յոյս.
Մեզ փըրկեցիր մեղքից, մահից,
Եւ դըժոխքի ահից։

ԵՐԳ 243.

1.

Քեզ համար, ով սըգաւոր,
Խաչի մօտ տեղ կայ.

Քո սըրտիդ վըշտերն բոլոր,
Թող Նա իմանայ։
Ե՛կ Փըրկչիդ, մի՛ կասկածիր,
Սիրտըդ Նըրա մօտ բացի՛ր,
Ներում և լոյս ըստացի՛ր.
Յաչի մօտ տեղ կայ։

2.

Ե՛կ մոլորուած, նեղս մըտի՛ր,
Յաչի մօտ տեղ կայ.
Փըրկութեան ճամբան գըտի՛ր,
— Երջանիկ ճամբայ։
Ո՛վ յոգնած ու խոշտանգուած,
Փորձութիւններով տանջուած,
Հանգըստեան ես դու կանչուած,
Յաչի մօտ տեղ կայ։

3.

Է՞ր անհոգ ես, մեղաւոր,
Յաչի մօտ տեղ կայ.
Յիսուսին դիմիր այսօր.
Եւ կարող է Նա,
Բոլոր ցաւերդ վըտարել,
Իր ձեռքով քեզ պատսպարել,
Եւ հոգիդ մըխիթարել.
Յաչի մօտ տեղ կայ։

4.

Տես աղբիւր մի կենդանի,

Յաչի մօտ տեղ կայ,
Ով հաւատքով կ՚ընդունի,
Զըրիսպէս կը տայ։
Թէ հարուստ և թէ աղքատ,
Թէ ծառայ և թէ ազատ,
Ամենի համար առատ,
Յաչի մօտ տեղ կայ։

5.

Հարսն և Հոգին ասում են՝
Յաչի մօտ տեղ կայ.
Լըսողներն էլ թող պատմեն,
Որ աշխարհ գիտ՚նայ
Թէ սիրոյ գանձն է լեցուն,
Եւ ողորմութիւն անհուն՝
Ծոյց է տըրուում ամենուն.
Յաչի մօտ տեղ կայ։

ԵՐԳ 244.

1.

Ձեռքըս բըռնի՛ր, տըկար եմ, անօգնական,
Առանց քեզ չեմ կարող մի քայլ գընամ.
Ձեռքըս բըռնի՛ր, ո՛հ, Փըրկիչ իմ սիրական,
Եւ չեմ վախի չարչարանքից անգամ։

2.

Ձեռքըս բըռնի՛ր և քեզ քաշի՛ր, ով իմ վէմ,
Որ Քեզ մօտ լինեմ ամեն ժամանակ։

Ձեռքըս բըռնի՛ր, թէ ոչ ես պիտի շեղուիմ
Ուղիղ շաւղից, թէ որ լինեմ մենակ։

3.

Ձեռքըս բըռնիր, մութ է իմ առաջ՝ համբան,
Թէ որ երեսդ ինձ չը լուսաւորէ.
Քո լոյսըն է առաջնորդ իմ և պաշտպան,
Քո սէրը թող միշտ ինձ յուսաւորէ։

4.

Ձեռքըս բըռնի՛ր, և թէ քո անցած՝ մահուան
Գետին միջով անցնել ինձ պէտք լինի,
Անդ երկնից լոյսն ինձ անէ աներկիւան,
Ուրախ երգով իմ անձն անվախ անցնի։

ԵՐԳ 245.

1.

Տէր Յիսուսին կ՚ուզենք տեսնել, ոտքըն մեր
Հաստատ կանգնած է ամուր վէմի վըրան.
Թէկուզ փըրփրեն ահաբեկող հեղեղները,
Երկիւղ չ՚ունենք, միայն թէ տեսնենք Ներքան։

2.

Տէր Յիսուսին կ՚ուզենք տեսնել. վերջ-լոյսը

Թէև արդէն մըթնում է կեանքի հովտում.
Ձենք սարսափի՝ Տէրն է մեր լոյսն և յոյսը,
Նա մեզ մօտ է՝ Իր խօսքին ենք հաւատում։

3.

Տէր Յիսուսին կ՚ուզենք տեսնել. հանգչում են
Մեզ ուրախացնող ամեն ուրիշ լոյսեր,
Բարեկամաց սիրուն դէմքեր չքանում են.
Դու յարաժամ մեզ մօտ ես, պաշտելի Տէր։

4.

Տէր Յիսուսին կ՚ուզենք տեսնել. գըտնում ենք
Լոյս, զօրութիւն, երբ այն սիրող և մեռնող՝
Կենդանի Տէր Յիսուսին մենք տեսնում ենք.
Անցէ՛ր, խաւար, ահա բացուեց լուսաշող։

ԵՐԳ 246.

1.

Հայրենի տանս երկնաւոր՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր.
Ուր ամենն է լոյս և նոր,
Մօտ եմ, շատ մօտ այսօր։
Մեղք ու վէրք և վիշտ ու ցաւ,
Անդ լինելու չեն բընաւ,

Գաւառին սուրբ և անդորը՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր։

2.

Փրկչիս դէմքին լուսաւոր՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր.
Սուրբ պըսակին փառաւոր՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր։
Մեծ աթոռն շըրջապատած,
Պիտ՝օրհնենք փառաց Աստուած.
Օրհնութեանց սուրբ, նորանոր՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր։

3.

Ինձ սիրող և պահող Հօր՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր,
Պաշտպանիս գըթած, հըզօր՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր։
Բազկաց մէջ հանգըստաւէտ՝
Պիտի հանգչեմ ես յաւէտ.
Սուրբ գործերի փառաւոր՝
Մօտ եմ, շատ մօտ այսօր։

ԵՐԳ 247.

1.

Պայծառապեղ դէմքիդ, Յիսուս,
Եղեր եմ սիրահար.
Դու ես իմ Տէր, իմ կեանք և լոյս,

Քեզ կ՝երգեմ մըշտայար։
Իմ յոյսը, Տէ՛ր, Դու ես,
Իմ յոյսը, Տէ՛ր, Դու ես.
Բաց իմ սիրտըս, քաշիր առ Քեզ,
Իմ յոյսը, Տէ՛ր, Դու ես։

2.

Ճամբաներդ են ինձ օգտակար,
Հոգւոյս են առաջնորդ.
Առանց Քեզ կըլինեմ տըկար,
Քեզմով ուժիդ հաղորդ։

3.

Արի՛ ինձ մօտ, ով Տէր Փըրկիչ,
Փոխիր իմ կեանքս այս բիրտ.
Քեզ տալիս եմ ամենայն ինչ,
Դըրամ և ինչք և սիրտ։

ԵՐԳ 248.

1.

Աստուած մեր բերդ մեզ պահում է,
Հաստատ վէմ է փոթորկի մէջ.
Թէ փորձանք մեզ պատահում է,
Հաստատ վէմ է փոթորկի մէջ։
Ցոյս մեր Տէրն է, Նա է մեր վէմ,
Նա է մեր վէմ, Նա է մեր վէմ.
Ցոյս մեր Տէրն է, Նա է մեր վէմ,
Հաստատ վէմ է փոթորկի մէջ։

2.

Կիզիչ արևում հովանի,
Հաստատ վէմ է փոթորկի մէջ.
Թշնամուց Նա կըպահպանի,
Հաստատ վէմ է փոթորկի մէջ։

3.

Նրա խօսքից ծովն սասանում է
Հաստատ վէմ է փոթորկի մէջ.
Այնտեղ էլ մեզ պաշտպանում է,
Հաստատ վէմ է փոթորկի մէջ։

4.

Սիրուն վէմ մեր, քաղցրը Փըրկիչ,
Դու հաստատ վէմ փոթորկի մէջ.
Միշտ պաշտպանիր մեզ չարիքից,
Ուժեղ Դու վէմ փոթորկի մէջ։

ԵՐԳ 249.

1.

Երբ կեանքի հողմ փըչում է խիստ,
Հազիւ ուժեղն դիմանում,
Ցայնժամ իմ անձն ունի հանգիստ,
Նրա ձեռքի լայն հովանում։

Ծածկում է ինձ, ծածկում է ինձ,
Ամեն չարիքից պահպանում.
Ծածկում է ինձ, ծածկում է ինձ,
Իր ձեռքի լայն հովանում։

2.

Երբ ճրնշում է նեղութեան բեռն,
Ճանաչում եմ, Ինքն է Նա.
Նեղութեան մէջ փորձում է Տէրն,
Որ հոգիս Նրան մօտենայ։

3.

Երբ պատում է փորձութիւնը,
Թշնամին երբ ըսպառնում,
Առաւել ուրախութիւնը,
Վըտանգներում եմ առնում։

4.

Փոթորիկը ինչքան էլ մեծ,
Ալիքներն ինչքան խոշոր,
Ինձ վախ չըկայ ոչ մէկի մէջ,
Տէրն է ինձ հետ ամեն օր։

ԵՐԳ 250.

1.

Քեզ Յիսուս ընդունում է,
Իր ուսի վրայ դընում է.
Ուղիղ շաւղով տանում է,
Քեզ Յիսուս ընդունում է։

Թող ամեն մարդ լաւ լըսէ,
Քեզ Յիսուս ընդունում է.
Թող ամեն մարդ լաւ լըսէ,
Քեզ Յիսուս ընդունում է։

2.

Թէ հեռուն ես մոլորուած,
Մեծ Հովիւն որոնում է.
Մի վարանիր խոստորուած,
Քեզ Յիսուս ընդունում է։

3.

Եկէք ամենքդ, եկէք,
Նա հաստատ ընդունում է.
Մի ըսպասէք դուք երբէք,
Ձեզ Յիսուս ընդունում է։

4.

Քաջալերուիր, ով հոգի,
Քեզ Յիսուս ցանկանում է.
Ե՛կ Նրբա մօտ ծունկ չոքի,
Քեզ Յիսուս ընդունում է։

ԵՐԳ 251.

1.

Ես յոգնած և խիստ վաստակած,
Տէր, դիմում եմ դէպի Քեզ.
Քեզ մօտ հանգիստ կայ անկասկած,
Ո՛վ զննեալ Գառնուկըդ հեզ։

Ո՛վ Յիսուս, գալիս եմ Քեզ մօտ,
Որ տաս ինձ խաղաղութիւն.
Ո՛վ Յիսուս, ես Քեզ եմ կարօտ,
Դու տաս ինձ հանգստութիւն։

2.

Ա՛խ, Տէր Յիսուս, իմ Փրկիչը,
Ես խընդրում եմ Քեզանից
Երբ փորձում է ինձ փորձիչը,
Դու եղիր ինձ պահպանիչ։

3.

Քո հայրական գոգում յաւէտ՝
Հոգիս գըտնում է հանգիստ.
Այնտեղ ամեն փորձանքից յետ՝
Իրրախտում կը հանգչեմ միշտ։

4.

Ա՛խ, մօտ մընաս, Դու իմ յոյսը,
Այս երկրային կեանքի մէջ.
Եւ իմ սըրտում, ով Տէր, լոյսը
Քո՝ վառ պահիր և անշէջ։

ԵՐԳ 252.

1.

Իմ Փըրկչիս ոտքերին մօտ,
Ընկայ ես վըշտահար.
Սիրտըս ուրշափ էր կարօտ,
Որ Նա ինձ հանգիստ տար։
Յայնժամ Յիսուս ինձ նայեց,
Ինձանից չը խորշեց,
Ինձ կուրծքին վրայ փայփայեց,
Ինձ բարեկամ կոչեց։

2.

Բարեկամ, ո՜հ, բարեկամ,
Կուրծքիս մէջ հընչում է.
Բարեկամ, ո՜հ, բարեկամ.
Իմ սիրտըս ցընծում է,
Նա որ մահուան և դժոխքի
Ոյժըն խափառ ջընջեց,
Նըստեց աջ կողմն Հօր փառքի,
Ինձ բարեկամ կոչեց։

3.

Աշխարհ, հեռու կաց ինձ'նից,
Քո ունայնութիւնով.
Բաւ է ինչ խաբեցիր ինձ
Սուտ վայելչութիւնով։
Ոսկէ հորիզդ իր բոլոր՝
Արժէքըն ինձ կորցրեց,
Երբ Փըրկիչըս Թագաւոր,
Ինձ բարեկամ կոչեց։

4.

Իմ սիրտըս, ով Բարեկամ,
Ես Քեզ եմ նըւիրում.
Որչափ էլ Քեզ մօտենամ,
Աւելի եմ սիրում։
Թէկուզ աշխարհ նեղէ ինձ,
Տէր, սիրովդ քաղցրաձիր՝

Ուրախ եմ որ դոնէ ինձ,
Բարեկամ կոչեցիր։

5.

Երբ Քո ձեռքդ ինձ բըռնէ,
Եւ ինձ առաջնորդէ,
Ուրախութիւնս կը լինէ,
Բարեկամս ինձ հետ է.
Ես պատրաստ եմ չըւելու,
Օտար է այս երկիր.
Կարօտ չէ նա որին Դու՝
Բարեկամ կոչեցիր։

6.

Շուտով պիտի ես տեսնեմ
Վերին հայրենիքը.
Անդ Գառին երեսն տեսնեմ,
Եւ Իր հարսանիքը։
Յիսո՜ւս, Քո սէրն կընդունեմ,
Քեզ հետ կը միանամ.
Երջանիկ եմ որ ունեմ
Թագաւոր-Բարեկամ։

ԵՐԳ 253.

1.

Աւա՛ղ, Տէրն իմ, խաչի վըրայ՝
Մեռաւ արիւնլըւայ.
Իր կեանքն յօժար յանձնեց մահուան,

Փըրկել որդ մ'ինձ նըման։
Խաչի մօտ, խաչի մօտ,
Լոյս ծագեց ինձ համար,
Եւ մեղքերիս բեռն ընկաւ մի անգամ.
Այնտեղ Փըրկչիս տուի սիրտս յամառ,
Եւ արդ երջանիկ եմ ամեն ժամ։

2.

Իմ անօրէնութեանց համար,
Ո՛հ, ինչ գութ անսահման,
կըրեց տապնապ վիշտ չարաչար,
Սիրով անզուգական։

3.

Պայծառ արևն ամօթահար՝
Ծածկեց իր դէմքը լոյս,
Երբ մարդկութեան մեղքի համար՝
Մեռաւ, ո՛հ, Տէր Յիսուս։

4.

Արդ, Տէր, սիրոյդ Քո փոխարէն,
Ի՞նչ կարեմ վըճարել.
Ինչ որ ունիմ և եմ՝ ամէնն
Կ'ուզեմ քեզ նըւիրել։

ԵՐԳ 254.

1.

Մենք չենք թողնի Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ Մատեան,

Քանզի մանկանց է առաջնորդ,
Եւ ծերոց. գաւազան։
Ճըրագ է այն, լոյս փառաւոր,
Մեր մութ շաւիղներուն.
Տալիս է մեզ փառք երկնաւոր,
Բընակարան սիրուն։
Մենք չենք թողնի Սուրբ Գիրքը,
Աստուածաշունչ Մատեան,
Քանզի մանկանց է առաջնորդ,
Եւ ծերոց գաւազան։

2.

Մենք չենք թողնի Սուրբ Գիրքը,
Զի նըրանից միայն՝
Երկնից ճամբան կարենք գըտնել,
Փախչել անդ յաւիտեան։
Պատմուած այն թէ երկնից ով
Իջաւ աստ՝ սիրով հեզ,
Որ սուրբ արիւնն Իր հեղելով՝
Մեղքից ազատէր մեզ։

3.

Մենք չենք թողնի Սուրբ Գիրքը,
Այլ քարոզենք պիտի,
Որ նըրա լոյսն մինչ աշխարհի
Խորքերն ճառագայթի։
Եւ ընդունեն մարդիկ ամեն,
Բարի լուրն փրկութեան.

Փըրկչին անուն և սէրն պատմեն,
Օրհնեն Նրան յաւիտեան։

ԵՐԳ 255.

1.

Աւա՜, Տէրն իր հեղեց արիւն,
Եւ ինձ համար մեռաւ.
Ծըռեց իր գլուխ սիրով զեղուն,
Որդնիս տեղ մեռաւ։

Յիսուս քեզ համար մեռաւ,
Յիսուս ինձ համար մեռաւ,
Ամենիս համար մեռաւ,
Ինձ համար մեռաւ։

2.

Իմ մեղքն իր վրայ Նա առնելով,
Խաչին անէծքը կրեց.
Ո՜հ, այն զարմանալի սիրով՝
Ինձ էլ Նա սիրեց։

3.

Արեգակն իր երեսն ծածկեց,
Խաւարեց ամեն տեղ.
Երբ Տէր Յիսուս աղաղակեց՝
Ցաւով սիրազեղ։

4.

Մեծ ամօթով երեսը իմ՝
Միշտ ծածկեմ ես պիտի,

Մինչև հրպարտ, չար եսըն իմ՝
Խաչառ անհետի։

5.

Այնտեղ ծըծեմ մեռնող գորովդ,
Մինչև սիրտն իմ լեցուի.
Լացեմ մինչև գովութիւնովդ,
Բերանս լայն բացուի։

6.

Բայց սա ցաւից ինձ չի փրկի,
Ինչքան էլ որ լացեմ.
Դու միայն սիրտս կարես բժշկել,
Ա՛րդ, ինչ մօտ բացեմ։

ԵՐԳ 256

1.

Յիսուս, Փըրկիչ, Դու իմ Տէրը,
Կուրծքիդ վրայ ես ինձ առնում.
Երբ մօտենում են չուրերը,
Եւ փոթորիկ բարձրանում,

Ո՜հ, ինչ լաւ է քեզ յուսալը,
Ես քեզ եմ, Տէ՛ր, պատկանում.
Եւ բարձրում քեզ մըտիկ տալը,
Շատ և շատ եմ ցանկանում։

2.

Պահիր ինձ միշտ փոթորկից խիստ,
Մինչ կատարուի իմ ընթացք.

Տար ապահով նաւահանգիստ,
Թող վրաս հրսկէ միշտ Քո աչք։

3.

Այլ ապաստան չեմ գըտնում ես,
Դու ապաւէն իմ միակ.
Ինձ չես թողնում մենակ, անտես,
Դու՝ ինձ հետ ես շարունակ։

4.

Դու ես իմ յոյս, իմ օգնական,
Մինչև չարիքըն անցնի.
Թևերիդ տակ պահպանուած կան,
Ամեն անգամ իմ մարմնի։

5.

Կատարեալ շնորհք և փըրկութիւն,
Կայ, ով Տէր, Քեզանում միայն.
Ա՛խ, տուր ինձ Դու՝ Քո սըրբութիւն,
Որ Քեզ գովեմ յաւիտեան։

6.

Տէ՛ր, սըրտիս մէջ Քո սէրդ հեղի՛ր,
Եւ Սուրբ Հոգւով ինձ լեցրո՛ւ.
Իմ մէջ աղբիւր կենաց եղի՛ր,
Եւ գետք ինձ՛նից բղխեցրո՛ւ։

ԵՐԳ 257.

1.

Տէս, Աստուծոյ Գառը,

Վեր է առնում
Մեր մեղքերի բեռը՝
Golgothայում։
Ո՛հ, սէր մեծ և անհուն.
Նա հեղեց Իր արիւն,
Որ ինձ տար փըրկութիւն,
Գառն Աստուծոյ։

2.

Տէս, Աստուծոյ Գառը.
Նա կոտրատեց՝
Մահի խայթոց դառըն,
Մեզ ազատեց։
Ա՛խ, լե՛ր ինձ օգնական.
Որ լինեմ յաւիտեան՝
Քո անձնուէր ծառան,
Գառն Աստուծոյ։

3.

Տէս, Աստուծոյ Գառը.
Նա յաղթել է,
Եւ Աստ'ծոյ աթոռը,
Արդ նըստել է։
Քո սէրդ պատմեմ պիտի,
Սէ՛րդ վեհ ու հաւաստի,
Սէ՛րդ կեանք է իմ սըրտի.
Գառն Աստուծոյ։

ԵՐԳ 258.

1.

Հանգիստ Փըրկչիս ձեռքերում,
Ի՜նչ քաղցր ու ընտանի,
Նըրա սիրոյ դրօշակը՝
Միշտ կայ ինձ հովանի։
Օ՜հ, ինչ սիրով շնորհառատ,
Նա վայր իջաւ վերից,
Որ փրկելով հէք հոգիս,
Հանգիստ տար ցաւերից։

Հանգիստ Փըրկչիս ձեռքերում,
Ի՜նչ քաղցր ու ընտանի.
Նըրա սիրոյ դրօշակը՝
Միշտ կայ ինձ հովանի։

2.

Հանգիստ Փըրկչիս ձեռքերում,
Կարեմ ապրել վըստահ.
Աշխարհի չար փորձութիւնք,
Չը կարեն տալ ինձ ահ։
Այստեղ մի քիչ ժամանակ՝
Ունիմ երկիւղ և սուգ,
Մի քիչ հոգսեր, փորձութիւն,
Եւ մի քիչ արտասուք։

3.

Յիսուս իմ ապաստանըս,
Մեռաւ հոգւոյս համար.

Այս վէմին վրայ իմ յոյսը,
Հաստատուեցաւ իսպառ։
Անդորը ատա կ՚ըսպասեմ ես,
Մինչև անցնի գիշերն.
Եւ ոսկեղէն եղերին վրայ,
Իմ Փըրկչիս տեսնեմ վերն։

ԵՐԳ 259.

1.

Ամպերն ՚ի վեր թռչել կ՚ուզեմ,
Ուր կան իմ տուն, իմ Բարեկամ,
Մի տուն ուր կայ հանգիստ վըսեմ,
Մի Բարեկամ, որին յուսամ.
Օ՜հ, Նըրա ձայնն պիտի լըսեմ,
Ինձ կ՚ընդունի յօժարակամ։

2.

Անապատով ինձ տանում է,
Եւ քալ գիտէ Նա իմ ճանուն.
Ամեն չարից պաշտպանում է,
Կուրծքն Իր տրուփէ սիրով անհուն.
Նա է որ ինձ խոստանում է
Տանել երկրից երկինք փայլուն։

3.

Մեղքին և այս աշխարհքին չար,
Տալիս եմ արդ՝ իմ հրաժեշտ,
Յիսուսի հետ դէպ՚ լոյս աշխարհ՝

Ընկերանալ քաղցր և հեշտ.
Շուտով կ'երգեմ ես անդադար,
Մեծ խըմբին հետ ճերմակազգեստ։

ԵՐԳ 260.

1.

Տէր, վասն իմ զոհուելոյդ
Սիրուց՝ մահուան.
Էլ ինչպէս խընայեմ
Քեզնից մի բան։
Սիրոյդ վըրայ ապշած,
Ուխտում եմ, ով Աստուած,
Բերել Քեզ սըրտիս զոհ,
Որևէ զոհ։

2.

Ինձ համար Աստ'ծոյ մօտ
Ես բարեխօս,
Զօրացրու իմ հաւատս,
Տէր իմ Քրիստոս,
Որ խաչիս դիմանամ,
Գովեմ սիրոյդ պատգամ,
Քեզ տամ ուրախ և զոհ,
Փոքրիկ մի զոհ։

3.

Տուր ինձ հաստատուն սիրտ,
Քո սըրտիդ պէս,
Որ Քեզ երկըրպագեմ,
Ճըշմարտապէս։
Մի սիրոյ գործ ունեմ,
Թըշուառ մարդուն օգնեմ,
Քեզ տամ ազատ և զոհ,
Գոնէ մի զոհ։

4.

Ինչ որ եմ և ունիմ
Են Քո պարգև.
Զոհեմ իմը և ինձ,
Տէր, Քո առջև։
Երբ տեսնեմ Քո երես,
Փըրկեալ անձըս ես Քեզ,
Պիտ' տամ յաւիտեան զոհ՝
Որպէս մի զոհ։

ԵՐԳ 261.

1.

Ո՜հ, դու սըրբոց հանգիստ վըսեմ,
Ե՞րբ ես պիտի գամ Քեզ,
Ե՞րբ բերկրութեամբ ես կատարեմ
Վըշտաց այս ասպարէզ։

2.

Նաւահանգիստ երանելի,
Խաղաղ և անվըտանգ,

Քո մէջդ բընաւ չի գըտնուի
Հոգ, ցաւ կամ տառապանք։

3.

Ա՛նդ փոթորիկ, ամպ, մէգ, ըստուերք,
Յաւիտեան են անհետ.
Զըկայ Քո մէջ աղօտ գիշեր,
Գառն է լոյս քո յաւէտ։

4.

Պատերդ գոհար են շողշողուն,
Յատակդ ոսկի մաքուր.
Դըռներդ մարգարիտներ փայլուն,
Ո՜հ, ի՜նչ վայր փառաւոր։

ԵՐԳ 262.

1.

Կայ մի երկիր սուրբ և փայլուն,
Կարենք հաւատքով տեսնել այն.
Պալատներն են խիտ շողշողուն,
Պիտի վայ՛լեն սուրբերին միայն։
Ո՛վ սուրբ երկիր, իմ սէր և յոյս,
Բնակարաններդ պատած է լոյս.
Յաղագ եղերքդ տեսնենք պիտի,
Երբ ծագի լոյսն, մուժն անհետի։

2.

Մի սըրբաւայր երկիր է այն,
Զը կան այնտեղ մեղք, ցաւ ու վիշտ.

Սիրելեաց տեղ է միութեան,
Ուր սէր, խընդում կան յարամիշտ։

3.

Տեսարանն է լուսապայծառ,
Առանց արևի և լուսնի,
Բընակիչներն են ուղղափառ,
Ամեն ոք անդ հանդիստ ունի։

ԵՐԳ 263.

1.

Իրաւ Փըրկչիս արեան մէջ կայ,
Ինձ օրհնութեան որև բաժին.
Մահուանըն ես տուիր եղայ,
Մեղքերս Նըրան խաչ հանեցին.
Ողորմութի՜ւն զարմանալի,
Որ Տէրն իմ՝ ինձ համար մեռնի։

2.

Այն սէրը ո՛վ պիտի չափէ,
Եւ խորութիւնը հասկանայ.
Ամենաբարձրը սերովբէ՝
Իզուր քըննել պիտի չկանայ.
Գաղտնիք անհուն, անջընջելի,
Որ ինձ համար Անմահն մեռնի։

3.

Կամաւ թողեց փառաց գահը,
Յոնարհուելով եկաւ աշխարհ.

Անարգ խաչի կըրեց մահը,
Եւ իմ հոգին փըրկեց յօժար.
Անճառելի ողորմութիւն,
Զըկայ ինձ դատապարտութիւն։

4.

Յիսուս իմն է, Նըրան յուսամ,
Նա է իմ Գլուխս և Նա կեանք իմ.
Երբ յայտնըւի երկրորդ անգամ,
Իր մօտ ուրախ պիտի կանգնիմ.
Կը մօտենամ ես համարձակ,
Փըրկչիս ձեռքից կ՚առնեմ պըսակ։

ԵՐԳ 264.

1.

Առաջնորդիր ինձ վէմին այն,
Որից կենաց ջուրն հոսէ.
Առաջնորդիր ինձ բերդին այն,
Որ Տէր Յիսուս Քրիստոս է։
Ես կանգնած եմ այս Վէմի վրայ,
Սիրտս անչափ ուրախ է.
Ոչինչ բընաւ կայ նման Նըրա,
Հոգիս աստ շատ խաղաղ է։

2.

Թէ ալիքներ շատ բարձրանան,
Կործանելու վէմին այն,
Շոգու պէս նրանք կ՚անհետանան
Դպչելով ոտքին միայն։

3.

Եւ այս վէմն ինձ հաղորդում է,
Հոր սիրոյ ուրախութիւն.
Նըրա գոգից միշտ յորդում է,
Շնորհք առատ և օրհնութիւն։

4.

Այս բարձրը վէմն ամեն մի օր,
Լեցնում է ինձ յոյսերով.
Քաշում է սիրտս, հոգիս բոլոր,
Դէպի երկինք սուրբ սիրով։

5.

Այս վէմում ինձ կայ գոհացում,
Եւ ամեն երջանկութիւն.
Իսկ երկրաւոր բարիքներում,
Չեմ գըտնում ուրախութիւն։

6.

Դու, վէմ, տըւիր ինձ ջուրն կենաց,
Ես պիտի Քեզ միշտ օրհնեմ.
Օրէցօր Քեզմով զօրացած,
Վերջին յաղթութեան հասնեմ։

ԵՐԳ 265.

1.

Երբ Փրկիչը, վերն երկինքը,
Իբրև թագաւոր,
Կը ժողվէ Իր սիրելիքը,

Իր տուն փառաւոր,
Լուսաւոր աստղերի պէս,
Կը փայլեն անդ երկընքում,
Պատուական քարերի պէս,
Յիսուսի թագում։

2.

Ժողվելու է մէկաեղ ամեն
Սըրբոց բազմութիւն.
Որոնց լուացել է համօրէն,
Յիսուսի արիւն։

3.

Մանուկները, որ սրբտերը՝
Յիսուսին տըւին,
Առնում է Իր գըրկում Տէրը,
Եւ սեղմում կրծքին։

4.

Ուստի մեծեր և դուք փոքրեր,
Տիրոջ նըւիրուէք.
Որ ցընծութեամբ Փըրկիչը ձեր՝
Երկընքում գովէք։

ԵՐԳ 266.

1.

Ես գըտել եմ այն Մարգարիտ,
Որ է գարդ իմ հոգւոյս.
Դու հարցնում ես թէ ինչ է դա.
— Դա է Տէրն իմ Յիսուս։

2.

Վեր կաց, հոգիս, երգիր ուրախ,
Օրհնիր Ներան սըբուանց.
Քահանայ է և Մարգարէ,
Փըրկիչ և Տէր տէրանց։

3.

Նա միշտ ինձ սովորեցնում է
Հոգու զօրութիւնով.
Նրա լուծն է քաղցր, Նրա բեռն թեթև,
Նրա մօտն եմ ապահով։

4.

Իմ Հովիւն է, իմ Բարեկամ
Եւ իմ երանութիւնս.
Ես տըկար եմ և յանցաւոր,
Նա է արդարութիւնս։

5.

Մ'խ, Տէր Յիսուս հաւատարիմ,
Տար ինձ ձեռքովդ հրգօր.
Դու իմ Ալֆան և Օմեգան,
Պահիր ինձ ամեն օր։

ԵՐԳ 267

1.

Տէրը դուռըս էր գարնում,
Յայտնելով իր սէրն անհուն.
Ինձ իր մահն էր յիշեցնում,
Եւ իր քաւչական արիւն.

«Ո՛վ հոգի, կ'ընդունեմ սէրս,
Ինձ թոյլ կըտամ մըտնեմ ներս»

2.

Երբ այս շնորհալի խօսքերն
Լըսեց իմ թըշուառ հոգին,
Իր սիրոյն ուժովը Տէրն՝
Փըշրեց սիրտըս կարծրագին.
Յայնժամ դուռը լայն բացի,
«Տէր, ներս մըտիր». ասացի։

3.

Օ՜հ, ի՜նչ շնորհքով սիրազգած՝
Նա ներս մըտաւ. ես իսկոյն
Ոտքերին առաջ ընկած՝
Խընդրեցի ողորմութիւն.
Իմ անձից գետի նըման՝
Սէր և վիշտ մէկտեղ անցան։

4.

Մինչ արցունքովս Նրա ոտքերն
Թըրջում էի անխընայ,
«Ձըրի բոլոր քո մեղքերն
Ես ներում եմ», ասաց Նա.
«Հաստատ մընա մինչ 'ի մահ,
Կը պըսակուես դու վըստահ»։

5.

Այս խօսքով իսկոյն իմ ծոց
Լըցուեց ուրախութեամբ նոր,

Եւ իմ հոգին ալէկոծ՝
Գըտաւ հանգիստ փառաւոր։
Հիացայ Իր սուրբ սիրոյն,
Երկնաւոր երանութիւն։

6.

Երազի պէս սուտ հաճոյք՝
Իմ աչքից եղան անհետ.
Մերժեցի աշխարհքի շուք,
Եւ միացայ Փըրկչիս հետ.
Ես Ներանն եմ յաւիտեան,
Նա իմ Տէրըս. փառք Ներան։

ԵՐԳ 268.

1.

Օ՜հ, այն աղբիւրն որ բըղխեցաւ
Խաչից՝ որտեղ մեռաւ Քրիստոս.
Օ՜հ, ի՜նչ Փրկիչ, որ վերք ու ցաւ
Իմ՝ բըժըշկեց արիւնահոս։

Թէև մեղքերն իմ կարմիր շատ,
Եւ յանցանքներս լեռներից մեծ՝
Գառին արիւնն հեղուեց առատ.
Եւ ձիւնից ինձ սպիտակ արեց։

2.

Աստուած ծածկեց երեսն Իրեն,
Երբ խաչի վրայ Նա կախուած էր.

Ո՛հ, կըրեց Նա պսակ փուշերէն,
Եւ չարչարանք խիստ դառնավէր։

3.

Ես լսեցի Քրիստոսի ձայն,
Եւ իմ կեանքը սրանով ապրեց.
Հեղուած արիւն չ'եղաւ ունայն,
Ձիւնից էլ ինձ սպիտակ արեց։

4.

Իմ վաստակած յոգնած հոգին,
Հանգիստ փընտրեց երկար միջոց.
Եւ Տէրն սիրով Իր կաթոգին,
Ինձ խրճալով՝ առաւ Իր ծոց։

5.

Պիտի պատմեմ յաւէտ այս լուր,
Թէ Փըրկիչըս արիւն թափեց.
Եւ պարզ ասեմ մարդկանց բոլոր,
Ձիւնից էլ ինձ սպիտակ արեց։

ԵՐԳ 269.

1.

Ա՛ռ, Տէր, կեանքըս Քոց լինի այն,
Միշտ նըւիրուած Քո սուրբ անուան.
Ա՛ռ ձեռքերս իմ, որ հլու՝ սիրոյդ
Ուժով շարժեն միշտ սիրափոյթ։

2.

Ա՛ռ իմ ոտքերս, և Քոյ Քեզ հետ

Քայլեն Քո սուրբ շաւիղդ յաւէտ.
Ա՛ռ ձայնըս իմ և տուր, ով Տէրս,
Քեզ միայն իմ ուղեմ երգերս։

3.

Ա՛ռ շրթունքներս, նըրանց վրայ
Քոյ սուրբ պատգամդ միշտ թրթռայ.
Ա՛ռ ունեցածս, սիրիր գանձիս,
Ձեմ պահելու ոչինչ անձիս։

4.

Ա՛ռ իմ խելքըս, Քոյ գործէ այն,
Քո սուրբ կամքին միշտ համաձայն.
Ա՛ռ իմ ժամերս, օրերս, որ միշտ
Սիրովդ սահեն՝ կամքիդ պէս ճիշտ։

5.

Ա՛ռ կամքըս իմ, ով Տէր, նըրան
Հըզօր կամքովդ եղիր իշխան.
Ա՛ռ նաև իմ այս սիրտըս չար,
Արա նըրան հոգւոյդ տաճար։

6.

Իմ սէրըս առ, նըրա գանձին
Միշտ եղիր Դու Տէրն առանձին.
Ա՛ռ իմ անձըս և տուր որ այն՝
Միշտ Քեզ համար ապրէ միայն։

ԵՐԳ 270.

1.

Աչքին շատ մօտ, ով Յիսուս,
Միշտ իմ հոգին պահիր.
Ուր զեղում են կեանք և յոյս,
Առատ և յորդալիր։

Աչը միայն, խաչը միայն,
Իմ փառքն է յաւիտեան.
Մինչև որ վերն երկնքում,
Հանգչեմ Քո սուրբ գրկում։

2.

Աչքին շատ մօտ նախ, ով Տէր,
Ինձ գրատաւ շընորհքը.
Աչքին շատ մօտ իմ աչքեր,
Տեսան սիրոյդ խորքը։

3.

Աչքին շատ մօտ, Աստ'ծոյ Գառ,
Տեսնեմ միշտ Քո պատկեր.
Որ, թէ Քո լոյսում պայծառ,
Վառուի առ Քեզ իմ սէր։

4.

Աչքին շատ մօտ, միշտ կ'ուզեմ
Հըսկել, սիրել, յուսալ,
Մինչև սիրուն Քո ձայն լըսեմ,
Երկնից մէջ լուսափայլ։

ԵՐԳ 271.

1.

Մի բաց դուռ կայ, որում յաւէտ
Աչքի քաւիչ արիւնը՝
Ցոյց է տալիս սէրն փըրկաւէտ
Եւ Փըրկչին գըթութիւնը։

Ո՜հ դուռն անճառ, տէս, ինչ գործեց,
Այն դուռն հէնց ինձ համար բացեց,
Հէնց ինձ, հէնց ինձ, հէնց ինձ համար
բացեց։

2.

Այն դուռն է ամենին ազատ,
Որ ծարաւ են փըրկութեան.
Մեծ և պըզտիկ, հարուստ, աղքատ,
Հրաւիրուել են մըտնել այն։

3.

Դէ՛հ շուտ արա և ներս մըտիր,
Քանի դեռ դուռը բաց է.
Քեզ կ'ընդունի Տէրն անխըտիր,
Ոչ ոք թող չըկասկածէ։

4.

Շուտով պիտի մենք Փըրկչին հետ,
Այս չար երկրից ելլենք վեր.
Տեսնենք Իր քաղցր երեսն յաւէտ,
Եւ օրհներգենք Նըրա սէր։

ԵՐԳ 272.

1.

Ո՜հ, մերթ ըստուերներն ինչ խոր են,
կեանքի շաւիղն ինչ դառնագին,
վըշտեր մըրկի պէս ուժգնօրէն,
Երբեմն կոծում են մեր հոգին։
Ցայնժամ թըռչել մեզ ինչ քաղցր է,
Դէպի վէմն որ ամենից բարձր է։

2.

Ո՜հ, մերթ օրն ունի մեզ տանջանք,
Եւ խոնջ ենք մարմնով բովանդակ.
Սակայն մեզ բնաւ չըկայ տաժանք,
Երբ այն վէմին՝ ենք շուքի տակ։

3.

կամիմք մընալ միշտ, վէմ, քեզ մօտ,
Աչքերն մեր խինդ կամ շիթ ծորեն.
Ճամբան լինի հարթ կամ լեռնոտ,
Անցնենք թէ մահուան մութ ձորէն։

ԵՐԳ 273.

1.

կամենում եմ լըսել կըրկին՝
Թէ փըրկուած եմ շնորհքով.
Ա՜խ, պատմիր ինձ Աստուածային
Անհուն սիրոյ վրայով։

կէսը ինձ չէ ասուած,
կէսը ինձ չէ ասուած,
Աստ՝ծոյ անհուն շնորհաց մասին,
կէսը ինձ չէ ասուած։

2.

Ես երկնային հանգըստութեան՝
Առել եմ ճաշակը.
Փըրկչիս տեսնել դէմքն յաւիտեան,
Այս է իմ փափագը։

3.

Ես ճըշմարիտ ուրախութիւն,
Փըրկչիս գոգում գըտայ.
Զը գիտէի թէ ինչ անհուն,
Եւ ինչքան մեծ էր դա։

4.

Ո՜հ, ինչ շընորհք, երբ մի անգամ
Ես կը տեսնեմ Ներան.
Եւ լիովին կը հասկանամ,
Ներա սէրն անսահման։

ԵՐԳ 274.

1.

Տէր, լըսում եմ քո ձայն,
Որով կանչում ես ինձ.
Վըստահ քաւող քո սուրբ արեան,
Գալիս եմ յուսալից։

Տէ՛ր, գալիս եմ Քեզ,
Դու ինձ մօտ փութա,
Դու ինձ համար սիրով հեզ,
Մեռար՝ ի Գողգոթա։

2.

Գալիս եմ պիղծ, թըշուառ,
Արա՛ ձիւնից ճերմակ.
Եւ ինձ շնորհքով Քո անըսպառ,
Արա՛ ուժեղ համակ։

3.

Երբ յարձակէն փորձանք,
Կը տաս ինձ յաղթանակ.
Կը տաս միշտ շնորհք և ըսփոփանք,
Եւ վերջն փառաց պըսակ։

ԵՐԳ 275.

1.

Երանելի այն օրն է, Տէր,
Որ ես բաժինըս Քեզ արի.
Երբ ես տեսայ անհուն Քո սէր,
Եւ շնորհքիդ մեծ գործը բարի։

Երանելի ասուի այն օրն,
Որ Տէրն մեղքերս ջընջեց բոլորն.
«Արթուն կաց դու, աղօթիր միշտ»
Ասաց Տէրը, և «կաց անվիշտ».
Երանելի ասուի այն օրն,
Որ Տէրն մեղքերս ջընջեց բոլորն։

2.

Ահա Փըրկչին ես ուխտեցի,
Տէրոջն եմ ես և իմս է Նա.
Նա կանչեց ինձ, ես մօտեցի,
Նա իմ Տէրս է և Քահանայ։

3.

Ո՛վ իմ հոգիս, հանգիստ մընա,
Ցոյս դընելով Փըրկչիդ վըրայ.
Անհուն բարիք քեզ կըտայ Նա,
Զը հեռանաս մօտից Նըրա։

4.

Իմ ուխտըս, ով Յիսուս Փըրկիչ,
Պիտի ամեն օր նորոգեմ,
Քո փըրկարար պատմեմ շնորհքից,
Եւ անվախճան սէրդ միշտ երգեմ։

ԵՐԳ 276.

1.

Երբ հընչէ փողն հրեշտակին՝ արձագանգեն
երկիր, երկին,
Երբ հատանեն րոպէք, ժամերն ժամանակին.
Երբ ծագէ սուրբ արշալոյս, սուրբերն
խըմբուեն վերն միասին,
Օ՛հ, ես էլ պիտի լինիմ մէջն այն խումբին։
Օ՛հ, ես էլ պիտի լինիմ անդ։(3 անգամ)
Օ՛հ, ես էլ պիտի լինիմ մէջն այն
խումբին։

2.

Լուսափայլ առաւօտում երբ մեռելներն
ամենն յառնեն,
Արդարներն բոլոր՝ մեծ վարձք պիտի առնեն։
Երբ ընարեալ անմահ հոգիք շրջապատեն
գահն այն Սուրբին,
Օ՜հ, ես էլ պիտի լինիմ մէջն այն խումբին։
Օ՜հ, ես էլ պիտի լինիմ անդ,(3 անգամ)
Օ՜հ, ես էլ պիտի լինիմ մէջն այն
խումբին։

3.

Քեզ տալիս եմ կեանքս բոլոր, ամէն այն
Փրկիչս ըսքանչելի,
Թող լեզուս պատմէ Քո սէրդ անպատմելի.
Քեզ համար ապրեմ, խորհեմ, գործեմ, խօսեմ
ես յարաժամ,
Եւ ապա սրբոց խումբին գամ միանամ։
Եւ ապա սրբոց խումբին գամ,(3 անգ.)
Եւ ապա սրբոց խումբին գամ միանամ։

4.

Տէ՛ր, Դու իմս ես յարաժամ, և ես էլ
Քոնն եմ անարժան,
Միշտ Քեզ հետ կ՝ուզեմ մընալ ես անբաժան։
Ցաւ, հաճոյք, հառաչ, ժպիտ, ինչ որ լինի
աստ իմ բաժին,
Գալ կ՝ուզեմ և միանալ ես այն խումբին։
Գալ կուզեմ և միանալ ես, (3 անգ.)
Գալ կ՝ուզեմ և միանալ ես այն խումբին։

ԵՐԳ 277.

1.

Յիսուս քաղցրութեամբ կանչում է քեզ իր
տուն,
Ո՛վ մեղաւոր, ևկ դու այսօր,
Իր սէրն մերժելով, ո՜հ մի՛ կընա հեռուն,
Ե՛կ, մեղաւոր, ևկ դու այսօր։

2.

Յիսուս կըտայ քեզ փըրկութիւն և հանգիստ,
Յոգնած հոգի, ևկ դու այսօր,
Թէև բեռը քո լինի էլ ծանր և խիստ,
Նա կը վերցնէ այն հէնց այսօր։

3.

Յիսուս սպասում է քեզ երկար ժամանակ,
Ո՛վ մեղաւոր, ևկ դու այսօր.
Ե՛կ քո մեղքերովդ, խոնարհութիւր խաչին
տակ,
Ե՛կ և ներում գըտիր այսօր։

4.

Յիսուս ալեբսում է, արդ լըսիր Նրա ձայն,
Լըսիր դու Նրան, լըսիր այսօր.
Նըրան եկողներն ցընծում միշտ կ՝ունենան,
Ո՛վ մեղաւոր, ևկ դու այսօր։

ԵՐԳ 278

1.

Իբըր պանդուխտ աշխարհում թափառեմ,
Աստ չէ հանգիստ, աստ չէ հանգիստ.
Իբըր ճամբորդ Փըրկչիս հետ կեանք վարեմ,
Ուրախ եմ միշտ, ուրախ եմ միշտ.

Կամ ակընդէտ փառաւոր այն օրուան,
Երբ մեզք ու ցաւ պիտի անհետանան,
Սիրտս հրճւում է լսելով Փըրկչիս ձայն։
Անդ կայ հանգիստ, անդ կայ հանգիստ։

2.

Աստ նեղութիւն և վըշտեր խիստ շատ են,
Աստ չէ հանգիստ, աստ չէ հանգիստ.
Թող փորձութիւնք անվերջ իմ շուրջ պատեն,
Վերն կայ հանգիստ, վերն կայ հանգիստ.
Ո՜հ, երբքան քաղցր է Փըրկչիս սուրբ խոստում,
«Շուտ կը գամ ես.»է՛ր լինիմ ես ըսըտում,
Նա կը տայ ինձ վերը կեանք, փառք, իրնդում.
Անդ կայ հանգիստ, անդ կայ հանգիստ։

3.

Իբր անապատ է աշխարհս վըշտալից,
Աստ չէ հանգիստ, աստ չէ հանգիստ.
Աստ վարած կեանքըս է կեանք մեղսալից,
Փըրկչիս արիւնն քաւող է միշտ.
Շուտ չարքէից կը լինիմ ազատուած,
Շուտ կը լինիմ երկընքում հաստատուած.
Անդ կըտայ ինձ կեանք յաւերժ Հայրն
Աստուած.
Անդ կայ հանգիստ, անդ կայ հանգիստ։

Ե Ր Գ 279.

1.

Ինչքան քաղցր է Տէր Յիսուսը,
Որ լըսում է մեր աղերսը.
Չի թողնում մեզ անըսփանք,

Շընորհում է մըխիթարանք.
Ո՜հ, դու դարձիր, ով մեղաւոր,
Մի՛ մնա հոգւով, մըտքով յուզուած.
Դու խոցուած ես և վիրաւոր
Մեղքի ահում խորասուզուած։

2.

Ո՜հ, դարձիր դու դէպի Տէրը,
Նըրան յանձնիր քո վըշտերը.
Նա չի յիշի քո անցածը,
Կըտայ քեզ Իր խոստացածը։

3.

Ողորմած և գըթած է Նա։
Ինըստասիրտ չէ մարդի նըման.
Նա մեծ սիրով Իր անխընայ՝
Քեզ կընկերէ մեղքերդ համայն։

Ե Ր Գ 280.

1.

Գառն Աստուծոյ, Քո սուրբ արիւն՝
Մեզ փըրկելու հեղար.
Մեզ տըւիր կեանք, արդարութիւն,
Մեր Առաջնորդ եղար։

2.

Քեզ օրհնութիւն, փառք և պատիւ,
Յաւէտ պիտի երգենք.

Եւ ինձ սիրենք դարեր անթիւ,
Պաշտենք, երկրպագենք։

ԵՐԳ 281.

1.

Ի՜նչ սքրտաշարժ աղաղակներ,
Լսուեցին Սաղէմի դաշտից.
Ինչ քաղցրաձայն եղանակներ,
Կըրկնեցին սիրտք բարեպաշտից։
Երգենք մենք փառք, օրհնութիւն,
Հընչեցընենք մեր ալէլուք,
Վեհ գառին, սուրբ անուն,
Միշտ գովեն պիտի մեր լեզուք։

2.

Ցընծմամբ մանուկներն երգեցին
Ովսաննա Քրիստոս Արքային,
Հրաչակելով գալուստ Փրկչին,
Որ բաշխեց մեզ լոյս երկնային։

4.

Յիսուս անուն բերաւ փրկանք,
Ամեն հրէի, Հեթանոսի.
Նա կրեց բոլոր մեր մեղք, գըրկանք,
Երգենք յաւէտ սէրն Քրիստոսի։

ԵՐԳ 282.

1.

«Ամենը պատրաստ է.»
Եկէք դուք ընթրիքին,

Հարուստ, աղքատ, ծեր, պատանի,
Հրաւէրն է ամենքին։

2.

«Ամենը պատրաստ է.»
Նըրանից է հրաւէրն,
Որ երկնից մէջ ալ կողմն Աստ'ծոյ՝
Փառքում նըստած է վերն։

3.

«Ամենը պատրաստ է.»
Լայն բաց է դուռն իրաւ.
Աստ'ծոյ սիրոյ խընճոյքըն է,
Քրիստոս՝ Գառն Իր, մեռաւ.

4.

«Ամենը պատրաստ է.»
Վերցուած են արգելքներն,
Եւ Քրիստոսում Աստուած մարդուն
Հաստատել է Իր սէրն։

5.

«Ամենը պատրաստ է.»
Եկէք դուք անյապաղ.
Ե՛կ, մեղաւոր, քեզ սպասում է
Փրկիչը՝ սքրտաբախ։

ԵՐԳ 283.

1.

Ո՞վ կայ Յիսուսի նըման,
Ո՞վ է Նըրա պէս սիրուն.

Զը կայ աշխարհում համայն,
Նըման Նըրա քաղցրագոյն։

2.

Իր սէրն է անզուգական,
Օ՜հ, ինչ մի քաղցր Բարեկամ.
Վըշտի մէջ և բերկրութեան,
Նոյնն է Նա ամեն անգամ։

3.

Նա չէ փոխում Իր միտքը,
Ես հաւատում այդ գիտեմ.
Դէպի ինձ սիրով Ինքը
Նայում է միշտ քաղցրադէմ։

4.

Վաղուց Իր առեղ մի ուրիշ
Տէր՝ թողած ինձ կըվինէր.
Ինձ վրայ արած մահանիշ,
Իրեն Նա կ՚արդարացնէր։

4.

Ա՜խ, Տէր իմ երկայնամիտ,
Դու ես իմ երանութիւն.
Ես յենուելով Սուրբ Խօսքիդ,
Գըտնում եմ մեծ զօրութիւն։

6.

Օգնիր, ով Տէր, որ հնազանդ՝
Լինեմ ընդ միշտ, Քո ծառան.

Եւ Քո մեծ սէրն՝ անվըկանդ
Երգեմ այժմ և յաւիտեան։

ԵՐԳ 284.

1.

Դուք կ՚ուզէ՞ք ուրախ լինել,
Փառք, փառք, փառք տըւէք.
Դուք կ՚ուզէ՞ք անվախ լինել,
Փառք, փառք, փառք տըւէք։
Կացէ՛ք Տիրոջ խորհըրդով,
Նըրա սիրում անվըրդով,
Եւ ուրախ, զըւարթ սըրտով,
Փառք, փառք, փառք տըւէք։

2.

Եթէ ատէ ձեզ աշխարհ,
Փառք, փառք, փառք տըւէք.
Եթէ պատէ ձեզ խաւար,
Փառք, փառք, փառք տըւէք։
Թէ ձեզ հասնէ վիշտ ու ցաւ,
Որ ամենին կայ հարկաւ,
Մի վըհատուէք դուք բընաւ,
Փառք, փառք, փառք տըւէք։

3.

Կայ մեզ Միջնորդ աննըման,
Փառք, փառք փառք տըւէք.

Իր սէրն է մեծ, անսահման,
Փառք, փառք, փառք տըւէք։
Վերն երկընքում մենք յաւէտ,
Փըրկչին այդ սէրն փըրկաւէտ,
Կ'երգենք բոլոր սըրբոց հետ.
Փառք, փառք, փառք տըւէք։

Ե Ր Գ 285.

1.

Մէկ կին անցաւ բազմութեանը միջով,
Յիսուսին մօտեցաւ.
Հանդերձի ծայրին դըպաւ և փութով
Յաւը անհետացաւ։
Նըրան դիպիր դու յուսալիր,
Եւ նոր կեանք կ'ըստանաս.
Նըրա ուժին վըստահ եղիր,
Այսօր կ'առողջանաս։

2.

Երբ Նա կանչեց, խեղճ կինը դողալով
Եկաւ Տիրոջ առաջ,
Եւ կեանքն իր նորոգուած ըզգաց շուտով
Սէրն էր այդ կատարած։

2.

Եւ ասաց Տէրը. «Դուստրը, քաջացիր,»
«Հաւատքդ ապրեցրեց քեզ.»

Կինն երբ լըսեց պատգամն այն
շնորհաճիր,
Փըրկուեց անմիջապէս։

Ե Ր Գ 286.

1.

Ո՛վ Յիսուս, Դու բարի Հովիւ ես,
Քո հօտըն արօտներ տանում ես,
Զօրեղ ձեռքերով պահպանում ես,
Ամեն փորձանքների դէմ։
Պահիր ինձ, ով իմ Փըրկիչ Տէրը,
Զօրացրու իմ տըկար ոտքերը,
Եւ վառիր իմ մէջ քո քաղցր սէրը,
Որ միշտ Քո գառնուկն լինեմ։

2.

Եթէ ես Քեզանից հեռանամ,
Լեռներ և անապատ տեղ գընամ,
Առանց Քեզ անպաշտպան կը մընամ,
Եւ փորձանքի մէջ կ'ընկնեմ։

3.

Թէև շատ երկար է իմ ճամբան,
Բայց Դու ինձ կը հասնես օգնութեան.
Քո թևդ է ինձ համար յենարան.
Քեզ մօտ հանգիստ կը լինեմ։

4.

Ո՛վ Յիսուս, թող մընամ Քո մօտը,
Պահում ես ձեռքիդ տակ Քո հօտը.

Դու լեցրու իմ սրտի կարօտը,
Քո ես Քո երկինքդ մրանեմ,
Այնտեղ կը չոքեմ Քո առջևը,
Ու կըտամ Քեզ փառքն ու պատիւը,
Ո՛վ միակ իմ բարի Հովիւը.
Քեզ մօտ միշտ պիտի լինեմ։

ԵՐԳ 287.

1.

Ո՜հ, ինձ դարձեալ նըրան պատմիր,
Հրաշալի խօսք կենաց.
Երգիր շընորհքն առատաձիր,
Հրաշալի խօսք կենաց·
կենաց խօսքը սիրուն,
Լոյս է մութ սրտերուն.
Յօսք գեղեցիկ, խօսք հրաշալի,
Հրաշալի խօսք կենաց։

2.

Տէրն ամենի համար ունի
Հրաշալի խօսք կենաց.
Ով լըսում է՝ Քո ընդունի
Հրաշալի խօսք կենաց։
Պարգև է բոլորը,
Տիրոջ Հրի շընորհը.
Յօսք գեղեցիկ, խօսք հրաշալի,
Հրաշալի խօսք կենաց։

3.

Քաղցրը ձայնով միշտ քարոզիր,
Հրաշալի խօսք կենաց.
Մեղաւորներին համոզիր,
Հրաշալի խօսք կենաց։
Աշխարհքըն անցնում է,
Այդ խօսքը մընում է.
Յօսք գեղեցիկ, խօսք հրաշալի,
Հրաշալի խօսք կենաց։

ԵՐԳ 288.

1.

Ե՛կ, ոօն է հարսանեաց,
Դուռն է քեզ համար բաց,
Ե՛կ, ինչպէս կաս.
Ե՛կ և սեղան նըստիր,
Քեզ տեղ կայ անխըտիր,
Բարիքներն են ընտիր,
Ու անպակաս։

2.

Ե՛կ աղբիւրին կենաց,
Փըրկչին ապաւինած,
Ե՛կ, Հրի տուր.
Այստեղ եկան շատերն,
Գըտան նոր կեանք, և Տէրն

Լըցրեց նըրանց սըրտերն՝
Ցընծմամբ խոպաու։

3.

Ե՛կ շնորհաց գահին մօտ,
Փըրկչին քաղցր և գըթոտ,
Կանչում է Նա.
Նըրան դու հաւատա,
Ամեն ինչ ձրի կըտայ.
Ե՛կ, դու Նըրան վըստահ,
Մի ուշանա։

4.

Այստեղ հանգիստ չ՚ունինք,
Վերն է մեր հայրենիք
Եւ գանձ բոլոր.
Անդ Տէրն բարի և հեզ,
Խոստացաւ տալու մեզ,
Պատմուճան և բեհեզ.
Ե՛կ. Ե՛կ այսօր։

ԵՐԳ 289.

1.

Յիսուս, ես հանգիստ եմ՝ ուրախ
Քեզանում, Քո սիրոյ մէջ.
Ես գըտել եմ սիրող սիրտըդ
Անսահման է մեծ։

Ինձ ասել ես Քեզ նայեմ միշտ.
Հոգիս ցընծում է գեղովդ,
Քանզի անձն իմ բըժըշկել է
Աննըման գորովդ։

Յիսուս, ես հանգիստ եմ՝ ուրախ
Քեզանում, Քո սիրոյ մէջ.
Ես գըտել եմ սիրող սիրտըդ
Անսահման է մեծ։

2.

Օ՜հ, ինչ մեծ է Քո գըթութիւն,
Ծովից էլ լայն ծաւալած.
Օ՜հ, ինչ վըսեմ Քո բարութիւն՝
Ինձ վրայ շըռայլած։
Ա՜հ, Քեզանում ես հանգիստ եմ,
Շընորհքիդ ճոխութիւնում.
Քո խոստումիդ վրայ յենուած եմ,
Քեզ ապաւինում։

3.

Լո՛ւռ յուսալով քեզ, Տէր Յիսուս,
Քեզ գըտնում եմ բաւական.
Եւ իմ սիրտը լիանում է,
Սիրովդ պատուական։
Լիացած են իմ փափագներ,
Լեցուած ամեն մի կարիք.
Օրհնութիւններդ ինձ ծածկել են,
Շատ են Քո բարիք։

4.

Քո երեսի լոյսն իմ վըրայ՝
Թող լինի ամեն բանում.
Քո ժըպիտի ներքոյ յաւէտ
կայ ինձ պաշտպանում։
Հօր փառքի Դու ճաճանչումն ես,
Պատկերն Նըրա էութեան.
Պահիր, ով Տէր, ինձ Քեզանում
Հանգիստ յաւիտեան։

ԵՐԳ 290.

1.

Արևմուտից առաջ, պէս պէս
Հիւանդք Քո շուրջ, Տէր, բերուեցին.
Եկան, օ՜հ, ի՜նչ ցաւերով վէս,
Ի՜նչ ցընծումով իսկ մեկնեցին։

2.

Իրիկուն է արդէն, և մենք
Մօտենում ենք կարօտով Քեզ.
Թէ դէմք գըթած Քո տեսած չենք,
Բայց ըզգում ենք որ մօտ ես մեզ։

3.

Ո՜հ, փարատիր մեր սըրտի ցաւ.
Ոմանք թոյլ են, ոմանք տըրտում,
Ոմանք Քեզ բնաւ չեն սիրել լաւ,
Իսկ այլք էլ սէր չ՚ունեն սըրտում։

4.

Ոմանք աշխարհն գըտել են սուտ,
Իսկ ձըգել այն չեն յօժարել.
Այլք բարեկամք ունեն անգութ,
Բայց բարեկամ Քեզ չեն արել։

5.

Փրկիչ Քրիստոս, Դու էլ ՄԱՐԴ ես,
Դու փորձուեցիր և տանջուեցար.
Թագուն վէրքերն՝ Քո խորատես
Աչքերն տեսնել կարեն իսպառ։

6.

Հըպում Քո դեռ ունի նոյն ոյժ,
Քո խօսքն էլ, Տէր, նոյն օրհնութիւն,
Քեզ ընդունողն թող գըտնէ բոյժ,
Եւ Քո սիրոյ բարիքն անհուն

ԵՐԳ 291.

1.

Կանչում է քեզ Յիսուս Տէրը,
Ինչո՞ւ չես գալ.
Քեզ համար է այդ հրաւէրը,
Ինչո՞ւ չես գալ.
Ե՛կ աշխարհից որտեղ վիշտ կայ,
Եւ ամեն կերպ տանջանք միշտ կայ,
Յիսուսի մօտ ուր հանգիստ կայ.
Ինչո՞ւ չես գալ։

2.

Կանչում է քեզ Յիսուս Տէրը,
Ինչո՞ւ չես գալ.
Բեր Նըրա մօտ քո մեղքերը,
Ինչո՞ւ չես գալ։
Նա քեզ ձըրի փըրկանք կը տայ,
Հանգիստ սըրտի և կեանք կը տայ,
Նա երկնային բերկրանք կը տայ.
Ինչո՞ւ չես գալ։

3.

Կանչում է քեզ Յիսուս Տէրը,
Ինչո՞ւ չես գալ.
Օ՜հ, ինչ մեծ է Նըրա սէրը,
Ինչո՞ւ չես գալ։
Նրա խոստումը պայման չ'ունի,
Օրհնութիւնը սահման չ'ունի,
Իսկ պարգևը նըման չ'ունի.
Ինչո՞ւ չես գալ։

ԵՐԳ 292.

1.

Նա չէ բընաւ յուսախաբող. խիստ աւելին է Յիսուս՝
Քան Նըրանից երազած իմ պայծառագեղ ամեն յոյս.
Իր սիրոյ մէջ ճըշմարիտ է. Նա չի անում յուսաթող,
Օ՜հ, թէ ամեն մարդ ճանաչէը՝ որ Նա նոյնն է անփոփոխ։ (կրկնիր)

2.

Նա չէ բընաւ յուսախաբող. փըրկել է Նա իմ հոգին՝
Եւ ցըրել Իր ներկայութեամբ վիշտ ու ցաւերս դառնագին.
Իր համբոյրով խաղաղաբեր հաստատել է իմ սըրտին,
Որ Իր սէրը միշտ նոյնըն է սև օրերում և մըթին։ (կրկնիր)

3.

Նա չէ բընաւ յուսախաբող. շուտով գալու է Ինքը,
Իմ սըրտում էլ վըկայում է, որ ինձ տանէ երկինքը.
Թող ծաղրողներն ինձ նախատեն՝ չը տեսնելով նըշան ինչ,
Բայց ես ունիմ Նըրա խոստումն, և դա անշուշտ բաւ է ինձ։ (կրկնիր)

4.

Նա չէ բընաւ յուսախաբող. ինձ ամենն է ամենում,
Իմ Տէրս, Փըրկիչս, Ընկերս, Բժիշկս և իմ Գանձըս անհատնում.
Խանդքը սըրտիս Նա շահել է, և լեցրել իմ ողջ կարիք,
Նա չէ բընաւ յուսախաբող, ինձ տըւել է շատ բարիք։ (կրկնիր)

ԵՐԳ 293.

1.

Կեանքս է կարճ և առժամայն,
Վաղանցիկ խոտի նըման.
Քեզ, ով մարդ, կայ մէկ պայման.
—Պատրաստ կաց։
Ժամանակի թևերն լայն,
Տանում են քեզ յուր՝ անձայն,
Շուտ օրերդ կը վերջանան.
—Պատրաստ կաց։

Պատրաստ կաց, պատրաստ կաց,
Յիսուսը քեզ կանչում է այժմ.
—Պատրաստ կաց։
Թէ մեղքում մընաս երկար,
Գուցէ դուռն փակուի խապար,
Եւ ապա ողբաս թըշուառ.
—Պատրաստ կաց։

2.

Անցնում են գահ ու պըսակ,
Չեն հասատատ դեղ ու հասակ,
Թող յոյսերդ սին ու անարգ.
—Պատրաստ կաց։
Մեղաւոր, քեզ Տէրն բարի
Ըսպասում է, շուտ արի,
Մի՛ դու բնաւ զուր թափառի.
—Պատրաստ կաց։

3.

Սահում են օրերն փութով,
Կանչում է Տէրն լի գութով.
Դիմիր գիրկ Նըրա շուտով.
—Պատրաստ կաց։
Ամ՛ խորհիր դու լըրջօրէն,
Տուր Փըրկչին կեանքդ համօրէն,
Մեծ սիրոյն Իր փոխարէն.
—Պատրաստ կաց։

4.

Ե՛կ դու հէնց այս երեկոյ,
Յոնարհուիր խաչի ներքոյ,
Արա Տէրն ընտրութիւն քո.
—Պատրաստ կաց։
Խաւարիցը եկ ՚ի լոյս,
Կը բըժըշկէ քեզ Յիսուս.
Երկինք քեզ կան ՚ի խրախոյս.
—Պատրաստ կաց։

ԵՐԳ 294.

1.

Գընում ենք յառաջ վահան և դրօշակով,
Հաւատոյ մարտը կըռուելու անվըրդով.
Կը գործենք յաւէտ, ցընծութեամբ երգելով,
Մինչև մեր Տէրն կանչէ մեզ,
Արիասիրտ կարգից լինի մեր զօրագունդ,

Յիսուսի դրօշին շուրջ խմբուենք
սիրաթուն.
Նաչն առած Նըրա, միշտ կըռուենք
համագունդ,
Մինչև մեր Տէրն կանչէ մեզ։
Յաղթուենք ... Յաղթուենք ...
Օ՜ն, գոչենք ... օ՜ն, գոչենք ...
'ի մի սիրտ ... 'ի մի սիրտ ...
Յառաջ քալենք և երգենք։
Գընում ենք յառաջ, և գընալիս
երգում,
Հօր տունը վերին ուր կայ միշտ
կեանք, խընդում.
Եկէ՛ք ուղեկցէք մեզ, վարձք կայ
երկընքում,
Երբ որ մեր Տէրն կանչէ մեզ.

2.

Գընում ենք յառաջ, Միմ Զօրապետը մեզ
կը պահէ, Նըրա լըսում ենք ձայնը հեզ.
Վախ չ'ունենք թէև թըշնամին գայ հանդէս.
Գործենք մինչ Տէրն կանչէ մեզ։
Հապա բարձրաձայն երգենք վեհ յաղթանակ,
Սըրտաւիր գործէ թող մեր ղօրաբանակ.
Տիրոջմով ղօրացած ամեն ժամանակ,
Գործենք մինչ Տէրն կանչէ մեզ։

3.

Գընում ենք յառաջ, մեզ Տէրը իր ձեռքով
կը տանէ իր մօտ խաղաղ և ապահով.
Վերն յաւէտ իր փառքն երգելու բարձրագով.
Գործենք մինչ Տէրն կանչէ մեզ։

Գընում ենք յառաջ, դէպ վերին մըրցանակն
Նըկըրտում ենք առնել փառաց սուրբ պըսակն,
Փըրկչին երեսը տեսնել է մեր փափագն.
Գործենք մինչ Տէրն կանչէ մեզ։

ԵՐԳ 295.

1.

Փորձանքներուի մէջ անհամար,
Եւ փուշերի մէջ սըրածայր,
Ի՞նչ քաղցր է երբ խորհում եմ ես,
Դու, Տէր, ինձ յիշում ես։
Դու, Տէ՛ր, ինձ յիշում ես,
Դու, Տէ՛ր, ինձ յիշում ես.
Էլ ի՞նչ վախեմ, երբ ինձ մօտ ես,
Եւ, Տէ՛ր, ինձ յիշում ես։

2.

Երբ գալիս են հոգսեր ուժգին
Մըթագնելու տըկար հոգին,
Կարեմ նըրանց կուրծք պարզել ես,
Մինչ Դու ինձ յիշում ես։

3.

Թող մութ ամպեր գան ու գընան,
Դըժուարը կամ հարթ լինի ճամբան,
Հոգ չէ բընաւ, վըստահ եմ ես՝
Որ Դու ինձ յիշում ես։

ԵՐԳ 296.

1.

Օ՜հ, ինձ համար, օ՜հ, ինձ համար,
Իմ Փըրկիչը զոհեց Իր կեանքը.
Բոլոր մեղքերըս կըրեց սիրաբար,
Իմ տեղ ընդունեց մեղքի տանջանքը։

2.

Օ՜հ, ինձ համար, օ՜հ, ինձ համար,
Իմ Փըրկիչը յաղթաուռաս յարեաւ.
Մահի իշխանին խափանեց իսպառ,
Կեանք, անմահութիւն լոյսի մէջ բերաւ։

3.

Օ՜հ, ինձ համար, օ՜հ, ինձ համար,
Իմ Փըրկիչը ապրում է վերը,
Եւ միշնորդում է Հօր մօտ անդադար,
Եւ մատուցանում իմ աղօթքները։

4.

Օ՜հ, ինձ համար, օ՜հ, ինձ համար,
Իմ Փըրկիչը գալու է շուտով.
Այնժամ դէմ առ դէմ ես ըզնծապատար
Կը տեսնեմ Նըրա երեսն հոգեթով։

ԵՐԳ 297.

1.

Տէր, Դու ինձ ձեռքովդ վարիր,
Թևերովդ պատըսպարիր.

Խաւարի և լուսի մէջ,
Առաջնորդիր սիրովդ մեծ։
Տէ՛ր իմ, Տէ՛ր իմ, Տէ՛ր, Դու ինձ
ձեռքովդ վարիր։
Սուրբ խօսքովդ մըխիթարիր,
Թևերովդ պատըսպարիր։

2.

Դու հոգուոյս լեր ապաստան,
Երբ ցաւոց ալիք գոռան.
Ապահով եմ, Տէ՛ր, Քեզ մօտ,
Գահիր ինձ սիրովդ գըթոտ։

3.

Տէր Յիսուս, ուղղիչ կենաց,
Լոկ Քեզ եմ ապաւինած.
Վերն երգեր Քեզ յաղթութեան՝
Կ՛երգեմ անդուլ, յաւիտեան։

ԵՐԳ 298.

1.

Ծանեննք խօսքն Աստուծոյ, առաւօտ կամ
իրիկուն,
Տանք անօթիներին Իր ճշմարտութիւն.
Եւ ըսպասենք բերքին միշտ յուսով
եռանդուն,
Շուտ պիտի ցընծութեամբ խուրձերն ներս
բերենք։

Խուրձերն ներս բերենք, խուրձերն ներս բերենք,
Շուտ պիտի ցընծութեամբ խուրձերն ներս բերենք։

Երկնիր

2.

Ցանեինք պայծառ կէսօրն կամ գիշերուան մութին,
Թէ երկինք մութ լինին, կամ հովերն ցըրտին.
Ինչ չեսոյ մեծ հունձք կայ, օ՜ն, գործենք սըրտագին,
Պիտ՝ շուտով ցընծութեամբ խուրձերն ներս բերենք։

3.

Ցանեինք միշտ արցունքով, Տէրը մեզ կ՝ընդունէ,
Վիշտ լինի մեր բաժին, աշխարհ անգոսնէ.
Երբ անցնին այդ վըշտերն՝ Տէրն մեզ պիտ՝ ողջունէ,
Եւ պիտի ցընծութեամբ խուրձերն ներս բերենք։

ԵՐԳ 299.

1.

Երջանիկ ափանց վըրայ,
Բաժանման կըսկիծ չըկայ,
Ոչ էլ դառն արցունք կամ ահ.
Անդ տես ինձ,
Ուր գիշեր չըկայ բընաւ,

Այլ ցորեկ ու կեանք անքաւ,
Վերն չըկայ ոչ մահ, ոչ ցաւ,
Անդ տես ինձ։

Անդ տես ինձ, անդ տես ինձ,
Ուր կենաց ծառն ծաղկում է միշտ,
Անդ տես ինձ.
Ամեն վիշտ կ՝անհետանայ,
Անդ ոսկի ափանց վըրայ՝
Բաժանման կըսկիծ չըկայ.
Անդ տես ինձ։

2.

Սին են աստ ոսկի յոյսեր,
Լուծւում են սըրտեր ու սէր,
Վերն չըկան հոգեր, յոյզեր,
Անդ տես ինձ.
Այնտեղ ամենքն են կայտառ,
Քաղաքում փայլուն, պայծառ,
Ուր իշխում է Սէրն անճառ.
Անդ տես ինձ։

3.

Քրնարներ աստուածային
Հընչում են շուրջ սուրբ գահին,
Պալատում մեծ Արքային.
Անդ տես ինձ.
Ուր սըրտեր հաշտ, անխըռով,
Զուլուած են անբիծ սիրով,
Եւ հոր մօտ կան ապահով.
Անդ տես ինձ։

ԵՐԳ 300.

1.

Ո՛վ Տէր, կանա հարսանիքին
Սիրով Դու գընացիր,
Եւ օրհնեցիր այն հանդէսը՝
Շնորքովդ առատաձիր։

2.

Տուր օրհնէքըդ արդ իւրնդրում ենք՝
Հարսին և փեսային.
Լեցրու նըրանց սըրտերն՝ առատ
Սիրովդ Աստուածային։

3.

Նըրանց ուղին՝ լուսաւորէ
Թող Քո լոյսը անշէջ.
Ի կեանս եվիր միշտ նրրանց հետ
Իընդի կամ վըշտի մէջ։

4.

Մէկտեղ ապրեն իրրև կեանքի
Շնորհքին ժառանգակից.
Վառ հաւատքով, սիրով, յոյսով,
Եւ միշտ գոհ վիճակից։

5.

Ցիսուս, արա սոցա տունը
Իրրև Բեթանիան,
Որ Քեզ լինի երկրի վրայ
Խորան սուրբ հանդըստեան։

6.

Շուտով կը գայ օրհնեալ ժամը,
Երբ հարսը Քո՝ անճառ
Ցընծումի մէջ՝ պիտի փայլի
Փառքովդ հագուած պայծառ։

7.

Ինչպէս պիտի զըւարճացած
Սիրտը Քո լիանայ.
Երկինք գովեստդ երգել՝ պիտի
Երկրի հետ միանայ։

ԵՐԳ 301.

1.

Ինչ քաղցր ես հարսանեաց ժամ,
Ինչ քաղցր և երկնային,
Երբ իր ձեռքը՝ յօժարակամ
Հարսը տայ փեսային.
Սիրտ սըրտի հետ ապահով՝
Կապուում է միասին,
Եւ Աստուծոյ անունով
Տըրուում է մատանին։

2.

Ա՛րդ, եղէք միմիանց ընկեր,
Կեանք վարելու այստեղ.
Տարէք լաւ և նեղ օրեր
Երկուսդ միատեղ.

Եւ չանացէ՛ք ամեն օր
Տիրոջ ձայնին լըսել,
Եւ արիւնը գօրաւոր՝
Ձեր տան սեմին քըսել։

3.

Թող կընքուի ձեր երկուքին
Այս ուխտն ու պայմանը,
Իջնէ աղօթքի հոգին
Եւ մընայ ձեր տանը.
Որ վերջը տեսնէք ցընծմամբ
Գառան հաւսանիքը,
Այնտեղ կ՝երգեն բերկրութեամբ՝
Աստուծոյ որդիքը։

ԵՐԳ 302.

1.

Արդեօք այն գեսի եզերքը
Մեր ոտքերն պիտի կոխեն,
Ուր սըրբոց, հրեշտակայ երգը
Վիշտը ցընծութեան փոխեն։
Այ՛ն, մենք էլ սուրբերի հետ՝
Պիտի հաւաքուենք այն փայլուն վայրը։
Ուր հոսում է պայծառ մի գետ,
Որի ակն է մեր Հայրը։

2.

Այն յըստակ գետի եզերքը՝
Երբ մըտնենք վայրն այն փառաց,

Այնտեղ Գառին սուրբ համերգը
Պիտ՝ երգենք գահին առաջ։

3.

Այն պայծառ գետի եզերքը
Երբ կը տեսնեն մեր աչունք,
Ցայնժամ Աստուծոյ սուրբ ձեռքը
Պիտի սըրբէ մեր արցունք։

4.

Այն հանդարտ գետի եզերքը
Մենք պիտ՝ առաջնորդուենք ճիշտ.
Եւ նըրա առատ, սուրբ բերքը
Անդ վայելենք մենք ընդ միշտ։

5.

Այն կենաց գետի եզերքը
Վերջն է մեր պանդրխտութեան.
Անդ բուժուին մեր ցաւ ու վէրքը
Շնորհիւ հեղած սուրբ Արեան։

ԵՐԳ 303.

1.

Կայ երկիր պանծալի և փայլուն,
Եւ կարենք հաւատքով տեսնել այն.
Անդ լուսոյ օթևանք ըզմայլուն,
Կըտայ մեզ երկնային սուրբ Փեսայն։
Ո՜հ, սիրուն ապագայ,
Անդ պիտի միանանք, երբ Տէրն գայ։

2.

Բարերար և սուրբ Հօր առաջին,
Պիտ՝ մընանք յաւիտեան երջանիկ.
Գատմենք մահն Իր Որդւոյն միածին,
Եւ Նորա աննըման արժանիք։

3.

Պիտ՝ երգենք քաղցրաձայն երգ Գառին,
Որ հասնենք այն եզերքն գեղեցիկ.
Մեր աչքերն Փըրկչին միշտ պիտ՝ յառին,
Որ կազմենք խումբ սըրբոց երգեցիկ։

4.

Պիտ՝ հանգչենք այն ափում փառաւոր,
Եւ պըսակ անթառամ ժառանգենք.
Ջերծ մեղքից երջանիկ և անդորը,
Փըրկչին սէրն անդ միշտ արձագանգենք։

ԵՐԳ 304.

Ո՛վ Աստուծոյ մեծութեան և իմաստութեան
և գիտութեան խո-|րութիւնը. ||
Ինչպէ՛ս անքննելի են Նորա դատաստանները
և անհասկանալի են Նո-|րա ճանապարհները։ ||

Որովհետև ո՞վ գիտաց Տի-|րոջ միտքը, ||
կամ ո՞վ եղաւ Նո-|րա խորհրդակից։ ||

կամ ո՞վ Նորան առաջուց մի|բան տուաւ, ||
Որ Նորա հատուցումն | առնէ Նորանից։ ||

Որովհետև Նորանից և Նորանով և դէպի
Նա է | ամեն բան. ||
Նորան փառք | յաւիտեան. ամէն։ ||

ԵՐԳ 305.

Օրհնութիւն Քեզ բար-|ձունքում, ||
Օրհնեալ | ես Տէր Աստուած մեր։

Օրհնում ենք Քեզ և | գովում Քեզ, ||
Աստուածանում ենք Քեզ, Տէ՛ր, և |
երկրպագում Քեզ։ ||

Տէ՛ր, գոհանում ենք | Քեզանից, ||
Որ | մեծ փառքի համար։ ||

Դու միայն սուրբ, Դու միայն | բարձրեալ ես, ||
Դու միայն Տէր | մեր՝ Յիսուս Քրիստոս։ ||

Օրհնեալ Գառն Աստուծոյ և | Որդի Հօր, ||
Որ մարդացար ծն-|ուելով կոյսիցը. ||

Դու չարչարուեցար, խաչուեցար, մեռար |
և յարեար, ||
Դու Սուրբդ որ նստում ես Մեծափառութեան
աթոռի աջ | կողմն երկնքում։ ||

Դու ես Երանելին և միայն | Հզօրը, ||
Թագաւորների Թագաւորը և | տէրերի Տէրը. ||

Դու միայն անմահութիւն ունիս անմատոյց
լոյսի մէջ | բնակուած, ||
Որ մարդկանցից ոչ ոք չ'տեսաւ և ոչ էլ |
կարող է տեսնել։ ||

Քեզ | լինի փառք ||
Եկեղեցում՝ որ Քրիս-|տոս Յիսուսում է, ||

Ամեն | յաւիտեան ||
Յաւիտեանս յաւ-|իտենից։ Ամէն։

ԵՐԳ 306.

1.

Թէև լինի շաւիղ կեանքիս,
Երկար, տրտմուր և ըստուերոտ.
Ինչո՞ւ տրտմի կամ լայ հոգիս,
Երբ յարաժամ Աստուած է մօտ։

Գիտէ Աստուած սրտի ցաւերն,
Եւ մեղ մաշող վշտերն խորունկ.
Նա լոյս կ՚անէ մըռայլ ըստուերն,
Եւ կը սրբէ ամեն արցունք։

2.

Ո՞վ չի խըմել աստ, արդարև,
Լեղի բաժակն հէք անյոյսի.
Տեսել ամպոտ գըւարթ արև
Դեռ չը հասած վերջալոյսի։

3.

Փոյթ չէ, եթէ հատնի կեանքիս
Ընթացքը կարճ ու վշտախառն.
Պիտի գառնայ կարօտ հոգիս,
Իր երկնային բընագաւառն։

ԵՐԳ 307.

1.

Ինչ ունեմ ես որ ստացած չը լինեմ,
Աստուծոյ շնորհքովըն եմ ինչ որ եմ.

Պարծանք չ՚ունեմ, բայց մի բան գիտեմ,
Որ ես ձրի շնորհքով փըրկուած մէկն եմ։
Մէկն եմ Աստ՚ծոյ շնորհքով փըրկուած,
Մէկն եմ Աստ՚ծոյ շնորհքով փըրկուած.
Օրհնեալ է Աստուած, որ շնորհքով եմ
փըրկուած,
Որ ես ձրի շնորհքով փըրկուած մէկն եմ։

2.

Մի ժամանակ մեղքին էի գերի,
Շընորհքին օտար, Աստուծուց հեռի.
Ցիսուսն եկաւ որպէս զի փըրկուեմ.
Հիմա ձրի շնորհքով փըրկուած մէկն եմ։

3.

Արցունքներս չ՚արին այդ բաները բընաւ,
Ողորմութիւնն արեց ամենն իրաւ.
Փառքին արժան ոչ մի բան չ՚ունեմ,
Սակայն ձրի շնորհքով փըրկուած մէկն եմ։

4.

Արդ վառուում է սիրտս, և ամեն բանում
Ուրախ երգում եմ և փառաբանում.
Եւ բարձրաձայն միշտ պիտի երգեմ,
Որ ես ձրի շնորհքով փըրկուած մէկն եմ։

ԵՐԳ 308.

1.

Տէս խըլփում է սաստիկ հողմը
Փոքրիկ նաւակին,

Տատանւում է այս-այն կողմը.
Ի՞նչ վտանգ ահագին։

Սիրտ ու՛ռ, նայիր Փըրկչին,
Թո՛ղ վախերդ չընչին.
«Ես ձեզ հետ եմ, դուք չէք մենակ,»
Կանչում է Նա, «մի՛ վախենաք.»
Այո՛, Նա մեզ հետ է շարունակ,
Կանգնենք անվախ և համարձակ։

2.

Տե՛ս նաւի մէջ մարգիկ ամեն
Ահ ու դողի մէջ.
Յիսուսին նըրանք դիմում են.
Ի՞նչ շուտ Նա օգնեց։

3.

Կեանքի ծովի մէջ ամեն ժամ՝
Փոթորիկ է փչում.
Զը վարանենք ոչ մի անգամ,
Հանգիստ կայ Փրկչում։

4.

Յիսուս եկաւ, որ փըրկէ մեզ
Նեղութեան ձորից.
Թո՛ղ Նա տանէ իր ձեռքով քեզ,
Ըրկինք այս երկրից։

ԵՐԳ 309.

1.

Այս կեանքս պատերազմ է և մենք
զինուորներ,
Կըռւում ենք ընդդէմ զօրութեան ց խաւարի.
Իրա՛ւ խորամանկ են թըշնամիքը մեր,
Բայց Քրիստոսն ունենք զօրապետ քաջարի։
Կանգնենք Յիսուսի համար, ով Քրիս-
տոնեայք,
Նա Ինք մեզ համար համբերեց խաչի վրայ.
Անխախտ հաւատքով, լի յոյսով շարունակ՝
Կանգնենք և լինենք քաջ վըկայ։

2.

Բաց է մեզ համար Աստուծոյ զինարան,
Նա հագցընում է մեզ Իր արդարութեամբ.
Դնում է մեր գլխին սաղաւարտ
փըրկութեան,
Եւ կապում է մէջք մեր Իր ճըշմարտութեամբ։

3.

Իր խօսքն ձեռքում մեր ունենք սուր
երկսայրի,
Հաւատքի վահանն աներկիւղ բըռնենք վեր.
Հանգչեցընելու կրակոտ նետերն չարի,
Եւ ամենն անելով կանգնենք անվեհեր։

4.

Արթուն կենալով և աղօթք անելով,
Մեր բոլոր զէնքերը կը մընան փայլուն.
Եւ մենք կ՝աճենք միշտ Աստուծոյ Սուրբ
խօսքով,
Եւ Նըրա շնորհքով կը լինենք հաստատուն։

5.

Անթիւ փորձութիւնք թէև կան մեզ պատած,
Սակայն ամենին կը յաղթենք Յիսուսով.
Ե՛ւ երբ մեր աչքերն տեսնեն Տէրն փառաց,
Մենք էլ Նըրա պէս կը փայլենք իր լուսով։

ԵՐԳ 310.

1.

Մենք հետևենք Յիսուսին արի՝
Պիտի յաղթենք թշնամուն վիթխարի.
Զինուած Աստուածային զէնքերով,
կըռուենք անվախ, անխըռով։

Թող մեր երգը բարձրաձայն հընչէ
Եւ ողջ տիեզերք զըղըդացնէ.
Հաստատ կաց, հաստատ կաց,
Հաստատ կաց դու կըռուում.
Հաստատ կաց, հաստատ կաց,
Յաղթողին վարձք է սըբուում։

2.

Յարատևենք աղօթքներում միշտ,
Լինենք ուրախ, մոռնանք ցաւ ու վիշտ.
Եւ խըտացնելով մեր շարքերը,
Հընձենք հասած հասկերը.

3.

Փարենք Յիսուսին մեր զօրաւոր,
Նետուենք ասպարէզ քաջ ու հըզօր.

Փայլում է հեռուից մեծ արշալոյս,
Աւետելով մեզ նոր լոյս։

ԵՐԳ 311.

1.

Ի՜նչ քաղցր է Յիսուս անունը,
Որով գըտնենք փըրկանք.
Ո՜հ, դա է այն ամրութիւնը,
Ուր վարում ենք մեր կեանք։

2.

Այդ անունն է նաւահանգիստ
Եւ մեր վէմը հաստատ,
Մեր գանձարան, որից մենք միշտ
Ունենք շընորհք առատ։

3.

Մեր Հովիւն է, մեր Զարդն անգին,
Մեր Իշխանն և Աստուած.
Ե՛րբ կը հասնենք մեր փափագին՝
Տեսնենք Իր դէմք գըթած։

4.

Պիտ՝ գովենք, Տէր, Քո սուրբ անուն,
Քանի աստ ունենք կեանք.
Յիսուս, կ՝երգենք Քո սէրդ անհուն՝
Երբ վերը Քեզ մօտ գանք։

ԵՐԳ 312.

1.

Հընչէր, ով երգ յաղթութեան,
Փըրկուած ենք արիւնով,
Ապացոյցն է Գողգոթան,
Մեր անձն է ապահով։

2.

Ո՛ւմ շընորհիւ այդ եղաւ,
—Տէր Յիսուսի շնորհիւ.
Օ՜հ, նա մեր տեղն՝ գոհ եղաւ.
Նըրա՛ն փառք և պատիւ։

3.

Ո՛վ մեր սըրտի Բարեկամ,
Ի՞նչ ասենք աւելի,
Մենք հիւանդ և խեղանդամ,
Դարձանք Քեզ սիրելի։

4.

Ա՜խ, Տէր, մեր Սիրականը,
Մեզ պատժելու փոխան՝
Ժառանգ արիր Քո տանը,
Թագաւոր և իշխան։

5.

Մենք երբէք չենք մոռանալ
Քո անհուն այդ սէրը,
Որ հաճեցար կեանքըդ տալ
Եւ կրել մեր մեղքերը։

6.

Ուստի մենք երգում ենք արդ,
Երգեր սուրբ օրհնութեան.
Տէր, գովեստներ Քեզ է պարտ,
Հիմա և յաւիտեան։

ԵՐԳ 313.

1.

Սիրտ սըրտի հետ մէկտեղ կըցուած,
Եղբա՛րք, քայլենք միասին.
Վազենք երկինք սիրով լըցուած,
Զրգենք աշխարհս փուչ և սին։

2.

Եկէ՛ք, եկէ՛ք, շնորհաց որդիք,
Եւ ձեր ուխտը, նորոգէ՛ք.
Երդուեցէ՛ք Նրան դուք, ով մարդիկ,
Չի Թողնի Նա ձեզ երբէ՛ք։

3.

Ո՛վ անդամներ, ցուցէ՛ք իրար
Սէր անկեղծ, անկողմնակալ.
Որ ամեն մէկն եղբարց համար
Իր կեանքը կարենայ տալ։

4.

Ո՛վ Սէր, Դու մեզ պատուիրած ես,
Որ մենք սիրոյ մէջ ապրենք.

կենդանացրու մեզ լիապէս,
Օգնիր Տէ՛ր, չը յոգնենք մենք։

5.

Արծարծիր մեր սիրոյ կայծը,
Թող ամեն մէկն պարզ դիտէ
Թէ մէկ է մեր Տէր Աստուածը.
Մէկն է որ մեզ պիտ՝ դատէ։

6.

Տէ՛ր, մխիթանց հետ միացրու մեզ,
Ինչպէս Դու մէկ ես Հօր հետ.
Ա՛խ, օգնիր որ նըմանուենք քեզ,
Ո՛վ մեր անձանց Հովուապետ։

7.

Մեր լապտերներն Քո հուրից միայն՝
Թող ընդունեն լոյս, ով Տէր.
Որ իմանայ աշխարհք համայն,
Թէ ենք Քո աշակերտներ։

ԵՐԳ 314.

1.

Լաւագոյն օրեր մեր կեանքի,
Թարմ ուժեր մեր երիտասարդական,
Տէր Յիսուսին մեր թանգագին՝
Կը տանք նուէր մըշտական։
Ի՞նչն է այնքան հաճելի մեզ,
Քան Յիսուսին ծառայել.

Յաչի վրայ մեռնող Փըրկչին հեզ՝
Կեանք մեր համայն ընծայել։

2.

Շարժուում է այժմ Նըրա բանակ,
Զոհուելու ժամ հընչեց մեզ համար.
Յապաղելու չէ ժամանակ,
Նետուինք ’ի մարտ սիրայօժար։
Եղբայրք, պահենք վեր մեր դրօշակ,
Անուամբ անյաղթ մեր Փըրկչին.
Թող երկնային այրի սուրը կրակ,
Զոհուենք Արեանն և Յաչին։

3.

Յիսուսի անուամբ՝ անվեհեր,
Օ՜ն, մեղքի դէմ կըռուենք ամենուր.
Կորչում են անթիւ հոգիներ,
Հաղորդենք նրանց բարի լուր։
Թող մեզ սպառնան հալածանքներ,
Մեռնելուց չենք վախիլ մենք.
Յաղթական գոռ երգերից մեր,
Պիտ՝ փախչի թըշնամին նենգ։

ԵՐԳ 315.

1.

Երգել կ’ուզենք, Փըրկիչ Յիսուս, այլ
ձրն երգենք
Փառքըդ վերին որ մերկացար՝ թող’լով
երկինք,

Այս աշխարհն այցելեցիր Դու. Ծնո՛ւնդըդ խոնարհ,
Որի նման երբէք տեսած չէր այս աշխարհ։

2.

Կեանքըդ, վարքըդ, առակ ու գործ,
Հըրաշք, քարոզ,
Խաչելութիւնդ, լուտանքներով այն բարբարոս.
Ո՜հ, հրաշափառ սուրբ յարութեանդ այն տեսարան,
Ո՛րը երգենք, Փըրկիչ Յիսուս,
Համբարձմանըդ վեհ սըրբարան։

3.

Ո՛վ Յիսուս մեր, երգել կ՚ուզենք սէրդ աննըման,
Սէ՜րդ, սէ՜րդ միայն, Փըրկիչ վըսեմ,
սէրդ անսահման.
Օ՜հ, երբ կ՚լինի որ սըրբոց հետ վերն երջանիկ՝
Սիրովդ արբշիռ, Քո սէրն նուագենք և արժանիք։

ԵՐԳ 316.

1.

Յիսո՛ւս, Քեզ մէջ ապրել միայն,
Կ՚ուզենք մեր կեանքը ամենայն.
Դու ես մեր յոյսն և սէրն համայն,
Պիտ՚ հետևենք Քեզ լուռ, անձայն։
Օրհնեա՛լ Փըրկիչ, Յիսուս Քրիստոս,
Լոյսի, սիրոյ Գետ յորդահոս։

2.

Երբ նեղութիւն և ցաւք պէս պէս,
Շըրջապատեն մեզ դէզ ՚ի դէզ,
Պիտ՚ յառենք մեր աչքերն ՚ի Քեզ,
Ո՛վ Դու Գառնուկ խոնարհ ու հեզ։
Զենեա՛լ Փըրկիչ Յիսուս Քրիստոս,
Դու շընորհքի Գետ յորդահոս։

3.

Եւ երբ հատնեն այլևս ժամերն,
Մեկնեն ոսկէ շընորհն ու սէրն,
Ո՜հ, ինչ ցընծում՝ Ինք փառաց Տէրն
Յափըշտակէ պիտ՚ Իրենները,
Գովաբանեա՛լ Յիսուս Քրիստոս,
Փառքի, պատուի Գետ յորդահոս։

ԵՐԳ 317.

1.

Ա՜խ, թէ վերից մեզ բիւր լեզու,
Հազարաւոր բերան տըրուէր,
Եւ Տիրոջ՝ սըրտանց գովելու
Զայն տար անձ մեր բոլորանուէր,
Իր այն ամեն շնորհաց համար,
Որ անում է մեզ անդադար։

2.

Երգենք, եղբա՛րք, մենք քաղցրալուր,
Թո՛ղ չը լըռէ մեր երգի ձայն,

Երգեն մեզ հետ երկինք բոլոր
Եւ երկրի վրայ սուրբերն համայն՝
Ներքան որ մեր փոխան մեռաւ,
Եւ մեզ նոր կեանք ու լոյս բերաւ։

3.

Ֆեզ նըւիրենք, արդ, ով մեր Տէր,
Այս մեր տրկար փառքն ու պատիւ.
Երկընքում՝ մեր պիտի սըրտեր
Երգեն ուրախ և ջերմ ըղձիւ.
Այնտեղ կ՚երգենք Ֆեզ սիրագեղ,
Սուրբերիդ հետ մենք միաւեղ։

ԵՐԳ 318.

1.

Փըրկչին անզոյգ յիշատակին,
Սիրոյ հրաշքներն Իր անհամար՝
Երգում ենք այժմ մենք սըրտագին.
—Նա խաչին մահն կրեց մեզ համար։

2.

Վերից Ներքա սիրոյն դրօշակ
Ծածանում է մեր գըլխի վրայ.
Խընճոյքներնուն հովանու տակ
Ըզմայլում ենք զեղով Ներքա։

3.

Շուտով վերը՝ այն երկնային
Խընճոյքում մեզ պիտի խառնենք,
Տեսնենք երեսն մեր Փեսային,
Եւ կարօտ մեր Ներանից առնենք։

Ցանկ

	ԵՐԳ	Չափ
Ազատ ամեն հովերից խիստ	112	8(4)
Ազատ Քրիստոսում, Ինչ .	28	10(4)
Ա՜խ, թէ վերից մեզ, բիւր	317	8(6)
Ա՜խ, մեզ մօտ կայց, Տէր .	130	8(4)
Ահա կանգնած դրանդ առաջ	202	8(8)
Ահա մի օր անցաւ կրկին .	226	8.6(4)
Աղօթքն է խօսք խիստ . .	135	8(4)
Ամեն բանըս, Տէ՛ր ամեն բան	144	8.7.8.7/5.5.8.5
Ամենը պատրաստ է . . .	286	6.6.8.6
Ամենիշխան Տէր և Արքայ	67	8.8.6.8.8.6
Ամենօրհն եալ Փրկիչ և Տէր	55	8.6(4)
Ամպերն՝ի վեր թռչել . .	259	8(6)
Այլ ապաւէն մենք չենք .	65	8(6)
Այնպէս անուշ անուն չըկայ	192	8.7(8)
Այս կեանքս պատերազմ .	309	11.11.11.11/11.11.11.8
Այստեղ սկսում է երգն .	34	6.6.6.6.8.8
Այստեղ սովորցրու մեզ . .	117	6.4.6.4/6.6.6.4
Անհուն սիրովդ՝ի Գողգոթա	84	8(8)
Անյոյսին յոյս ով Յիսուս	213	7(4)
Անձկոտ, կրքոտ մեր օրերում	231	8(4)
Անցած է ցաւ, արիւն քրտ.	37	12.8.8 8.4
Ապաշխարիր, ով մեղաւոր	241	8(4)
Ապրիր միայն Փրկչի համար	124	8.7(4)
Առաջնորդիր ինձ վէմին այն	264	8.7(8)
Առաջնորդիր մեզ, ով Յիս.	176	8.7(8)
Ա՛ու, Տէ՛ր, կեանքըս, Քող .	269	8(4)

	ԵՐԳ	Չ ա փ
Ասա, Տէրն Իր հեղեց արիւն	255	8.6.8.5/7.7.7.5
Աստուած այնպէս աշխարհ	101	8.6(4)
Աստուած և Հայր մեր, մօտ.	70	10(4)
Աստուած և Հայր, պաշտում	248	8(8)
Աստուած մեր բերդ մեզ .	51	8(8)
Աստուած է բերդ մեր հաս.	198	8.7.8.7./6.6.6.6.7
Աստուած ունենք, բաւ է սա	227	7(8)
Արդեօք այն գետի եզերքը	309	8.7.8.7./8.10.8.7
Արդէն աստղն առաւօտեան	236	7.6(8)
Արևմուտից առաջ, պէս պէս	290	8(4)
Արժանի է Նա փառքի . .	8	7(4) կցուրդով
Աւքայն սիրոյ է Հովիւ մեր	96	8.7(4)
Աւաղ, Տէրն իմ խաչի վրայ	253	8.6.8.6/6.6.10 9.9
Բարի Յիսուս, Քո սրտումը	167	8.7(8)
Բացակայ բարեկամների հա.	151	8.5 8.3
Գառն Աստուծոյ, սուրբ .	86	8.6(4)
Գառն Աստուծոյ, Քո սուրբ	280	8.6(4)
Գիտենք Փրկիչ մեր բարե.	119	8.7(4)
Գիտենք Փրկիչն է կենդանի	68	8(4)
Գնում ենք մեր հօր տունը	283	8.6.8.6.8.8.8.6
Գնում ենք յառաջ, վահան	294	11.11.11.7.11.11,11.7.6.6.6.7.11.11.11.7
Գողգոթայից սիրոյ բարբառ	45	8.7.(6)
Դարձիր կրկին, դարձիր .	239	8.7(8)
Դէմ ճռ դէմ, Տիրոջը հետ .	109	8.7(8)
Դիմել ես Յիսուսին . . .	186	11.9.11.9/6.9.11.9
Դու ես Բանը յաւէժակաց	53	8.6.8.6.8.8

	ԵՐԳ	Չ ա փ
Դու երկնի և երկրի Տէր .	25	7(10)
Դու մեր օգնութիւնն ես .	121	6.4.6.4./7.6.7.4
Դու յոգնած կամ վհատուած	183	8.5.8.3
Դուռն է թակում . . .	206	7.7.8.7 8.8
Դուք կ'ուզէ՞ք ուրախ լինել	284	7.5.7.5/7.7.7.5
Դուք որ սիրում էք Տիրոջը	11	8.8.8.5
Եթէ վինուոր ենք խաչին .	139	8.6(8)
Ե՛կ, դաշնարկիր իմ սիրտ .	153	8.6(4)
Ե՛կ, ոսն է հարսանեաց .	288	6.6.4.6.6.6.4
Եկէ՛ք երգենք մենք միաբ.	1	8.4.8.4.8.8.8.4
Եկէ՛ք հաւատացեալք . .	54	12.11.12.11
Եկէ՛ք, Տէրն սիրողներ . .	19	6.6.8.6
Եկէ՛ք օրհնենք մեր Տէրն .	58	6(8)
Եղբայր ենք մենք . . .	88	8(4)
Ես գտել եմ այն մարգարիտ	266	8.6(4)
Ես գտել եմ մի Բարեկամ .	185	8.7(8)
Ես գտել եմ մի Փրկիչ . .	73	7.5.7.5.7.7
Ես լսեցի ձայն Յիսուսի .	204	8.6(8)
Ես կեանք ունիմ Տէր . .	228	8.7(4)
Ես յոգնած և խիստ . . .	251	8.7(8)
Ես սիրում եմ միշտ . . .	225	8.7(8)
Ես Քոնն եմ, ով Տէր . .	175	10.7.10.7/9.7 11.7
Երանելի այն օրն է, Տէ՛ր .	275	8(10)
Երբ ապրում ենք Տէրում .	212	6.6.9.6.6.9/9.7.6
Երբ դիտում ենք, Աստուած	92	8.6(4)
Երբ խաղաղութիւն իրեւ .	214	11.8.11.9/6.9
Երբ խաւար գիշերն անցնի .	56	10(6)
Երբ կեանքի ալեաց վրայ .	147	11.11.11.11/9.9.9.11

	ԵՐԳ.	Չ ա փ
Երբ կեանքի հոգմ փչում է	249	8.7.8.7/8.8.8.7
Երբ հաւատքով նայում ենք	97	8.6(8)
Երբ հնչէ փող հրեշտակին .	276	15.11.15.11/8.11
Երբ մենք կապուած . . .	89	7(4)
Երբ մենք նայում ենք . .	7	8(4)
Երբ մեր նեղութիւն և վիշտ	133	10.10.10.10/8.8.10.10
Երբ մոլորուած մեղքի մէջ .	178	7.6.7.6.8.8/6.6.9.9
Երբ նայեցի, Տէր, Քո լաչին	170	8(4)
Ի՞նչ պիտի ժողովուենք .	120	6.5.6.5.6.6.6.5
Երբ Փրկիչը, վերն երկինքը	265	8.5.8.5/7.7.7.5
Երգել կ՚ուզենք Փրկիչ. . .	315	12(4)
Երգենք Յաւիտեան յաւիտեան .	8	7(4) կցուրդով
Երգենք Հովուին սէրն . .	23	8(4)
Երգենք Նրան գովեստ ամեն	87	8(4)
Երգենք Փրկչին սէրն . .	10	8.8.8.5
Երկնային հանգիստ, սէր .	219	10.7.10.7/7.7.7.6.6.8
Երջանիկ ափանց վրայ . .	299	7.7.7.3.7.7.7.3/6.6.3.7.7.7.3
Երջանիկ են ամեն նրանք .	221	8(6)
Երջանիկ բոպէներ տալիս է	38	12 9.12.8
Ընտրիր ուղիս, ով Տէր . .	207	6(8)
Թէև լինի շաւիղ կեանքիս .	306	8(8)
Թէև նուաղած, գնում ենք .	132	11(4)
Թէ՛ լինէի ես մի շուշան .	81	8(4)
Թէ՛ հանդարտ գետի պէս .	108	11.8.11.8|12.8
Թէ՛ որ ես քեզ, ով Տէր .	166	8(6)
Թէ՛ չ՚ստանան այստիզ . .	238	8(8)
Թէ՛ վախենամ չարիցը . .	180	7.5.7.5/5.5.8.5

	ԵՐԳ.	Չ ա փ
Թէ՛փառաւոր անուանք շնոր	12	8.6(4)
Թող միանան ամեն . . .	63	6.6.6.6.8.8
Թող ուրախ լինին սրտերն	215	8.7.8.7/8.7.10.7
Թող քո յուզմունքներդ . .	184	6.5(8)
Թող օրէցօր միշտ Քեզ . .	146	9.6.9.6
Ժամն աղօթքի, ժամն աղօթքի	169	8(8)
Իբր պանդուխտ աշխարհում	278	10.8.10.8/10.10.10.8
Իմ Փրկչիս ոտքերին մօտ .	252	7.6(8)
Ի՞նչ անես որ փրկուես . .	193	7.5.7.6/5.6.8.6
Ի՞նչ է կեանքը մեր, մի շոգի	210	8(6)
Ի՞նչ կ՚լինի քո ապագան .	229	8(6)
Ի՞նչ հաստատուն է հիմ մեր	196	10(4)
Ի՞նչ ունիմ ես որ ստացած	307	10.10.9.9/8.8.11.9
Ի՞նչ սրտաշարժ ազդակներ	281	8 8.8.8|7.8.6.8
Ի՞նչ քաղցր այտեղ, իհնչ .	18	8.6(4)
Ի՞նչ քաղցր ես հարսանեաց	301	7.6(8)
Ի՞նչ քաղցր է այն միտքը	127	6.6.8.6/9.9.6
Ի՞նչ քաղցր է Յիսուս . .	311	8.6(4)
Ի՞նչ քաղցր հնչէ Յիսուս .	13	8.6(4)
Ի՞նչ օրհնալից անուշ վար.	162	8(4)
Ի՞նչը դրդեց Քեզ, ով . .	42	8.7.8.7/11.4.4.7
Ի՞նչն է մեր հոգին փրկում	76	7.8.7.8/6.6.6.8
Ի՞նչու հոգանք, Տիրոջ . .	234	8.7.8.7/8.8.8.7
Ի՞նչպէս Բարեկամ է մեր .	191	8.7(8)
Ի՞նչքան լինի խաչն իմ .	156	9.7.9.7/9.9.7.7.7
Ի՞նչքան քաղցր է Տէրը . .	279	8(8)
Իմաւ այն Սուրբն իջաւ .	154	8.6(4)

	ԵՐԳ	Չ ա փ
Իրաւ Փրկչին արեան մէջ .	263	8(6)
Լայնատարած անցնում ենք	148	10.7.10.7.10.10.10.7
Լաւագոյն օրեր մեր կեանքի	314	8.9.8.7/8.7.8.7
Լաւ Բարեկամ կայ բարձրում	181	8(6)
Լոյս բարերար	189	10.4.10 4.10.10
Լոյս, մենաւոր նժդեհ նրաին	140	8.6(4)
Լուր, գոչում են Գառն . .	4	8.7(4)
Լսեցէ՛ք, ով փոքր սղայքըդ	143	8.7(8)
Լսում ենք սիրոյ ձայնն .	157	6.6 8 6
Մաղաղութի՛ւն, լրիւ և . .	224	10(2)
Մաչին շատ մօտ, ով Յիսուս	270	7.6.7.6/6.6 7.6
Մոնարհւում եմ սիրոյ զօր.	173	9.8.9.8 9.9
Ծածկում է ինձ	249	8.7.8.7/8.8.8.7
Կամենում եմ լսել կրկին .	273	8 6.8 6/6.6.8.6
Կամիմք երգել Փրկչի կեա.	104	9.8.9.8/8.8.9.8
Կա՛յ երբէք մի ընտիր Հովիւ	168	8.7(8)
Կայ երկիր պանծալի և փայ.	305	9.9.9.9/6.9
Կայ մի բլուր կանանչաւէտ	164	8.6(8)
Կայ մի երկիր սուրբ և փայ.	262	8(8)
Կանչում է քեզ Յիսուս Տէրը	291	8.4.8.4/8.8.8.4
Կապուած ենք մենք ամուր	9	8.7(4)
Կարօտ եմ, Փրկիչ, քեզ կար.	77	8.7.8.7/8.8.8.7
Կեանքս է կարճ և առժամայն	293	7.7.7.3.7.7.7.3/6.8.3.7.7.7.3
Կենդանի է մեր Տէրն . .	49	6.6.8.6
Կէս համոզուած Փրկչին .	194	9.9.6.6.6.4

	ԵՐԳ	Չ ա փ
Հայր, սէրը Քո ճանաչեց մեզ	69	8(6)
Հայրենի տանս երկնաւոր .	246	7.6(8)
Հանգիստ Փրկչիս ձեռքերում	258	7.6(12)
Հաստատ վէմ է փոթորկի	248	8(8)
Հաւատացեա՛լք եղիենք երգով	62	8(4)
Հաւատացեալք Տիրոջ,տեսէք	17	6.6.8.6
Հեռո՛ւ վայելք երկրի . .	102	6.4.6.4.6.6.6.4
Հեռուն երկիր մի փայլում է	126	11.11.11.11/7.6.7.6
Հնչիր, ով երգ յաղթութեան	312	8.6.8.6
Զեռքըս բռնիր, տկար եմ,	244	11.10.11.10
Ճամբան դու, Տէր, ընտրիր	207	6.6.6.6.6.6.6.6
Մեծ Բժիշկը մեզ մօտ է .	36	8.7.8.7/8.8.8.6
Մենք գովում ենք Քեզ, ով	237	8(4)
Մենք երգում ենք Յիսուսին	129	7.6(8)
Մենք հետևենք Յիսուսին .	310	9.9.5.7/9.9.6.6.6.7
Մենք չենք թողնի Սուրբգիր.	254	7.6.8.6.8.6.8.6/8.6.8.6
Մեր կեանքն է Քրիստոս .	107	6.6.8.6
Մեր կեանք, մեր սէր . .	100	8(8)
Մէկ կին անցաւ բազմութ.	285	10.6.10.6/8.6.8.6
Միայն Քո վրայ յուրհելն,	60	8.6(4)
Միանանք պիտ՝ մի օր վերն	125	7(8)
Մի բաց դուռ կայ . . .	271	8.6.8.6/8.8.10
Մի կեանք ունիմ այն միայն	201	7(4)
Մի մերժիր դու քեզնից .	232	8(6)
Մի սուրբ աղբիւր երակնե.	161	8.6(4)

	ԵՐԳ.	Չ ա փ
Մխքէ՛, Յիսուս, Քո սէրդ	91	8.6(8)
Միշտ պիտի հեռևենք Քեզ	50	7.6(8)
Յարաշարժ կեանքում, Տէր,	72	10(4)
Յաւիտենական էակ . . .	197	7(8)
Յիշենք Գողգոթան, ո՜հ, եղբ.	160	8.11.11.11.5
Յիսուս անուշդ է ցուպ և	66	10(4)
Յիսուս անուն սէր է . .	24	6.4.6.4.6.6.6.4
Յիսուս, ես հանգիստ եմ, .	289	8.7.8.5(12)
Յիսուս, ես վճռել եմ Քեզ .	137	7.6(8)
Յիսուս, է միշտ մեր առաջ·	222	8(8)
Յիսուս կրեց խաչն մեր .	187	8.6(4)
Յիսուս մեղքի քաւիչ հզաւ	93	8.7.8.7/6.5.6.5
Յիսուս մեր Տէր, Դու . .	6	8.6(4)
Յիսուս յայտնեց մեզ սէր ·	165	8.8.8.6(8)
Յիսուս ներած է իմ մեղք·	216	8.6.8.6/8.7.8.6
Յիսուս, Փրկիչ, Դու իմ Տէրը	256	8.7(8)
Յիսուս քաղցրութեամբ կան.	277	11.7.11.7
Յիսուս Քեզ մէջ ապրիլ .	316	8(6)
Յիսուս, Քոնն է միայն .	152	6.6.8.6(8)
Յիսուս, Քրիստոս, Դու Փրկ·	3	8.6[4]
Յիսուսի պէս չըկայ մի բա·	217	10.6.10.6/9.8.10.6
Յիսուսին ևկ, Յիսուսին ևկ	218	8.6.6.6
Յօժար ծառայութեամբ, ով	123	8[4]
Նայում ենք հոգւով Քեզ .	113	6.6.4.6.6.6.4
Նա չէ բնաւ յուսախաբող .	292	15[4]
Նոյն դիշերում, Տէր Յիսուս	15	7.6[8]
Նրան որ մեր սիրոյ համար	32	8[4]

	ԵՐԳ.	Չ ա փ
Շնորհառատ Յիսուս Փրկիչ	35	7[10]
Շնորհաց աթոռն վեհասքանչ	195	7[4]
Շնորհաց խօսքիդ հլու, ով	46	8.6[4]
Շնորհք է լսած մեր. . .	163	6.6.8.6
Շնորհք, իմն անուշ ձայն	95	6.6.8.6/5.5.7.6
Ո՜հ, այն աղբիւրն որ . .	268	8[8]
Ո՜հ, այն գիշերն Գեթսեմա.	188	8.6[8]
Ո՜հ, այն խաչեալ Գառն .	138	8[6]
Ո՜հ, Աստուծոյ Գառն . .	159	8.6.8.6/8.8.8.6
Ո՜հ, դու սրբոց հանգիստ	261	8.6[4]
Ո՜հ, թէ մարդիկ անհուն .	20	8 6[4]
Ո՜հ, թէ Փրկչին մեր սիրելի	44	8 8.6.8.8.6
Ո՜հ, թէ Փրկչին շնորհքն .	150	8[4]
Ո՜հ, ինձ դարձեալ նրան .	287	8.6.8.6/6.6.8.6
Ո՜հ, մերթ ատւերներ իմն	272	8.8.8.8/8.9
Ո՜հ, մի դիջանիր, մի անսա	190	11.11.11.11/7.7.7.6
Ո՜հ, մի մերժեր Փրկչիդ հրա.	230	8.8.8.5/12.12.9
Ո՜հ, նայիր վեր, ով մեղաւոր	223	8[4]
Ո՜հ, Սէր վսեմ սքանչելի .	21	8.7[8]
Ողջո՜յն Իմմանուէլին . .	47	8.6(4)
Ողջո՜յն Տէրոջ Յծեալին .	64	7 6(8)
Ո՛վ Աստուծոյ մեծութեան .	304	Օ ր հ ն ե ր գ
Ո՛վ Գլուխ, անգամ մի . .	155	7.6(8)
Ո՛վ կայ Յիսուսի նման .	283	7(4)
Ո՛վ հոգւոյս սիրող Քրիստոս	205	7(8)
Ո՛վ Հովիւ ամենակալ . .	131	7(8)
Ո՛վ մեծ Աստուած, հրաշքներ	30	8(6)
Ո՛վ Յիսուս, Դու քարի Հով.	286	9.9.9.7(8

	ԵՐԳ	Չ ա փ
Ո՛վ Յիսուս, Դու Երբ պիտի	110	8(4)
Ո՛վ Յիսուս, չքո գալիս .	114	8.6(8)
Ո՛վ Տէր, կանա հարսանիք·	300	8.6(4)
Ո՛վ Տէր Յիսուս, քաղցր է	78	8.7(4)
Ո՛վ Տէր Յիսուս, Քեզ սիր·	74	8.7(8)
Ո՛վ Տէր, պահիր աղաչում .	151	8.5.8.3
Ոտքըս սաստիկ վաստակած	240	8.6(12)
Որ սիրեց մեզ և տուաւ Իւր	57	8.7(6)
Ո՞րչափ ուրախ ենք որ .	52	10.10 10.10/9.8.9.6
Ո՞ւր կայ հանգստութիւն .	242	6.6.8.6
Ուրիշ էլ մեզ ինչ փոյթ .	128	6(4)
Զենք մոռանալ, ո՛վ զենուած	22	8(4)
Զըկայ մի սէր Յիսուսի .	41	10.6.10.6/6.6.10.6
Զըկայ ոչ ոք բնաւ Քեզ պէս	26	8.7(4)
Զըկայ, Տէր, յաւ այնքան	75	8(4)
Պայծառապէղ դէմքիդ Յիս·	247	8 6 8.6/6.6.8.6
Պանդուխտ ենք այստեղ .	211	6.4.6.4.6.6.4
Պիտի ապրի Քո անունը .	39	15(4)
Սէր անունը Տէր Յիսուսի .	105	8(8)
Սիրում ենք Քեզ, ո՛վ Տէր .	94	6.6.8.6
Սիրտ սրտի հետ մէկտեղ .	213	8.7(4)
Սրտիդ դրան առաջ կանգ.	220	8.7(8)
Վախճանն հասած է բուռն	59	12.8.8.8.4
Վառ փայլում է Աստ՛ծոյ .	71	8.7(8)
Վէր ամէ քեզ հետ Յիսուս	172	8.7.8.7/3.3.7
Վերն հօր տան մէջ մեր .	48	8.6(4)
Վէմդ զարաւոր կողահերձ .	82	7(6)
Վէմ յաւիտենական . . .	199	6.6.8.6(8)
Վիշտ և ցաւով պատած հոգի	177	8.7(8)
Տանք գոհութիւն վեհ Աստ·	14	8(4)
Տաք մեզ քաղցրութեամբ	142	10.10.10.7/4.10.4.7
Տես Աստուծոյ Գառն . .	257	6.4.6.4/6.6.6.4
Տես խըփում է սաստիկ .	308	8.5.8.5/6.5.8.8.8.8
Տէր Աստուած սէր է . .	40	10.9/6.5.5.4
Տէ՛ր, գովում ենք Քո սուրբ	118	8.7(8)
Տէ՛ր, Դու ես իմ հոգածու ·	182	7.7.7.7/7.7.8.5
Տէ՛ր, Դու ինձ ձեռքովդ .	297	7.7.7.7/11.7.7
Տէ՛ր, Երբ կըգայ այն օրհն.	29	7.6(8)
Տէ՛ր, ժողովուել ենք Քո .	98	10(6)
Տէ՛ր, լսում ենք Քո ձայն .	274	6.6.8.6/5.5.7.6
Տէ՛ր Յիսուսն ահա գալիս է	171	8.7(8)
Տէր Յիսուս անցում է ջուր	179	11.11.11.11/9.9.9.11
Տէր Յիսուս յաղթում է միշտ	158	7.6.7.6/7.7.7.6
Տէր Յիսուսի խաչին տակ .	80	7.6 8 6.8.6 8.6
Տէր Յիսուսին երբ նայում ·	106	8.7(4)
Տէր Յիսուսին կ՛ուզենք տես.	245	11(4)
Տէ՛ր, ո՛վ կարէ պարտքը .	149	8(4)
Տէր, վասն իմ գոհուեցար	260	6.4.6.4/6.6.6.4
Տէրը դուրս էր գարնում .	267	7(6)
Տէրն ձեզ հետ մինչև կրկին	122	9.8.8 9/6.7.6.9
Տիրոջ հետ ամեն տեղ . .	209	6.5(12)
Տիրոջ հետ յաւիտեան . .	115	6.6.8.6(8)
Տուէ՛ք Տիրոջը, ո՛վ սուրբեր	61	10(4)

	ԵՐԳ	Չ ա փ
Ճանհնք խօսքն Աստուծոյ .	298	12.11.12.11/10.11
Փառաւորեալ Աստուած որդի	85	8(4)
Փառք, զովեստ, պատիւ, .	5	7(6)
Փառք Քիսուսին փառք Քիս.	37,59	12 8 8.8.4
Փառք Քիսուսին, փառք, փառ.	208	8.8.8.8/8.8.6.6.8
Փառք, օրհնութիւն Քեզ, ո՛վ	27	8 7(6)
Փորձանքների մէջ անհամար	295	8.8 8.6/6 6.8.6
Փրկիչն այս սեղան կազմեց	16	8(4)
Փրկչին անզոյգ յիշատակին	318	8(4)
Փրկիչն արաւ ողորմութիւն	90	8.7(8)
Փրկչին գերկն է, ո՛հ, ի՛նչ	205	9.9.9.6(8)
Փրկչին եկէ՛ք, ո՛հ, մի՛ ուշ.	201	8.4.8.4.8 8 8 4
Փրկչին սիրով ամենն հար.	199	8(6)
Քաղցրիկ Քիսո՛ւս, Դու ասել	235	8.7(4)
Քան երկրածին ցեղը բոլոր	2	8(6)
Քայլ եղէ՛ք, ո՛վ եղբայրներս	141	8.5.8.5(8)
Քեզ գալիս եմ, Փրկիչ Քիս.	79	8(4)
Քեզ գովում ենք, Տէր բար·	103	8(4)
Քեզ համար, ո՛վ սգաւոր .	243	7.5.7.5.7.7.7.5
Քեզ Քիսուս ընդունում է .	250	7(8)
Քեզ պաշտում ենք, օրհնեալ	43	11.11.11.11/9.9.9.11
Քեզ փառք, ո՛վ Աստուած, որ	31	11.12/8.6.8.5
Քո կեանքը, Տէ՛ր, տուիր .	83	6.6.6.6.8.6
Քո սէրը, ո՛վ Քիսուս, պիտ՝	99	11(4)
Քո սէրդ մի՞թէ՞, Քիսուս, .	91	8 6(8)
Քրիստոնեայ քո հայրենիքը	145	8.7.8.7/7.5.8.7.8.5
Օ՜հ, ինձ համար, օ՜հ, ինձ .	296	8.9.10.10
Օ՜ն, երգենք օրհներգ Նրան	134	10(4)
Օ՜ն, ի՛ գործ, օ՜ն, ի՛ գործ,	136	12.12.12.12/12.14
Օ՜ն, պաշտենք Արքայն ։ .	33	5(8)
Օ՜ն, Քրիստոնեայ վինուրք	200	6.5(12)
Օրհնեա՛լ երաշխիք, իմս է	116	9.10.9.9.9.9
Օրհնութիւն Քեզ բարձուն.	305	Օրհներգ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL039567